

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Գալոյան Միքայել Ռոբերտի

ԳՆԱՃԻ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ (ՀՀ նյութերով)

Ատենախոսություն

Ը.00.03 «Ֆինանսեր, հաշվապահական հաշվառում»

մասնագիտությամբ

տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի
հայցման համար

Գիտական ղեկավար՝ Յու. Մ. Սուվարյան

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Երևան 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ԳԼՈՒԽ 1. ԳՆԱՃԸ ԵՎ ԴՐԱ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ.....	8
1.1. Գնաճը և դրա գնահատման մոտեցումները.....	8
1.2. Գնաճի տեսակները, տնտեսական և ֆինանսական առանձնահատկությունները.....	25
1.3. Գնաճի ազդեցությունը ֆինանսական շուկաների և սոցիալ-տնտեսական գործոնների վրա	30
ԳԼՈՒԽ 2. ԳՆԱՃԻ ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ.....	38
2.1. Դրամավարկային քաղաքականությունը, որպես գնաճի կարգավորման գործիք.....	38
2.2. ՀՀ ԿԲ գնաճի նպատակադրման քաղաքականության արդյունավետությունը և սեզոնային գնաճի դինամիկայի գնահատումը.....	55
2.3. Գնաճի մակարդակի և արտարժույթի փոխարժեքների փոխկապակցվածության վերլուծությունը.....	69
ԳԼՈՒԽ 3. ԳՆԱՃԻ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ.....	78
3.1. Կենտրոնական բանկի գործունեության SWOT վերլուծությունն ու դրա արդյունքները.....	78
3.2. Գնաճի ներքին և արտաքին ռիսկերը և ֆինանսական կարգավորման հեռանկարները.....	87
3.3. Գնաճի մակրոտնտեսական կարգավորման արդյունավետության գնահատումը և դրա բարելավման ուղիները ՀՀ-ում	97
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	108
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	113

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Շուկայական տնտեսության սոցիալական և տնտեսական հարաբերությունների զարգացման արդի փուլի կարևորագույն գերակայություններից է գնաճի արդյունավետ կարգավորման ապահովումը, որի իրականացման գործում մեծ դեր ունի հիմնավորված դրամավարկային քաղաքականության վարումը: Կենտրոնական բանկը դրամավարկային քաղաքականություն մշակելիս ներկայացնում է հաջորդական ռազմավարական քայլեր, որոնք ենթադրում են հստակ և երկարաժամկետ կառավարում: Նմանատիպ ռազմավարությունը, սովորաբար, ծրագրերի ամբողջություն է, որը պայմանականորեն կարելի է բաժանել ըստ գործառնական, միջանկյալ և հիմնական կառավարման, ինչպես նաև ամեն մի մակրոտնտեսական իրավիճակին բնորոշ՝ առաջնային և երկրորդական նպատակների փուլերի: Վերջիններս իրագործվում են դրամավարկային կարգավորման կառուցակարգի և գործիքների միջոցով:

ՀՀ կենտրոնական բանկի հիմնական նպատակը գների կայունության ապահովումն է, որի ոչ բարենպաստ ընթացքի պարագայում կարող են առաջանալ մի շարք՝ ինչպես սոցիալական, այնպես էլ տնտեսական բնույթի խնդիրներ: Ընդ որում, գների կայունության ապահովմամբ Հայաստանի Հանրապետությունում հնարավոր է ոչ միայն խթանել, այլև զսպել տնտեսական աճը: Հարկ է նշել, որ ՀՀ կենտրոնական բանկն իր գործառույթների շրջանակներում կարողանում է զսպել գների աճը հանրապետությունում, սակայն ի զորու չէ լիարժեքորեն կանխատեսելու և վերացնելու բոլոր այն ռիսկերը, որոնք կապված են միջազգային շուկաների ցնցումների հետ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ-ում գների մակարդակը մեծապես կախված է նաև փոխարժեքի տատանումներից, գերակա խնդիրներ են գնաճի ճիշտ գնահատումն ու փոխարժեքի տատանումների կանխատեսումը: Այս քայլերի իրականացմամբ է միայն հնարավոր նվազագույնի հասցնել վերջիններիս ազդեցությունը ֆինանսական շուկայի վրա: Գնաճի տեմպի կրճատմանն է միտված

նաև հարկային տարբերակված քաղաքականության վարումը: Վերոնշյալ հիմնախնդիրներն ունեն գիտական լուրջ հետազոտման և գնահատման կարիք, ինչն էլ պայմանավորում է ատենախոսության թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է Հայաստանի Հանրապետությունում կենտրոնական բանկի գործառույթների, հարկաբյուջետային քաղաքականության, ինչպես նաև տնտեսական զարգացումների ուսումնասիրությամբ և վերլուծությամբ գնահատել գնաճի կարգավորման արդյունավետությունը ՀՀ-ում, վեր հանել նշված գործընթացի վրա ազդող գործոնները, հասարակության տնտեսական ակտիվության վրա գնաճի ազդեցության չափի հաշվարկման և գնահատման կարգն ու մեթոդները՝ ըստ այդմ ներկայացնելով համապատասխան տեսամեթոդաբանական և գործնական առաջարկություններ:

Հետազոտության նպատակի իրականացման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել գնաճի էությունը և ֆինանսական կարգավորման հիմքերը,
- կատարել ՀՀ-ում գնաճի դինամիկայի և տնտեսության վրա ազդող ֆինանսական գործոնների վերլուծություն,
- դիտարկել գնաճի մակարդակի և արտաբյուջեի փոխարժեքների փոխկապվածությունը,
- վերլուծել կենտրոնական բանկի կողմից գնաճի նպատակադրման քաղաքականության և սահմանաչափերի կիրառման նպատակահարմարությունը, ինչպես նաև ներկայացնել գնաճի նաակադրման քաղաքականության առանձնահատկությունները սեզոնային գնաճի կարգավորման գործում,
- կատարել կենտրոնական բանկի գործունեության SWOT վերլուծություն,
- բացահայտել գնաճի ներքին և արտաքին դիսկերի ազդեցությունը հարկաբյուջետային քաղաքականության վրա,
- ուսումնասիրել դրամավարկային քաղաքականությունն ու դրա գործիքների ազդեցությունը տնտեսական և ֆինանսական շուկաների վրա,

- գնահատել գնաճի մակրոտնտեսական կարգավորման արդյունավետությունը և առաջարկել դրա բարելավման ուղիներ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունն է՝ գնաճի կարգավորման արդյունավետության գնահատման տեսանկյունից:

Հետազոտության առարկան գնաճի ֆինանսական և տնտեսական կարգավորման հիմնախնդիրներն են, ինչպես նաև դրանց լուծման արդյունավետ ուղղությունները:

Ատենախոսության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը: Ատենախոսության տեսական հիմքն են մակրոտնտեսագիտության, գնաճի, դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականության վերաբերյալ տեղական և արտասահմանյան հեղինակների հետազոտությունները, հրապարակումներն ու գիտավերլուծական նյութերը: Վերլուծության տեղեկատվական աղբյուր են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հրատարակումները, ՀՀ ԿԲ-ի կողմից հրատարակվող՝ տարեկան, եռամսյակային և ամսական հաշվետվությունները, միջազգային կազմակերպությունների, խորհրդատվական և տեղեկատվական ընկերությունների տեղեկագրերը, փորձագիտական և վերլուծական նյութերը, ինչպես նաև ուսումնասիրության հիմնախնդրին վերաբերող՝ ՀՀ-ում շրջանառվող մի շարք օրենսդրական և նորմատիվային ակտեր, էլեկտրոնային տեղեկատվական ռեսուրսներ:

Հետազոտության գիտական նորույթը և արդյունքները: Ատենախոսության գիտական արդյունքները տեսական, մեթոդական և կիրառական ուղղվածության են, որոնց գիտական նորույթը հետևյալն է.

- ԱՄՆ դոլարի ու ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքների և գնաճի փոխկապվածության վերլուծությամբ բացահայտվել է փոխարժեքների ազդեցությունը գնաճի մակարդակի վրա՝ միաժամանակ առաջադրելով կարգավորման, կանխատեսման և զսպման հնարավորինս ճշգրիտ մոտեցումներ:
- ՀՀ ԿԲ գործունեության SWOT վերլուծության արդյունքում, գնահատելով ուժեղ և թույլ կողմերը, բացահայտվել և որպես ՀՀ ԿԲ թույլ կողմ է ներկայացվել արտարժույթի փոխարժեքի տատանումների և դրանց ոչ

լիարժեք ու ճշգրիտ կանխատեսման հնարավորությունները, ինչը բացասաբար է ազդում գների մակարդակի և գնաճի կարգավորման արդյունավետության վրա:

- Վերլուծվել և գնահատվել է ԿԲ-ի կողմից գնաճի նպատակադրման քաղաքականության անցման և սահմանաչափերի կիրառման նպատակահարմարությունը, ինչպես նաև բացահայտվել և ներկայացվել են համապատասխան քաղաքականության առանձնահատկությունները սեզոնային գնաճի կարգավորման գործում:
- ՀՀ-ում գործող հարկային քաղաքականության, մասնավորապես՝ ավելացված արժեքի և շրջանառության հարկեր վճարողների հարկման տարբերությունների վերլուծությամբ բացահայտվել է տոկոսադրույքների ազդեցությունը գնաճի մակարդակի վրա, հիմնավորվել հարկման տարբեր համակարգերի դերը՝ որպես տնտեսության մեջ սղաճի խթանման ներքին գործոններ:
- Մշակվել և ներկայացվել են գնաճի կարգավորման քանակական և որակական գնահատման մեթոդական սկզբունքներ: Գնահատման նպատակով հետազոտվել է ՀՀ պետական բյուջեով սահմանված նվազագույն և առավելագույն շեմերից գնաճի մակարդակի շեղումը ըստ տարիների: Ցուցանիշների հետազոտությամբ բացահայտվել է շեղման չափի նվազման միտում՝ փաստելով գնաճի կարգավորման բարելավում:

Հետազոտության գործնական նշանակությունը և արդյունքների փորձարկումը:

Ատենախոսությունում տեղ գտած՝ գնաճի մակրոտնտեսական կարգավորման արդյունավետության մակարդակի բարելավմանը միտված առաջարկությունները կարող են կիրառվել Հայաստանի Հանրապետությունում գնաճի կարգավորման և զսպման, տնտեսական կայունության ապահովման, տնտեսությանը սպառնացող արտաքին ռիսկերի ազդեցության նվազեցման, ինչպես նաև փոքր, միջին և խոշոր կազմակերպությունների միջև փոխգործակցության ապահովման նպատակներով՝ բացառելով հարկային քաղաքականության խոչընդոտները:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:
Հետազոտության դրույթները քննարկվել են ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում: Ատենախոսության հիմնական արդյունքներն ու բովանդակությունն արտացոլված են հեղինակի հրապարակած 4 (չորս) գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը, ծավալը և հրապարակումները:
Ատենախոսության տեքստը շարադրված է 122 համակարգչային էջում, բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1. ԳՆԱՃԸ ԵՎ ԴՐԱ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1. Գնաճը և դրա գնահատման մոտեցումները

Որպես բնութագրական երևույթ՝ գնաճը գոյություն ունի երկար ժամանակ, և համարվում է, որ այն առաջացել է փողի ստեղծման առաջին շրջանում: Գնաճն անտեսանելի էր, քանի դեռ թղթադրամը սերտորեն կապված էր և ազատորեն ու անսահմանափակ կերպով փոխանակվում էր ոսկու հետ, և ընդհակառակը՝ երբ ոսկին փոխանակվում էր թղթադրամով: Հետևաբար՝ տվյալ ժամանակաշրջանում «փողի ավելցուկ» հասկացությունն ուներ հարաբերական իմաստ, քանի որ ոսկին, իբրև «ավելցուկ», չէր կարող հանդես գալ: Ակնհայտ է՝ եթե ոսկին ավելին է, քան շրջանառության մեջ առկա պահանջը, ապա դա դառնում է գանձ: Ինչ վերաբերում է թղթադրամին, ապա դրա գերիշխանության օրոք գնաճը դառնում է տնտեսության մշտական ուղեկիցը:¹

Հակիրճ կերպով փորձենք ներկայացնել «գնաճ» հասկացության ձևավորման պատմությունը: Այսպես՝ «ինֆլացիա» եզրույթն առաջացել է լատիներեն «inflatio»՝ «ուռչել» բառից² և առաջին անգամ կիրառվել է Հյուսիսային Ամերիկայում՝ 1861-1865 թթ. քաղաքացիական պատերազմի ռազմական ծախսերի ֆինանսավորմանն անհրաժեշտ դրամական զանգվածի ուռճացումը բնութագրելու նպատակով: Շուտով այդ հասկացությունը սկսում է օգտագործվել Մեծ Բրիտանիայում և Ֆրանսիայում՝ հիմնականում ֆինանսական, ինչպես նաև բնակչության շրջանակներում: Տնտեսագիտական գրականության մեջ դա շրջանառվել է 20-րդ դարում³:

Ըստ Հ. Մակֆարլենի և Պ. Մորտիմեր-Լինի 1994 թ. հրատարակած «Գնաճը 300 տարվա ընթացքում» աշխատության՝ դա բացատրվում է որպես մի երևույթ, որի դեպքում մեր ունեցած փողն օժտված չէ նույն գնողունակությամբ, ինչ այն ժամանակ,

¹В. Кизилов, Гр. Сапов. Инфляция и её последствия / под ред. Е. Михайловской. — М.: Центр «Панорама», 2006. — 146 с.

² Семёнов В. П. Инфляция: метрика причин и следствий. — 1-е изд. — М.: Российская экономическая академия им. Г. В. Плеханова, 2005. — 383 с.

³ Տնտեսագիտության տեսություն, ուսումնական ձեռնարկ, Գ.Ե. Կիրակոսյանի, Ի.Ե. Խլիլյանի խմբագրությամբ, Երևան, «Տնտեսագետ», 2009, էջ 78:

երբ մենք դա չունենինք: Համաձայն այս մոտեցման՝ փողի միևնույն քանակությունն այսօր մեզ թույլ է տալիս ձեռք բերել ավելի քիչ ապրանքներ և ծառայություններ, քան անցյալում էր, որն էլ հանգեցնում է կյանքի արժեքի թանկացմանը: Հարկ է նշել, որ այս ձևակերպումը ներկայացնում է գնաճի դրսևորումները՝ շրջանցելով դրա առաջացման պատճառները և հետևանքները:

Ըստ Մարկ Բլոգի՝ կյանքի արժեքն այն դրամական գումարն է, որն անհրաժեշտ է վճարել մարդկանց կենսունակության պահպանմանն անհրաժեշտ բարիքների ձեռքբերման նպատակով⁴: Խնդիրն այն է, որ գնաճին բնորոշ է երկարատև շուկայական անհավասարակշռությունը, բայց մյուս կողմից էլ՝ շուկայի հավասարակշռության ամեն մի խախտում չէ, որ արտահայտվում է գների բարձրացմամբ և վկայում գնաճի մասին: Բանն այն է, որ գների աճը կարող է պայմանավորված լինել մի շարք գործոններով, մասնավորապես՝ արտադրության և շրջանառության ծախսերի օբյեկտիվ աճով, թողարկվող արտադրանքի տեխնիկական և որակական բնութագրիչներով⁵: Նման գործոնների ազդեցությամբ գների բարձրացումը չունի գնաճային բնույթ, քանի որ ուղեկցվում է շուկա մտնող ապրանքների և ծառայությունների զանգվածի արժեքի և արժեքայնության մեծացմամբ, և այստեղ չի խախտվում հավասարակշռությունն ապրանքային և դրամական զանգվածների միջև:

Հատկանշական է, որ գնաճին վերաբերող սահմանումների բազմազանությունը բխում է դրանց ոչ ամբողջական, ավելի շուտ թերի լինելու հանգամանքից: Այս կապակցությամբ գնաճի տեսաբան Հ. Ֆրիշը նշում է, որ տվյալ երևույթի հետ կապված խնդիրներն ի հայտ են գալիս ոչ թե դրա բացատրության, այլ հենց սահմանման ընթացքում⁶: Նա գների ընդհանուր մակարդակի մեկանգամյա կամ կարճաժամկետ բարձրացումը չի համարում գնաճ, եթե տվյալ երևույթն անդառնալի չէ: Հետևաբար՝ կարելի է ասել, որ գների տատանումների հետևանքով առաջացող՝ տարբեր

⁴ M. Blaug, Classical Economics, The New Palgrave Dictionary of Economics, 1987, pp 120, v.1; "British Classical Economics", The New Palgrave Dictionary of Economics, 2nd Edition, 2008; pp. 79, Samuel Hollander, Classical Economics, Oxford; Blackwell, 1987; pp. 49, Derek Iggy; Steven M. Sheffrin, Economics: Principles in action, Upper Saddle River, New Jersey 07458, 2003, pp. 77.

⁵ The Fortune Encyclopedia of Economics, edited by Handerson D., A Time Warner Company, 1993, pp. 235.

⁶ Frisch H., Theories of Inflation, Cambridge Surveys of Economic Literature, Cambridge University Press, Cambridge, 1990, pp.189.

ապրանքների և ծառայությունների արժեքների բարձրացումը չի կարելի համարել գնաճ, եթե դա կրում է միայն կարճաժամկետ բնույթ՝ կախված այս կամ այն հանգամանքից: Օրինակ՝ եթե արտադրվող ապրանքի ինքնարժեքը, պայմանավորված հումքի գնման գնով կամ որոշակի ֆորս-մաժորային իրավիճակով, տատանվում է, ապա դա գնաճ չէ, քանի որ այս դեպքում կարճաժամկետ բնույթ է կրում: Միաժամանակ, գնաճ կարելի է համարել այն ապրանքների գների բարձրացումը, որոնք «սեզոնային» բնույթի են⁷: Այսպես՝ ՀՀ-ում ընդգծված է գնաճի սեզոնային բնույթը, որովհետև գարնան և ամռան ամիսներին սպառողական ապրանքների գները կայունանում են, հաճախ նաև նվազում՝ պայմանավորված շուկայում մթերքների առաջարկի աճով: Էական նշանակություն ունի նաև այն հանգամանքը, որ այդ ամիսներին նվազում է բնակչության պահանջարկն էներգակիրների նկատմամբ:

Դ. Հանդերսոնը տնտեսագիտական հանրահայտ «Ֆորտունե» (“Fortune”) ամսագրում գնաճի երևույթը սահմանում է որպես արժույթի գնողունակության նվազում, ինչը, սովորաբար, արտահայտվում է ապրանքների և ծառայությունների գների ընդհանուր աճով⁸:

Գնաճի մակարդակը կախված է երկրի տնտեսական կայունության և ազատության աստիճանից: Այս նկատառումից ելնելով՝ անհրաժեշտ է վերլուծել, թե ինչ գործոններով է պայմանավորված յուրաքանչյուր երկրի տնտեսական ազատությունը և, մասնավորապես, ինչ մակարդակի վրա է դա գտնվում ՀՀ-ում: «Հերիթիջ» հիմնադրամը, «Ուոլ սթրիթ» օրաթերթի հետ համատեղ, տարբեր պաշտոնական աղբյուրների տվյալների հիման վրա գնահատել և 2016 թ. փետրվարի 1-ին հրապարակել է 178 երկրների տնտեսական ազատության ինդեքսները (համաթվերը) նույն՝ 2016 թվականի համար⁹: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տնտեսական ազատության ինդեքսը գնահատվում է ըստ 10 գործոնների՝ սեփականության իրավունքի պաշտպանություն, կոռուպցիայից ազատություն, հարկաբյուջետային ազատություն, կառավարության ծախսումներ, գործարարության, աշխատանքի,

⁷ Л, Н. Красавина, Инфляция и экономический рост: теория и практика, редакция: “Финансы”, 2007, Москва, с.142.

⁸ The Fortune Encyclopedia of Economics, edited by Handerson D., A Time Warner Company, 1993, pp. 211.

⁹ Promoting Economic Opportunity & Prosperity: The 2016 Index of Economic Freedom/Heritage Foundation & The Wall Street Journal, 2016. <http://www.heritage.org>

դրամավարկային, առևտրի, ներդրումների և ֆինանսական ազատություն, կիրառելով 0-100 միավորային համակարգը, հետևաբար՝ բարձր գնահատականը վկայում է տնտեսական ազատության ավելի բարձր աստիճանի մասին: Ընդ որում, «Հերիթիջ» հիմնադրամի փորձագետները հիմք են ընդունել 2014 թ. հուլիսի 1-ից մինչև 2015 թ. հունիսի 30-ն ընկած ժամանակաշրջանի տնտեսական ցուցանիշները՝ դիտարկվող երկրները, տնտեսական ազատության ինդեքսներին համապատասխան, դասակարգելով ըստ հինգ խոշոր կատեգորիաների: Այսպես՝ 80% և ավելի ինդեքս ունեցող երկրները համարվում են տնտեսապես «ազատ», 70.0-79.9%-ը՝ «հիմնականում ազատ», 60.0-69.9%-ը՝ «չափավոր ազատ», 50.0-59.9%-ը՝ «հիմնականում ոչ ազատ», 50%-ից ցածրը՝ «ճնշված»:

Նկատելի է, որ, ըստ «Տնտեսական ազատության ինդեքս-2016» զեկույցի, աշխարհի 178 երկրների շարքում Հայաստանի դիրքը վատացել է: Ներկայումս մեր երկիրը գրավում է 54-րդ տեղը՝ նախորդ տարվա 52-րդի փոխարեն: Թեև, հարկ է նշել, որ Հայաստանի տնտեսական ազատության գնահատականը (67.0 միավոր) բարձր է ինչպես համաաշխարհային (60.7 միավոր), այնպես էլ տարածաշրջանային միջինից (66.9 միավոր):

Ըստ Քեյնսի՝ գնաճն ուղեկցվում է գնաճային սպասումներով, ինչն իր արտահայտությունն է գտնում ինչպես գնորդի, այնպես էլ վաճառողի և՛ վարքագծում, և՛ հոգեբանության մեջ¹⁰: Սա նշանակում է, որ գների հերթական աճը գնորդին ստիպում է ավելացնել ընթացիկ գնումների ծավալը, որովհետև նա նախընտրում է տվյալ ապրանքը ձեռք բերել այսօր՝ ավելի ցածր, քան որոշ ժամանակ անց՝ բարձր գնով, իսկ վաճառողին՝ հնարավորին չափ ուշ իրացնել ապրանքները, քանի որ վաղը, հնարավոր է, դրանցից ակնկալվող շահույթն ավելի մեծ լինի, քան այսօր է: Արդյունքում այս հակադիր գործողություններն առաջացնում են պահանջարկի խոնավային աճ և առաջարկի արհեստական նվազեցում, հակադրում են պահանջարկն առաջարկին և բացասաբար անդրադառնում տնտեսական

¹⁰ J. M. Keynes, The General Theory of Employment, Interest and Money; John Maynard Keynes, Harcourt, Brace and Howe, The Economic Consequences of The Peace, 1920, <http://www.gutenberg.org/ebooks/10612>; John Maynard Keynes, A Treatise on Probability, pp. 79.

գործընթացների վրա: Հաճախ գնաճային սպասումների սանձումը զուտ տնտեսական հիմնախնդիրների լուծումից ավելի բարդ է լինում:

ՀՀ ԿԲ-ն գնաճի նպատակադրման ռազմավարության հիմնավորման մեջ նշում է, որ գնաճի ծրագրային մակարդակի նախանշման համար դրամավարկային քաղաքականության ծրագրում¹¹ հաշվի է առնվում դրա վրա տնտեսության տարբեր հատվածներից բխող առաջարկի գործոնների ազդեցությունը: Դրանք արտահայտվում են տարվա ընթացքում արտաքին և իրական հատվածներում կատարված փոփոխությունների՝ գնաճի մակարդակի վրա ունեցած ազդեցությամբ: Մասնավորապես՝ դիտարկվում են իրական աշխատավարձի և արտադրողականության, ՀՆԱ-ում զուտ անուղղակի հարկերի տեսակարար կշռի, ներմուծման (դրամական արտահայտությամբ) և պետության կողմից կարգավորվող գների փոփոխությունները:¹²

Այսպիսով՝ փողի առաջարկի ու պահանջարկի հարաբերակցության խախտվածությունը վկայում է, որ շուկայում դրա առաջարկը գերազանցում է պահանջարկը: Դեֆիցիտային (պակասություն) տնտեսությամբ երկրներում գնաճն արտահայտվում է այն իրողությամբ, որ փողի առաջարկն անհամեմատ ավելի մեծ է լինում, քան ապրանքներինն ու ծառայություններինը, հետևաբար՝ մարդիկ, անգամ շատ փող ունենալու դեպքում, չեն կարողանում ամբողջովին բավարարել իրենց պահանջմունքները և ստիպված են լինում ավելի շատ գումար վճարել մեկ միավոր ապրանք ձեռք բերելու համար: Թե՛ սովորական, թե՛ դեֆիցիտային տնտեսությամբ երկրներում թղթադրամի զանգվածը գերազանցում է դրա շրջանառությանն անհրաժեշտ քանակությունը, սակայն տարբերությունն այն է, որ դեֆիցիտային տնտեսությունում ավելի քիչ ապրանքներ են արտադրվում, որի հետևանքով փողի մի մասն ապրանքային զանգվածով չի ապահովվում, և շրջանառության մեջ է հայտնվում ավելի շատ փող, որն անվանվում է «ավելցուկային»: Շուկայական տնտեսությունը բացառում է դեֆիցիտը, և փողի զանգվածի ավելցուկը բացարձակ բնույթ է կրում:

¹¹ ՀՀ կենտրոնական բանկի կողմից գնաճի նպատակադրման ռազմավարության ընդունման հիմնավորում. 2006, էջ 9, www.cba.am ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջ:

¹² Մակրոտնտեսական վերլուծություն, մոդելավորում և կանխատեսում, հետազոտական խմբի ղեկավար Ա. Ա. Թավադյան, խմբի անդամներ՝ Հ. Ս. Հովհաննիսյան, Տ. Հ. Հակոբյան, Վ. Թ. Նալչաջյան, Ա. Ա. Թևիկյան, Ն. Հ. Ենգիբարյան, «Տնտեսագետ», Երևան, 2014, էջ 15:

Դեֆիցիտային տնտեսության մեջ գնաճի երևույթը քողարկված ձևով է արտահայտվում, որովհետև գների բարձրացումը նույնպես քողարկված բնույթ է կրում:¹³

Ինչպես արդեն նշվեց, գնաճը գների ընդհանուր մակարդակի բարձրացումն է, և պետության հիմնական խնդիրներից մեկը գների կայունության ապահովումն է: Սակայն, անհրաժեշտ է նշել, որ դրանք հնարավոր չէ պահպանել զրոյական մակարդակի վրա, հետևաբար՝ գների կայունությունը գնաճի չափավոր մակարդակի պահպանումն է: Հատանշական է, որ Հայաստանի Հանրապետությունում տվյալ խնդրի լուծումը վերապահված է Կենտրոնական բանկին:¹⁴

Գնաճի տեմպի հաշվարկումը և դրա դինամիկայի կանխատեսումը կարևոր նշանակություն ունեն, քանի որ հնարավորություն են տալիս գնահատելու այն վնասի չափը, որ առաջանում է տվյալ երևույթի հետևանքով, ինչպես նաև նպաստում են հակագնաճային միջոցառումների իրականացմանը: Գոյություն ունեն գնաճի հաշվարկման տարբեր ցուցանիշներ: Առավել ճանաչված են Ֆիշերի, Լասպեյրեսի գների, Պաաշեի գների, սպառողական գների¹⁵, արտադրողների կամ մեծածախ գների (ՄԳԻ), ներմուծման և արտահանման գների (ՆԳԻ և ԱԳԻ), համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) գների ինդեքսները կամ ՀՆԱ դեֆլատորը, որը ՀՆԱ բաղադրատարրերի՝ սպառման, ներդրումների, արտահանման և ներմուծման գների կշռված միջին ցուցանիշն է: Քանի որ գնաճն անմիջականորեն արտահայտվում է ապրանքների գների բարձրացմամբ, ուստի դրա գնահատման հիմնական ցուցանիշներն են սպառողական գների ինդեքսը և դրա ենթաինդեքսները որոշակի ապրանքախմբերի (պարենային, ոչ պարենային, ծառայություններ և այլն) համար:

Այստեղ հարկ է անդրադառնալ սպառողական զամբյուղին, որն ընդգրկում է մարդու բնականոն կենսագործունեությունը բավարարող առաջին անհրաժեշտության ապրանքները և ծառայությունները, որոնք հաշվարկվում են մեկ բնակչի համար և

¹³ Семенихина В. А., Крючков С. А., Экономическая теория: макроэкономика: Учебное пособие. — Новосибирск: НГАСУ, 2003. 87 с.

¹⁴ «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 4, օրենք ՀՕ 69, 1996:

¹⁵ Курс экономической теории, под общей редакцией М.Н. Чепурина, Е.А. Киселевой, Киров, «АСА», 2004. стр.554.

արտացոլում են նրա կենսաբանական պահանջմունքները:¹⁶ Եթե սպառողական զամբյուղի մեջ մտնող ապրանքների և ծառայությունների տարեկան սպառման ծավալը հաշվարկվում է ինչպես տվյալ, այնպես էլ նախորդ տարվա գներով, ապա դրանց հարաբերությունը ցույց է տալիս գների փոփոխությունը մեկ տարում (Լայսպեյրեսի բանաձև): Այդ փոփոխությունը (ինդեքսը) հաշվարկելիս ընդունվում է սպառողական զամբյուղի որոշակի կայուն կազմ:

Այսպես՝ եթե բազային տարում սպառողական զամբյուղի ապրանքների քանակը նշանակենք q_0 -ով, դրանց ընթացիկ գները՝ P_1 -ով, իսկ բազային գները՝ P_0 -ով, ապա սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) կարելի է հաշվարկել հետևյալ բանաձևով.

$$\text{ՍԳԻ} = \frac{\sum q_0 P_1}{\sum q_0 P_0} \quad 17$$

Ինչպես հայտնի է, ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն ամսական պարբերականությամբ հրապարակում է ՍԳԻ-ն, ինչպես նաև պարենային ու ոչ պարենային ապրանքների, գյուղմթերքների, ծառայությունների, արդյունաբերական արտադրանքի, կապիտալ շինարարության, բեռնափոխադրումների, շինմոնտաժային աշխատանքների ոլորտների գների ենթաինդեքսները:¹⁸ Ընդ որում, Հայաստանի Հանրապետությունում սպառողական գների ինդեքսի հաշվարկը կատարվում է՝ սկսած 1993 թ. հունվարից, իսկ դրա մեթոդաբանությունը մշակվել է Արժույթի միջազգային հիմնադրամի հետ համատեղ և ամբողջությամբ համապատասխանում է միջազգային չափորոշիչներին:

Հայաստանի Հանրապետությունում ՍԳԻ-ն գնաճը բնութագրող միակ ցուցանիշն է, և դրա դասակարգումն իրականացվում է՝ «Ըստ սպառողների նպատակների՝ անհատական սպառման դասակարգչի» (ԱՄՆԾԴ): Ինչ վերաբերում է սպառողական գների ինդեքսի հաշվարկին, ապա դա կատարվում է՝ ըստ 470 անուն ապրանքների և ծառայությունների զամբյուղի միջինացված գնի: Համեմատության համար հարկ է

¹⁶ D.Besanko, R.R.Braeutigam 4rth edition “Microeconoics”, John willy and sons inc, 2010, p. 184.

¹⁷ Մակրոտնտեսական կարգավորում, ուսումնական ձեռնարկ, Հ. Բ. Ղուչյանի խմբագրությամբ, գրախոս.՝ Ա.Հ.Արշակյան, «Տնտեսագետ», Երևան, 2005, էջ 62:

¹⁸ «Գները և գների ինդեքսները ՀՀ-ում», ՀՀ սոցիալ-տնտեսական իրավիճակը, վիճակագրական տեղեկատու, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն: Վիճակագրական ժողովածու, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն: www.armstat.am

նշել, որ ԱՄՆ-ում սպառողական զամբյուղը ներառում է 250 ապրանքատեսակ, և յուրաքանչյուր ապրանքի կամ ծառայության կշիռ հիմնված է տնային տնտեսությունների միջին ծախսերի կառուցվածքի վրա՝ ըստ դրանց կենսամակարդակի ուսումնասիրության արդյունքների ու վերանայվում է 3-5 տարին մեկ անգամ:

ՍԳԻ-ն հաշվարկվում է ինչպես ընդհանուր, այնպես էլ՝ ըստ 3 հիմնական խմբերի.

- պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)
- ոչ պարենային ապրանքներ
- ծառայություններ՝ ըստ որոշակի համամասնության:¹⁹

Հ. Ֆրիշի բնորոշմամբ՝ սպառողից մինչև հումք մատակարարողի շղթայի փուլերի հաջորդաբար դիտարկման պարագայում ակնհայտ է դառնում, որ գների ինդեքսներից ամենատատանողականը հումքինն է, ինչն էլ ազդանշաններ է հաղորդում ՍԳԻ հետագա փոփոխությունների մասին երկու տարրի տարբերությամբ:²⁰ Գիտնականը ՍԳԻ մակարդակը կապում է արտադրվող ապրանքների հումքի գների հետ, արձանագրելով, որ ինչքան բարձր է հումքի գինը, այնքան էլ բարձր է դրանից արտադրվող ապրանքի գինը:

Գնաճը սահմանելով որպես գների ընդհանուր մակարդակի աճ՝ հարկ է պատասխանել նաև այն հարցին, թե ինչպես է հաշվարկվում դա: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս դեպքում հաշվարկման միասնական մոտեցում գոյություն չունի. կիրառվում են ինչպես Լասպեյրեսի, այնպես էլ Պաաշեի գների ինդեքսները:

Այսպես՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը սպառողական գների, բեռնափոխադրումների սակագների և արտաքին առևտրի գների ինդեքսները հաշվարկում է՝ ըստ Լայսպեյրեսի բանաձևի, գյուղմթերքների, կապիտալ շինարարության գների և շինմոնտաժային աշխատանքների ինդեքսը՝ ըստ Պաաշեի

¹⁹ Սպառողական գների ինդեքսը (գները) Հայաստանի Հանրապետությունում, վիճակագրական տեղեկագիր, www.armstat.am

²⁰ Frisch H., Theories of Inflation, Cambridge Surveys of Economic Literature, Cambridge University Press, Cambridge, 1990, pg.9.

ինդեքսի, իսկ արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսը՝ ըստ Ֆիշերի ինդեքսի:²¹

Գների փոփոխության ընդհանրական ցուցանիշ է ՀՆԱ դեֆլատորը, որն արտահայտում է տվյալ երկրի տարածքում որոշակի ժամանակահատվածում (սովորաբար՝ մեկ տարի) արտադրված ապրանքների ու ծառայությունների գների փոփոխությունը, որոնց արժեքն ընդգրկվում է ՀՆԱ կազմում:

Տարբեր տեսակի ապրանքների գների փոփոխությունները հաշվարկելու նպատակով պետք է կիրառել հետևյալ բանաձևը.

$$\text{ՀՆԱ դեֆլատոր} = \frac{\sum P_1 q_1}{\sum P_0 q_1},^{22}$$

որտեղ

q₁-ն ընթացիկ տարում արտադրված ապրանքների քանակն է,

1-ն ընթացիկ տարվա ապրանքների գինն է,

0-ն բազիսային տարվա ապրանքների գինն է:

Համեմատելով ՀՆԱ դեֆլատորը և ՍԳԻ-ն՝ կարելի է ասել, որ այս երկու ինդեքսներն ընդհանուր մակարդակի փոփոխության մասին տալիս են տարբեր տեղեկատվություն: Ընդ որում, դա կատարվում է երեք պատճառով:

Նախ՝ ՀՆԱ դեֆլատորն արտահայտում է տվյալ տարում որոշակի երկրում արտադրված բոլոր ապրանքների և մատուցված ծառայությունների, իսկ ՍԳԻ-ն՝ միայն սպառողների կողմից ձեռք բերված, ըստ որոշակի անվանացանկի ապրանքների և ծառայությունների գների փոփոխությունը: Երկրորդ՝ եթե ՀՆԱ դեֆլատորն արտահայտում է միայն տվյալ երկրում արտադրված ապրանքների և մատուցված ծառայությունների գների փոփոխությունը, ապա ՍԳԻ-ն ընդգրկում է նաև այն ապրանքները, որոնք արտադրվել են արտերկրում, բայց սպառվել են տվյալ երկրում:

²¹ ՀՀ սոցիալ-տնտեսական իրավիճակը, վիճակագրական տեղեկատու, Ազգային վիճակագրական ծառայություն, հունվար-դեկտեմբեր, Գները և գների ինդեքսները ՀՀ-ում, վիճակագրական ժողովածու, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն:

²² Մակրոտնտեսական կարգավորում, ուսումնական ձեռնարկ, Հ. Բ. Ղուշյանի խմբագրությամբ, գրախոս.՝ Ա.Հ.Արշակյան, «Տնտեսագետ», Երևան, 2005, էջ 142:

Երրորդ՝ ՍԳԻ հաշվարկվում է ապրանքների և ծառայությունների անփոփոխ տեսականու համար, իսկ ՀՆԱ դեֆլատորն արտացոլում է տվյալ տարում արտադրված բոլոր ապրանքների և մատուցված ծառայությունների գների փոփոխությունը: Դա նշանակում է, որ ինդեքսների հաշվարկման ժամանակ ապրանքների տեսականին, որը հանդես է գալիս որպես կշիռ, կայուն է ՍԳԻ-ի և փոփոխուն՝ ՀՆԱ դեֆլատորի դեպքում:

Վերոնշյալ երեք հանգամանքները զգալի տարբերություններ են առաջացնում ՍԳԻ և ՀՆԱ դեֆլատորի ցուցանիշների փաստացի մակարդակների միջև²³: Տարբերությունը կարող է լինել մեծ, եթե տվյալ երկրում արտադրվող ապրանքների տեսականին փոփոխվում է, եթե սպառման կառուցվածքում մեծանում է ներմուծվող ապրանքների տեսակարար կշիռը կամ էլ կտրուկ կերպով բարձրանում են արտահանվող ապրանքների գները և այլն: Այս ամենից կարելի է եզրակացնել, որ իրական տնտեսական աճն արտացոլելու համար գների փոփոխությունը նպատակահարմար է գնահատել ՀՆԱ դեֆլատորի, իսկ բնակչության կենսամակարդակի փոփոխությունը՝ ՍԳԻ-ի միջոցով:

Լասպեյրեսի ինդեքսում որպես կշիռներ են կիրառվում անհատական ապրանքատեսակների վրա անվանական ծախսումների բազային ժամանակաշրջանի տվյալները: Այսպես՝

$I(L)on$ - n ժամանակաշրջանի ինդեքսն է՝ համեմատած o բազայինի հետ.

$$I(L)on = \frac{\sum (P_{oj} Q_{oj} * P_{nj} / P_{oj})}{\sum (P_{oj} Q_{oj})} * 100,$$

որտեղ²⁴

P_{oj} – j -ն ապրանքի գինն է o բազային ժամանակաշրջանում,

P_{nj} – j -ն ապրանքի գինն է n հաշվետու ժամանակաշրջանում,

Q_{oj} – j -ն ապրանքի քանակությունն է (k շիռը) բազային ժամանակաշրջանում,

n -ն ապրանքների և ծառայությունների քանակն է,

$j = 1....n$ -ը ապրանքների և ծառայությունների բազմությունն է:

²³ «Բնականոն գնաճի հաշվարկման մեթոդաբանությունը Հայաստանի Հանրապետությունում.

Արտաքսման և ճշգրտման եղանակ», վիճակագրության վարչություն, տնտեսական վիճակագրության զարգացման բաժին, Դիանա Աֆյան, ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջ, 2008, էջ 45:

²⁴ W.J.Baumol, A.S.Blinder, Economics: principles and policy, 11th edition, South-western cengage learning, 2009, p. 513.

Նույնը ներկայացնենք պարզեցված ձևով.

$$I(L)_{on} = \text{SUM } W_{oj} * i_{oj} / 100 ,$$

որտեղ

$$W_{oj} = \frac{P_{oj} Q_{oj}}{\text{SUM}(P_{oj} Q_{oj})} \text{ -ը } j \text{ ապրանքի կշիռը կամ } j \text{ ապրանքի ծախսերի բաժնի}$$

գործակիցն է ընդհանուր ծախսերի ծավալում,

$$i_{oj} = \frac{P_{nj}}{P_{oj}} \text{ -ն՝ } j \text{ ապրանքի գնի հարաբերական ցուցանիշը բազային}$$

ժամանակաշրջանում:

Լասպեյրեսի ինդեքսով են հաշվարկվում նաև արտաքին առևտրի արտահանման և ներմուծման գների, ինչպես նաև ՀՀ-ում բեռնափոխադրումների սակագների ցուցանիշները: Ըստ այս ինդեքսի՝ հաշվարկման համար կիրառվող տեսակարար կշիռները դիտարկվում են որպես հաստատուն մեծություններ, սակայն իրականում ապրանքների հարաբերական գները կարող են տատանվել, ինչն էլ, իր հերթին, կարող է ազդել դրանց սպառման մակարդակի վրա: Ուստի, պետք է ասել, որ Լասպեյրեսի ինդեքսը գնաճի ցուցանիշը ներկայացնում է ոչ ճշգրիտ՝ աղավաղված կերպով:²⁵

Գնաճը կարող է գնահատվել նաև ըստ միջին աշխատավարձի և աշխատանքի արտադրողական աճի տեմպերի հարաբերակցության: Եթե աշխատավարձի աճի տեմպը գերազանցում է աշխատանքի արտադրողականության համապատասխան ցուցանիշը, ապա դա վկայում է գնաճային եկամուտների մասին: Նշված ցուցանիշների նման հատկությունը ցույց է տալիս, որ շրջանառության մեջ փողի զանգվածի մեծացումը աշխատավարձի բարձր տեմպերի հետևանքով գերազանցում է նոր ստեղծված արդյունքի արժեքի տեմպը:²⁶

Գնաճը կարող է գնահատվել նաև՝ հիմք ընդունելով երկրի ապրանքային պաշարների և բնակչության դրամական խնայողությունների համադրությունը: Եթե դրամական խնայողությունները գերազանցում են երկրի ապրանքային պաշարները, ապա այդ իրողությունը նույնպես պարունակում է գնաճի առաջացման նախադրյալներ:

²⁵ «Բնականոն գնաճի հաշվարկման մեթոդաբանությունը Հայաստանի Հանրապետությունում. արտաքսման և ճշգրտման եղանակ», վիճակագրության վարչություն, տնտեսական վիճակագրության զարգացման բաժին, Դիանա Աֆյան, ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջ, 2008, էջ 45:

²⁶ P. Donovan, The truth about inflation, Routledge, London and New York, 2015, p. 113.

Այդուհանդերձ, չի կարելի անտեսել նաև ՍԳԻ ցուցանիշի թերությունները:²⁷

ՍԳԻ-ն, ինչպես վկայում է համաշխարհային փորձը, կիրառվում է հասարակության տարբեր խմբերի գնողունակության ապահովման նպատակով իրականացվող՝ տնտեսության որոշ հատվածներին տրվող սուբսիդիաների ծավալների ճշգրտման, աշխատավարձերի, թոշակների, եկամուտների այլ տեսակների ինդեքսավորման ընթացքում: Դա որակվում է որպես կենսակերպի ինդեքսի վերին սահման, քանի որ հաստատուն կշիռների պարագայում անտեսվում է այն իրողությունը, որ գնորդները, ձգտելով առավելագունացնել (մաքսիմալացնել) իրենց ծախսերի օգտակարությունը, կախված գների տատանումներից, փոխում են սպառման կառուցվածքը: Այսինքն՝ գնի աճը հանգեցնում է ապրանքի նկատմամբ պահանջարկի նվազման և դրան փոխարինող, համեմատաբար ավելի էժան ապրանքի նկատմամբ՝ պահանջարկի մեծացման՝ բարեկեցության հաստատման պայմանով: Փաստորեն, ՍԳԻ-ն հաշվի չի առնում սպառողների կողմից սպառվող ապրանքների փոխարինելիության գործոնի ազդեցությունը, և դրա անտեսման հետևանքով գերազնահատվում է կյանքի արժեքի փոփոխությունը:

Որոշ երկրներում այս խնդրի լուծման նպատակով ճշգրտումներ են կատարվում՝ հաշվարկելով Լայսպեյրեսի ինդեքսի և վերջինիս շղթայական տարբերակի միջև տարբերությունները: Շղթայական ինդեքսի հաշվարկը աշխատատար և բարդ գործընթաց է, քանի որ նախ՝ պետք է կատարվի վերահաշվարկ ապրանքների և ծառայությունների տեսակարար կշիռների շարունակական սպառման կառուցվածքում, այնուհետև ՍԳԻ հաշվարկ՝ ինչպես ըստ հաստատուն, այնպես էլ՝ ըստ փոփոխված տեսակարար կշիռների: Այս երկու ՍԳԻ-ների միջև առկա տարբերությունն էլ փոխարինելիության գործոնի ազդեցության հաշվին գրանցված գերազնահատման չափն է:²⁸

ՍԳԻ-ում հաշվի չեն առնվում ինչպես ապրանքների գների, այնպես էլ դրանց որակական փոփոխությունները, որոնք օգտակարության հիմնական չափանիշներն են:

²⁷ А.М.Лащев, Макроэкономика, Санкт-Петербург, издательский дом “Нева”, 2003, с. 24.

²⁸ «Բնականոն գնաճի հաշվարկման մեթոդաբանությունը Հայաստանի Հանրապետությունում. արտաքսման և ճշգրտման եղանակ», վիճակագրության վարչություն, տնտեսական վիճակագրության զարգացման բաժին, Դիանա Աֆյան, ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջ, 2008, էջ 42:

Օրինակ՝ ավտոմեքենայում հաշվիչի տեղադրման արդյունքում դրա գինն աճում է, ինչը որակվում է որպես գնաճ, այնինչ թանկացել է ոչ թե տվյալ ապրանքը, այլ շուկա է մտել որակապես նոր ապրանք: Միաժամանակ, անտեսվում է ապրանքի օգտակարության մեծացման հանգամանքը, ինչը նույնպես գերազնահատում է կյանքի արժեքի իրական փոփոխությունը: Որոշ երկրներ այս խնդրի լուծման համար կիրառում են ՍԳԻ հաշվարկման հեղոնիստական մոտեցումը, որը ներկայացնում է ապրանքների որակական փոփոխությունների գնահատման համակարգված մոդել, սակայն վերջինս հազվադեպ է հանդիպում պաշտոնական վիճակագրության մեջ:²⁹ Սրա հիմնական պատճառն այն է, որ այս դեպքում որպես հիմք են ծառայում ապրանքների՝ ոչ թե շուկայական, այլ փորձագետների կողմից գնահատված գները, մինչդեռ վիճակագիրների պնդմամբ՝ գնահատականները պետք է հիմնված լինեն սպառողներից, արտադրողներից ստացված տեղեկատվության վրա՝ ապրանքի որակի մասին կատարված համապատասխան հարցումների համաձայն: Թերևս, ՍԳԻ գերազնահատման հիմնավոր պատճառներից մեկն էլ այն է, որ ազգային տնտեսությունները, չափազանց կարևորելով գնաճի ցածր և կայուն մակարդակը տնտեսական աճի ապահովման համար, այնուամենայնիվ, որպես նպատակային ցուցանիշ են ընդունում դրա 0%-ից բարձր լինելը, քանի որ 0%-ն, ամենայն հավանականությամբ, կարող է վկայել դեֆլյացիայի մասին: Միաժամանակ, ամերիկացի տնտեսագետ Ջեյմս Դևինի բնորոշմամբ, որոշ հետազոտողներ, հաշվի առնելով կյանքի որակի փոփոխությունները, կարծում են, որ ՍԳԻ-ն, որպես գնաճի ցուցանիշ, թերազնահատում է կյանքի արժեքի գնային փոփոխությունները: Ընդ որում, այս դեպքում որպես կյանքի որակի փոփոխություն են դիտարկվում, օրինակ, հանցագործությունների աճը, բնապահպանական վատթար վիճակը և այլ իրողություններ, որոնք հաշվի չեն առնվում ՍԳԻ ցուցանիշում, սակայն ներգործում են կյանքի արժեքի բարձրացման վրա:³⁰

Որոշ երկրներում առավել արդյունավետ սոցիալական քաղաքականության իրականացման, եկամուտների ինդեքսավորման, թոշակների, նպաստների չափերի ճշգրտման և, հետևաբար, բևեռացման նվազեցման նպատակով բնակչության տարբեր

²⁹US Department of Labour Bureau of Labour Statistics, <http://stats.bls.gov/cpihome.htm>.

³⁰J.Devine, The Cost of Living and Hidden Inflation, Macroeconomics, McGraw-Hill/Dushkin, 2003, pg.118-221.

խմբերի համար հաշվարկվում են որոշակի ՍԳԻ-ներ: Մասնավորապես՝ Գերմանիայի պետական վիճակագրական ծառայությունը հաշվարկում է չորս տեսակի ինդեքս.

- բոլոր տնային տնտեսությունների համար,
- միջին եկամտով՝ չորս հոգուց բաղկացած ընտանիքների համար,
- բարձր եկամտով՝ պետական ծառայողների չորս հոգուց բաղկացած ընտանիքների համար,
- թոշակառուների և նպաստառուների՝ երկու հոգուց բաղկացած ընտանիքների համար:³¹

Մի շարք երկրներում կենտրոնական բանկերն արդյունավետ դրամավարկային քաղաքականություն մշակելու և իրականացնելու նպատակով իրենց վերլուծություններում և մոդելներում փաստացի փոխարեն կիրառում են բնականոն գնաճի ցուցանիշը:³² Միջազգային փորձում կիրառվում են բնականոն ՍԳԻ հաշվարկման մի շարք մեթոդներ: Դրանցից հատկանշական են ընդհանուր ՍԳԻ-ից որոշ ապրանքատեսակների բացառման մեթոդը, որը համարվում է բնականոն ՍԳԻ հաշվարկման ստանդարտ մոտեցում, և պարզ միջինի, տարբեր աստիճաններով (շեմերով) կրճատված միջինների, պարզ մեդիանայի, կշռված մեդիանայի հաշվարկման մեթոդները՝ որպես կառուցվածքային մոտեցումներ:³³

ՍԳԻ հաշվարկման մեթոդների բազմազանությունը, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է ոչ միայն գոյություն ունեցող սահմանումների բազմազանությամբ, այլև նրանով, թե հաշվարկված բնականոն ՍԳԻ-ներից յուրաքանչյուրն ինչ նպատակ է հետապնդում: Օրինակ՝ առաջին մեթոդի նպատակը հիմնականում մոնետար գործոններով պայմանավորված գնաճի մակարդակի գնահատումն է: Այս դեպքում բնականոն ՍԳԻ-ն հաշվարկվում է սպառողական զամբյուղում բացառվող ապրանքատեսակների տեսակարար կշիռների զրոյացման եղանակով: Մեծ Բրիտանիայում, օրինակ, դա հաշվարկվում է՝ մանրածախ

³¹Frisch H., Theories of Inflation, Cambridge Surveys of Economic Literature, Cambridge University Press, Cambridge, 1990, p.16.

³² «Բնականոն գնաճի հաշվարկման մեթոդաբանությունը Հայաստանի Հանրապետությունում. արտաքսման և ճշգրտման եղանակ», վիճակագրության վարչություն, տնտեսական վիճակագրության զարգացման բաժին, Դիանա Աֆյան ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջ, 2008, էջ 42:

³³Bakshi H., Yates T., To trim or not to Trim, Bank of England, 1999 and Claus I., A Measure of Underlying Inflation in The United States, bank of Canada, WP 20, 2000, p. 69.

գների գնաճից հանելով անշարժ գույքի ձեռքբերման վարկերի տոկոսավճարների, Ֆինլանդիայում՝ նույն այդ տոկոսավճարների, ինչպես նաև անուղղակի հարկերի, կառավարության սուբսիդիաների հաշվին գրանցված գնաճը:³⁴ ՀՀ-ում բնականոն ՍԳԻ ցուցանիշը ներմուծվել է 1996 թ., չի ներառում գնաճի վրա մրգերի և բանջարեղենի (սեզոնային), ինչպես նաև պետության կողմից կարգավորվող գների ազդեցության չափը, և, ի տարբերություն գնաճի մյուս ցուցանիշների, որոնց մասին վերը նշեցինք, հաշվարկվում է ՀՀ ԿԲ-ի կողմից:

Կրճատված միջինների մեթոդի կիրառման նպատակը գնաճի կայուն, հաստատուն, միջինացված ցուցանիշների հաշվարկումն է, որն իրականացվում է հարթեցման, այն է՝ սպառողական գների անհատական ինդեքսների կտրուկ աճերի և կտրուկ նվազումների աստիճանական, շարունակական բացառման եղանակով: Կիրառվում են նաև հարթեցման, այսպես ասած, ավելի առաջադիմական տարբերակներ՝ Կալմանի, Հոդրիք-Պրեսքոտի ֆիլտրերը: Մեդիանայի մեթոդի նպատակը, օրինակ, ինդեքսների ոչ թե միջինացված, այլ հիմնական ցուցանիշների հաշվարկն է, որի դեպքում նույնպես բացառվում են սպառողական գների անհատական ինդեքսների կտրուկ տատանումները: Բնականոն ՍԳԻ-ն հաշվարկվում է նաև «VAR» մոդելների միջոցով³⁵, ինչը, սակայն, լայն կիրառություն չի ստացել, քանի որ տնտեսագիտորեն մեկնաբանված չէ:

Անդրադառնալով բնականոն գնաճի սահմանմանը՝ հարկ է նշել, որ այս դեպքում ևս գոյություն չունի դրա լայնորեն ընդունված ձևակերպում: Առավել հաճախ հանդիպում է՝ «մոնետար գործոններով պայմանավորված գնաճ» բնութագրականը: Էքշտեյնի բնորոշմամբ՝ բնականոն գնաճն «ընդհանուր գնաճի այն մակարդակն է, որը հատուկ է առանց որևէ շոկի, երկարաժամկետ հավասարակշռությամբ տնտեսությանը,

³⁴Cutler Joanne, Core Inflation in the UK, Bank of England External MPC Discussion Paper No 3, March, 2001, pp.2.

³⁵ VAR կամ վեկտոր ավտոռեգրեսիվ մոդելում «ավտոռեգրեսիվ» եզրույթը վերաբերում է հավասարման աջ կողմում գտնվող կախյալ փոփոխականի որոշակի լագով արժեքին՝ որպես անկախ փոփոխական, իսկ «վեկտոր» եզրույթը վկայում է այն մասին, որ գործ ունենք երկու կամ ավելի փոփոխականներով վեկտորի հետ: Ավելի մանրամասն տես՝ S.H. Ying, Economic Growth and Transition: Econometric Analysis of Lim's S-curve Hypothesis, 2010, p. 72.

որտեղ պահանջարկը չեզոք է»³⁶, և դրա ցուցանիշը բաղկացած է երեք բաղադրատարրից.

1. բնականոն գնաճ, որը գրանցվում է երկարաժամկետ հավասարակշռության պայմաններում՝ առանց շուկերի ազդեցության,
2. ամբողջական պահանջարկով պայմանավորված գնաճ,
3. գնաճ՝ շուկերի ազդեցությամբ:

Ըստ Քուեյի և Վահեյի³⁷ սահմանման՝ բնականոն գնաճն ընդհանուրի այն մասն է, որն իրական տնտեսական աճի վրա միջին-երկարաժամկետ ազդեցություն չի թողնում: Վերոնշյալի մեկ այլ մեկնաբանություն կարող է լինել հետևյալը. գնաճի՝ անցողիկ գործոնների ազդեցությամբ ձևավորված մասը չէ, որ իրական տնտեսական աճի վրա երկարաժամկետ ազդեցություն է թողնում: Եվ քանի որ տնտեսական աճի վրա ոչ երկարաժամկետ ազդեցության շուկերը հիմնականում պահանջարկի շուկեր են³⁸, ապա, ըստ Քուեյի և Վահեյի մոտեցման, բնականոնը պահանջարկով պայմանավորված գնաճն է:

Բնականոն գնաճի երրորդ սահմանումը վերաբերվում է «Կենտրոնական բանկերի» տեսակետին, ըստ որի՝ բնականոն գնաճն ընդհանուր գնաճի այն մասն է, որը զերծ է տատանողական և անկայուն բնույթի գործոնների ազդեցությունից:³⁹ Քանի որ պահանջարկի շուկը չի ներառվում այդ «ոչ ցանկալի» գործոնների մեջ, ապա էքշտեյնի (պահանջարկը և բնականոն գնաճը չեզոք են) և այս մոտեցումները տարբերվում են միմյանցից: Իսկ Քուեյի և Վահեյի մոտեցումից դա տարբերվում է նրանով, որ կարծում է, թե գնաճը ձևավորվում է ոչ միայն պահանջարկի շուկերի ազդեցությամբ: Բրայենի և Չեչետիի մեկնաբանությունը բնականոն գնաճի հաշվարկման նպատակահարմարության վերաբերյալ նույնպես կարելի է բնորոշել որպես տվյալ երևույթի սահմանում. «Ամբողջական գնաճի՝ որպես մոնետար երևույթի

³⁶ D. Rutherford, Routledge Dictionary of Economics, Eckstein O., Core Inflation, Englewood Cliffs, London and New York, 2013, p.126.

³⁷ Quah D., Vahey S., Measuring Core Inflation, Economic Journal, No 105, 1995, pg. 130-44.

³⁸ Blanchard O.J., Quah D., The Dynamic Effects of Aggregate Demand and Supply Disturbances, American Economic Review 79(4), 1989, E.J. Kontoghioghes, Optimisation, econometric and financial analysis, Springer, 2007, p. 156.

³⁹ Blinder A., Commentary, Federal Reserve Bank of St. Louis Review, May-June, 1997, A. Belke, T. Polleit, Monetary Economics in Globalised Financial Markets, Springer, 2009, p. 236.

հաշվարկը բավական բարդ գործընթաց է, քանի որ մի շարք ոչ մոնետար իրադարձություններ, ինչպիսիք են տնտեսության որևէ հատվածի շուկր կամ հաշվարկման թերությունները, կարող են գերազնահատել ամբողջական գնաճը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է բացառել դրանց ազդեցությունը»:⁴⁰

Վերոնշյալ սահմանումներից կարելի ենթադրել, որ բնականոն ՍԳԻ-ն ներկայացնում է համեմատաբար հարթ թվային շարք, որն արտացոլում է գնաճի ընդհանուր շարժը և հնարավորություն է տալիս կանխատեսելու սպասվող գնաճը: Օժտված լինելով վերոնշյալ հատկություններով՝ որոշ երկրներում ՍԳԻ-ն դրամավարկային քաղաքականության ուղղորդիչ տարրից է: Որպեսզի դա արտահայտի հնարավորինս ճշգրիտ պատկեր, անհրաժեշտ է հաշվարկը կատարել՝ հաշվի առնելով գնային տատանումները և ապրանքների որակային փոփոխությունները, ինչպես նաև դրանց առաջացման պատճառները:

Այսպիսով՝


- Գնաճը կարելի է բնութագրել որպես գների ընդհանուր մակարդակի բարձրացում, որն ուղեկցվում է դրամական միավորի արժեզրկմամբ:
- Գնաճի մակարդակը կախված է երկրի տնտեսական կայունության և տնտեսական ազատության մակարդակից:
- ՀՀ կենտրոնական բանկի հիմնական խնդիրը գների կայունության ապահովումն է, ինչը հնարավոր չէ պահպանել զրոյական մակարդակի վրա: Հետևաբար՝ գների կայունությունը գնաճի չափավոր մակարդակի պահպանումն է:
- Հայաստանի Հանրապետությունում գնաճը բնութագրող միակ ցուցանիշը սպառողական գների ինդեքսն է, որը որոշվում է սպառողական զամբյուղի ապրանքների և ծառայությունների ընթացիկ ու բազիսային ժամանակաշրջանների գների ընդհանուր արժեքների հարաբերությամբ:

⁴⁰Bryan F., Cecchetti S., Measuring Core Inflation, Monetary Policy, J.Fuhrer, Y.K. Kodrзicki, Understanding inflation and the implications for monetary policy, Forwarded by P.A.Samuelson, Cambridge, MA London, England, 2009, p. 179.

1.2. Գնաճի տեսակները, տնտեսական և ֆինանսական առանձնահատկությունները

Գնաճի առաջացման պատճառները կարող են ներկայացվել երկու խոշոր խմբերով՝ ներքին և արտաքին:⁴¹ Ներքին պատճառները հիմնականում կապված են լինում երկրի ազգային տնտեսության գործունեության, դրա ներքին սոցիալ-տնտեսական խնդիրների հետ, իսկ արտաքինները պայմանավորված են ազգային տնտեսության վրա ազդող գործոններով:

Գնաճն ըստ առաջացման աղբյուրների լինում է հետևյալ տեսակների՝



Գծապատկեր 1. Գնաճն ըստ առաջացման աղբյուրների⁴²

Ամբողջական պահանջարկի մեծացումն առաջացնում է գների մակարդակի բարձրացում, այսինքն՝ գնաճ: Հետևաբար՝ ամբողջական պահանջարկի աճը լրիվ զբաղվածության պայմաններում կամ դրան ձգտելիս առաջացնում է գների ընդհանուր մակարդակի աճ, այսինքն՝ առանց գնաճի չի կարելի հասնել լրիվ զբաղվածության: Նման հակասական մոտեցումը պարզաբանման կարիք ունի. անհրաժեշտ է հասկանալ, թե ինչն է հանգեցնում գնաճի նման դրսևորման: Խնդիրն այն է, որ տեղի է ունենում վճարունակ պահանջարկի աճ. չէ՞ որ յուրաքանչյուր երկրի տնտեսություն փակ համակարգ է, և հավասար պայմաններում մեկ հատվածում կարող է արձանագրվել

⁴¹ С.А. Дукарт, Е.В.Полицинская, Экономическая теория: Макроэкономика/Томский политехнический университет, Томск, 2013, с. 41.

⁴² A. K.Dutt, P. Skott."Keynesian Theory and the AD-AS Framework: A Reconsideration," Working Papers 2005-11, University of Massachusetts Amherst, Department of Economics.2005, p. 357.

եկամուտների մեծացում միայն այն դեպքում, երբ մնացած հատվածներում տեղի է ունենում եկամուտների վերաբաշխում:⁴³

Այսպիսով՝ վճարունակության մակարդակի բարձրացում կարող է տեղի ունենալ միայն փողի լրացուցիչ էմիսիայի դեպքում, ինչը պետությունը կատարում է սահմանափակ, չափավոր կերպով: Եթե դրամական զանգվածի մեծացումը պայմանավորված է իրական ՀՆԱ-ով, ապա փողի առաջարկը ոչ գնաճային է, համապատասխանաբար՝ եթե փողի առաջարկի աճն ազդում է իրական ՀՆԱ-ի վրա, ապա տեղի է ունենում դրամական զանգվածի շրջանառության խախտում: ⁴⁴

Պետությունը վերահսկում է դրամի էմիսիան⁴⁵, որը երբեմն տատանողական բնույթի է, իսկ ամբողջական պահանջարկի մեծացումը, որը լրացուցիչ էմիսիայի հետևանք է, հիմնականում կապված է բյուջեի պակասուրդի ծածկման կամ մարման հետ: Էմիսիայի մեծ ծավալը, որն ուղեկցվում է եկամուտների ինդեքսավորմամբ, հանգեցնում է բնակչության գնաճային սպառումներին, ինչն ավելի է մեծացնում գնաճային տեմպը: Ընդ որում, գնաճի տեմպի մեծացումը կարող է առաջ բերել զանազան խոշոր ծախսեր, հանգեցնել բյուջեի եկամուտների ավելացման, անգամ տրանսպորտային սակագների բարձրացման: Հետևաբար՝ պահանջարկածին գնաճի մեխանիզմը կարելի է բնորոշել հետևյալ կերպ. նախ՝ ավելանում է փողի զանգվածը, ապա ամբողջական պահանջարկը, իսկ դրամական զանգվածի աճ, իր հերթին, ուղեկցվում է գների բարձրացմամբ: Այսպիսով՝ կարելի է ասել, որ տնտեսության մեջ կարճ ժամանակահատվածում՝ ավելի ծավալուն արտադրության և ավելի բարձր գների պայմաններում, առաջանում է կարճաժամկետ հավասարակշռություն: Նույնկերպ՝ երկար ժամանակահատվածում, արտադրության անփոփոխ ծավալների դեպքում, ամբողջական պահանջարկի լրացուցիչ մեծացումը նույնպես բնութագրվում է գների մակարդակի բարձրացմամբ՝ որպես երկարատև առաջարկի հավասարակշռություն:

Ինչ վերաբերում է ծախսածին գնաճին, ապա պետք է նշել, որ դա առաջանում է ամբողջական առաջարկի կրճատման հետևանքով՝ կապված միավոր արտադրանքի

⁴³ A. K.Dutt., P. Skott. "Keynesian Theory and the AD-AS Framework: A Reconsideration," Working Papers 2005-11, University of Massachusetts Amherst, Department of Economics. 2005, p. 358.

⁴⁴ R.C.Free, 21st century Economics, SAGE publication, 2010. P. 376.

⁴⁵ Е. Ф. Жуков, А. Б. Басс, Л. Т. Литвиненко, Рынок ценных бумаг: учебник, изд. Wolters Kluwer Russia, 2010, с. 192.

վրա կատարված ծախսերի մեծացման, այսինքն՝ ինքնարժեքի բարձրացման հետ: Ծախսերի մեծացմանը զուգահեռ, տեղի է ունենում արտադրության ծավալների կրճատում, ինչն ուղեկցվում է գների բարձրացմամբ: Որպես նման երևույթների պատճառ, նախևառաջ, պետք է մատնանշել մենատիրությունը (մոնոպոլիզմ), քանի որ արտադրանքի նշանակալի մասն արտադրվում է խմբատիրական (օլիգոպոլիստական) շուկայի բնագավառում: Գների բարձր մակարդակն այստեղ պահպանվում է կիսաֆաբրիկատ և պատրաստի արտադրանքների արհեստական թերարտադրության, նախնականի համեմատությամբ՝ միավոր արտադրանքի գների աճի, ռեսուրսների գերազնահատման հաշվին, ամենից առաջ՝ պայմանավորված դրանց մենաշնորհով, մրցակցային և հավանական ծավալների գերազնահատմամբ: Ընդ որում, գնային ազդանշանները, տարածվելով ողջ տնտեսությունով մեկ, ներգործում են նաև դրա պարբերաշրջանների վրա և հանգեցնում բարձր գնագոյացման՝ կապված այն հանգամանքի հետ, թե գներն ինչպիսին պետք է լինեն տեխնոլոգիական զարգացման տվյալ մակարդակում:⁴⁶ Այսպիսով՝ կազմակերպությունների մենաշնորհը խթանում է գների իներցիոն բարձրացումը: Առանձին դեպքերում ծախսածին գնաճի առաջացման գործոն է համարվում նաև արտասահմանյան կազմակերպությունների ազդեցության չափը, որը բնութագրվում է որպես ներմուծվող գնաճ՝ «գնային շոկի» միջոցով: Այս երևույթը կարելի է հասկանալ հետևյալ կերպ. տվյալ երկրի տնտեսության գնաճը պայմանավորված է արտասահմանյան ապրանքների գներով: Այսպիսով՝ եթե տվյալ երկրի տնտեսության մեջ օգտագործվում են ներմուծվող ռեսուրսներ, ապա դրանց կտրուկ թանկացումը կհանգեցնի ծախսերի ավելացման:⁴⁷

« Գնային շոկին» համանման էֆեկտ կարող է ի հայտ գալ նաև ազգային արժույթի արժեզրկման հետևանքով, եթե ամբողջական առաջարկում մեծ է արտասահմանյան ներդրումների չափաբաժինը:⁴⁸ Այս դեպքում նույնիսկ հայրենական արտադրողները, որոնք իրենց արտադրության մեջ չեն օգտագործում ներմուծվող ռեսուրսներ, ի վիճակի չեն լինում պահպանելու գները միևնույն մակարդակի վրա: Հաշվի առնելով այն

⁴⁶ Д.Ю.Мирополюский, Т.Г.Бродский, Макроэкономика: Рынок товаров и услуг, теория инфляции, государственное регулирование экономики. Изд. Питер, Санкт-Петербург, 2014, с. 211.

⁴⁷ R.G.Lipsey, C.Harbury, First principles of economy, Oxford university press, New York, 2004, 430 p.

⁴⁸ Amitava K.Dutt, Peter Skott."Keynesian Theory and the AD-AS Framework: A Reconsideration," Working Papers 2005-11, University of Massachusetts Amherst, Department of Economics,.2005, pg 382.

իրողությունը, որ յուրաքանչյուր արտադրող նաև սպառող է, պարզ է դառնում, որ նման իրավիճակում առավել նպատակահարմար է իրական եկամտի պահպանումն արտադրանքի գների բարձրացմամբ:

Անդրադառնալով առաջարկածին գնաճին, պետք է նշել, որ դա կարող է առաջանալ տվյալ երկրի կառավարության վարած հարկաբյուջետային և դրամավարկային սահմանափակ քաղաքականության հետևանքով: Հարկերի՝ ոչ ժամանակին բարձրացումը, վարկային պայմանների խստացումը և էլի նմանատիպ ձեռնարկումներ կարող են հանգեցնել ծախսային գնաճի: Դիտարկենք մի իրավիճակ, երբ կառավարությունը նպատակադրվում է խթանել արտադրողների ոչ գնաճային գործունեությունը և, միաժամանակ, լուծել բյուջեի պակասուրդի խնդիրը: Ենթադրվում է, որ այս դեպքում վարկերի տոկոսադրույքները չպետք է բարձրացվեն, հետևաբար՝ բյուջեի պակասուրդը չի կարող ծածկվել ո՛չ վերաֆինանսավորման, ո՛չ էլ պետական պարտքի մոնետարացման ճանապարհով: Այսպիսով՝ եթե նշենք, որ բյուջեի վիճակը կարող է լավանալ հարկադրույքների բարձրացմամբ, ապա կհակասենք առաջադրված նպատակին:⁴⁹

Ծախսածին գնաճի առաջացման կառուցակարգը բնութագրվում է նրանով, որ ծախսերի նախնական բարձրացման ժամանակ աճում է գների մակարդակը և դրանից հետո միայն ավելանում դրամական զանգվածը:⁵⁰

Իրականում գնաճի տեսակների տարբերակումը բավական դժվարին գործընթաց է: Այսպես՝ եթե ռազմական ծախսերը կտրուկ մեծանում են, հետևաբար՝ ավելանում են նաև ընդհանուր ծախսերը՝ առաջացնելով պահանջարկածին գնաճ: Նույնկերպ, եթե պահանջարկի մեծացման խթանիչները գործում են ապրանքների և ռեսուրսների շուկաներում, ապա մեծանում են մի շարք ֆիրմաների ծախսերն աշխատավարձերի վճարման, նյութական ռեսուրսների և վառելիքի ձեռքբերման ուղղություններով, ինչը նույնպես հանգեցնում է գների բարձրացման: Ու թեպետ այս դեպքում ևս գնաճը պահանջարկածին է, սակայն մի շարք բնորոշիչներով կարող է բնութագրվել որպես ծախսածին կամ առաջարկածին:

⁴⁹ Д.Ю. Мировпольский, Т.Г.Бродский, Макроэкономика: Рынок товаров и услуг, теория инфляции, государственное регулирование экономики. Изд. Питер, Санкт-Петербург, 2014, с. 212.

⁵⁰ Фролов В., Сорокин А., Денежная система и инфляция, УкрНИИТИ, Киев, 1991, էջ 129:

Մի խոսքով, դժվար է որոշակիացնել գնաճի տեսակը՝ առանց դիտարկելու դրա առաջացման պատճառները: Բազմաթիվ տնտեսագետների կարծիքով առաջարկածին և պահանջարկածին գնաճներն իրարից տարբերվում են մեկ կարևոր գործոնով. եթե պահանջարկածին գնաճը շարունակվում է այնքան ժամանակ, քանի դեռ պահանջվում են չափազանց մեծ ծախսեր, ապա առաջարկածինն ինքնաբերաբար սահմանափակվում է, այսինքն՝ աստիճանաբար անհետանում: Վերջինս բացատրվում է նրանով, որ առաջարկի նվազման հետևանքով կրճատվում են ինչպես ազգային եկամտի, այնպես էլ զբաղվածության իրական ծավալները, ինչի արդյունքում սահմանափակվում են նաև հետագա ծախսերը: Այլ կերպ ասած, ծախսածին գնաճն առաջացնում է անկում, ինչն էլ իր հերթին սահմանափակում է ծախսերի հետագա մեծացումը:⁵¹

Խառը բնույթի գնաճն արտահայտվում է հետևյալ կերպ. ապրանքի գնի բարձրացում տեղի է ունենում ինչպես պահանջարկի, այնպես էլ առաջարկի գործոնների փոփոխությամբ պայմանավորված: Այսինքն՝ նման գնաճ արձանագրվում է առաջարկի և պահանջարկի գնաճների՝ միմյանց փոխարինելու արդյունքում:⁵²

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ գնաճի յուրաքանչյուր տեսակ բնութագրվում է տարբեր ֆինանսական գործոնների առկայությամբ.

- Պահանջարկածին կամ պահանջարկի գնաճն առաջացնում է փողի էմիսիա, եկամուտների տեղաբաշխում, բյուջեի մեծացում, զբաղվածության մակարդակի աճ: Այն երկար ժամանակահատվածում հանգեցնում է երկարատև հավասարակշռության, ինչը արտադրության անփոփոխ ծավալների դեպքում բնութագրվում է գների մակարդակի բարձրացմամբ՝ որպես երկարաժամկետ առաջարկ:
- Ծախսածին գնաճի ժամանակ տեղի են ունենում հետևյալ գործընթացները. միավոր արտադրանքի ինքնարժեքի բարձրացում, որին զուգահեռ՝ արտադրության ծավալների կրճատում, միավոր արտադրանքի գնի աճ, ռեսուրսների գերազնահատում՝ համեմատած նախնականի հետ,

⁵¹ А.И. Добрынин, Л.С.Тарасевич, Экономическая теория, изд. Питер, Санкт-Петербург, 2009, с.393.

⁵² Д.Ю.Миропольский, Т.Г.Бродский, Макроэкономика: Рынок товаров и услуг, теория инфляции, государственное регулирование экономики. Изд. Питер, Санкт-Петербург, 2014, с. 212.

ինչպես նաև կիսաֆաբրիկատ և պատրաստի արտադրանքների գների բարձրացում արհեստական թերարտադրության հաշվին: Առանձին դեպքերում ծախսածին գնաճի պատճառ է համարվում արտասահմանյան ֆիրմաների ազդեցությունը՝ որպես ներմուծվող գնաճ «գնային շոկի» միջոցով:

1.3. Գնաճի ազդեցությունը ֆինանսական շուկաների և սոցիալ-տնտեսական գործոնների վրա

Լրիվ զբաղվածության պայմաններում համախառն ներքին արդյունքի իրական ծավալը կայուն է, իսկ գների մակարդակը՝ բարձր:⁵³ Հաշվի առնելով այս իրողությունը, ինչպես նաև պարզելու համար գնաճի ազդեցությունը ֆինանսական և սոցիալ-տնտեսական գործոնների վրա՝ անհրաժեշտ է դիտարկել այն տարբերությունները, որոնք գոյություն ունեն իրական և անվանական եկամուտների միջև:⁵⁴ Այսպիսով՝ անվանական եկամուտը փողի այն քանակն է, որը ձեռք է բերվում աշխատավարձի, ռենտայի, տոկոսի կամ շահույթի տեսքով, իսկ իրական եկամուտը որոշվում է ապրանքների ու ծառայությունների այն քանակով, որը հնարավոր է ձեռք բերել անվանական եկամտի միջոցով: Հետևաբար՝ երբ անվանական եկամուտն աճում է ավելի արագորեն, քան գների մակարդակը, ապա իրական եկամուտը մեծանում է: Եվ հակառակը. եթե գների մակարդակն աճում է ավելի արագորեն, քան անվանական եկամուտը, ապա իրական եկամուտը նվազում է:⁵⁵

Ակնհայտ է, որ գնաճը նախևառաջ հարվածում է հաստատագրված անվանական եկամուտներ ստացողների շահերին, որովհետև գների բարձրացումը գերազանցում է նրանց անվանական եկամուտները: Ինչ վերաբերում է չհաստատագրված եկամուտներ ստացողներին, ապա գնաճի պայմաններում նրանք նույնիսկ կարող են հանդես գալ

⁵³ M.Boughzala, D. Cobham, Inflation Targeting in MENA Countries: An Unfinished Journey, published by Palgrave Macmillan, 2011, p. 27.

⁵⁴ A.Damodaran, Investment Valuation: Tools and Techniques for Determining the Value of any Asset, published by John Wiley and sons inc., 2012, 151 p.

⁵⁵ P.A.Klein, Economics Confronts the Economy, UK, published by Edward Elgar publishing limited, 2006, p. 181.

շահողի կարգավիճակում, քանի որ նրանց անվանական եկամուտները կարող են գերազանցել գների աճի տեմպերը: Սա հիմնականում վերաբերում է շահույթ ստացողներին: Այսպես՝ եթե կազմակերպության թողարկած պատրաստի արտադրանքի գներն աճեն ավելի արագորեն, քան ռեսուրսներինը, ապա դրամական եկամուտները կաճեն կատարվող ծախսերից ավելի արագորեն:⁵⁶

Գնաճը շոշափում է նաև խնայողություններ ունեցողների շահերը: Բանն այն է, որ, գների բարձրացմանը զուգընթաց, նվազում է խնայողությունների իրական արժեքը կամ դրանց գնողունակությունը՝ իջեցնելով բնակչության այդ հատվածի իրական եկամուտների մակարդակը: Գնաճով պայմանավորված՝ եկամուտների վերաբաշխումն արտահայտվում է նաև վարկառուների և վարկատուների հարաբերություններում. անսպասելի գնաճն օգուտ է բերում առաջիններին և վնաս հասցնում երկրորդներին, քանի որ վարկի մարման ընթացքում փողի իրական արժեքն անկում է ապրում: Ուստի ընդունված է ասել, որ գնաճի պայմաններում վարկառուներին տրվում են «թանկ», իսկ վարկատուներին վերադարձվում «էժան» փողեր:⁵⁷ Այսպիսով՝ կարելի է ենթադրել, որ գնաճի հետևանքների բնույթը կապված է նաև այն հանգամանքի հետ, թե որքանով է դա սպասվող կամ անսպասելի: Պարզ է, որ սպասվող գնաճի դեպքում եկամուտ ստացողը կարող է միջոցներ ձեռնարկել դրա բացասական հետևանքները կանխելու կամ գոնե մեղմացնելու ուղղությամբ:

Դիտարկելով գնաճի հետևանքները հասարակության տարբեր խավերի համար՝ անհրաժեշտ է նշել, որ յուրաքանչյուր ընտանիք (ըստ իր անդամների) միաժամանակ և՛ եկամուտ ստացող է, և՛ անշարժ գույքի սեփականատեր: Նրանցից ամեն մեկը տարբեր ձևով է արձագանքում գնաճին՝ նվազեցնելով կամ մեծացնելով ընտանիքի իրական եկամուտները: Օրինակ՝ եթե գնաճի պայմաններում հաստատագրված եկամուտների առկայությունը նվազեցնում է իրական եկամուտները, ապա այդ նույն գնաճը մեծացնում է նաև անշարժ գույքի (տներ, հող) իրական արժեքը: Ուստի անհրաժեշտ է բազմակողմանիորեն ուսումնասիրել գնաճի հետևանքները՝ բնակչության իրական վիճակի մասին օբյեկտիվ պատկերացում կազմելու նպատակով:

⁵⁶ Г.С. Вечканов, Экономическая теория, Санкт-Петербург, Питер, 2011, с.347.

⁵⁷ G.Tily, Keynes's General Theory, the Rate of Interest and Keynesian' Economics, published by Palgrave Macmillan, 2007, 34 p.

Գնաճի հասարակական ազդեցության հաջորդ տեսակը կապված է գնացուցակների հաճախակի փոփոխման անհրաժեշտության հետ: Գների պարբերաբար փոփոխվելու հանգամանքը դրդում է ֆիրմաներին շարունակ հրապարակել նոր գնացուցակներ, որից խուսափելու համար վերջիններս երբեմն հրաժարվում են գների փոփոխությունից, ինչի հետևանքով մեծանում են գնաճի տեմպերը և էլ ավելի անկայուն դառնում հարաբերական գները: Եվ քանի որ շուկայական տնտեսության պայմաններում ռեսուրսների բաշխումը կատարվում է ըստ հարաբերական գների, գնաճն առաջացնում է անհամամասնություններ միկրոտնտեսական մակարդակում:⁵⁸

Հարկային օրենսդրությամբ սահմանված որոշակի դրույքներ, որոնք չեն արտացոլում գնաճի ազդեցությունը, կարող են առանձին անձանց կամ կազմակերպությունների համար ոչ հիմնավոր հարկային պարտավորությունների ձևավորման պատճառ դառնալ: Այսպես՝ 100 միավոր արժողությամբ կապիտալը 10% գնաճի պարագայում կունենա 110-ի հավասար իրական գին, սակայն վաճառքի դեպքում 10-ը կդիտարկվի իբրև եկամուտ և կհարկվի պետության կողմից, քանի որ հարկային օրենսդրությունը ելնում է կապիտալի արժեքի անվանական և ոչ թե իրական հավելածից:⁵⁹

Մինչ այժմ դիտարկվել է այն իրողությունը, որ ազգային արդյունքի իրական ծավալը լրիվ զբաղվածության պայմաններում կայուն մեծություն է: Սակայն, հարկ է նշել, որ գործնականում ազգային արդյունքի ծավալը կարող է փոփոխվել՝ կախված գների տատանումներից: Այս համատեքստում անդրադառնանք երեք մոդելների, որոնցից մեկում գնաճն ուղեկցվում է արտադրության ծավալի աճով, իսկ մյուս երկուսում՝ դրա նվազմամբ (գծապատկեր 1):

Պահանջարկի աճին զուգընթաց, տնտեսությունը թևակոխում է երկրորդ շրջափուլ, որը բնութագրվում է զբաղվածության և նյութական ռեսուրսների օգտագործման ավելի բարձր մակարդակով: Հատկանշական է, որ գների բարձրացում արձանագրվում է հենց այս փուլում, որովհետև միշտ էլ գոյություն ունեն այնպիսի

⁵⁸Մակրոտնտեսական կարգավորում, ուսումնական ձեռնարկ, Հ. Բ. Ղուշյանի խմբագրությամբ, գրախոս.՝ Ա.Հ.Արշակյան, «Տնտեսագետ», Երևան, 2005, էջ 327:

⁵⁹ «Շահութահարկի մասին» ՀՀ Օրենք, ՀՕ-155, 1998, հոդված 7:

ոլորտներ, նաև ձեռնարկություններ, որոնք աշխատանքային և նյութական ռեսուրսների ավելի արագ սպառման հետևանքով չեն կարողանում մեծացնել արտադրանքի առաջարկը: Ուստի, պայմանավորված արտադրական ծախսերով, բարձրանում է գների մակարդակը:

Ուշագրավ է նաև այն իրողությունը, որ աշխատանքի շուկայի սահմանափակ լինելու հանգամանքը մեծացնում է արհմիությունների ազդեցությունն աշխատավարձերի բարձրացման վրա, իսկ կազմակերպությունները, հատկապես տնտեսության վերելքի պայմաններում, հիմնականում ընդառաջ են գնում դրանց պահանջներին՝ խուսափելով գործադուլներից: Բացի այդ, գոյություն ունի բարձր գների բեռը սպառողների ուսերին դնելու տարբերակը:⁶⁰

Երկրորդ շրջափուլում առաջացած գնաճն անվանում են նաև «վաղաժամ», քանի որ այն սկսվում է դեռևս այն ժամանակ, երբ երկրում լրիվ զբաղվածություն չի ապահովվել:⁶¹

Երրորդ շրջափուլում լրիվ զբաղվածությունն արտահայտվում է ամբողջ տնտեսության մակարդակով: Ընդ որում, տնտեսությունն արդեն չի կարող պահանջարկի հետագա աճին արձագանքել արտադրության ծավալի աճով: Այս պարագայում ՀՆԱ ծավալը հասնում է իր առավելագույն մակարդակին, և պահանջարկի հետագա աճը հանգեցնում է գնաճի: Այսպիսով՝ հասարակության արտադրական հնարավորությունները գերազանցող պահանջարկն առաջացնում է գների մակարդակի բարձրացում:⁶²


Ինչպես երևում է վերը նշվածից, ազգային արդյունքի ծավալը և զբաղվածության մակարդակը կախված են համախառն ծախսերից: Ընդ որում, փոքր ծախսերի դեպքում տնտեսությունը գործում է ըստ գծապատկերի 2-ի առաջին հատվածի, որտեղ գները կայուն են, բայց ազգային արդյունքի իրական ծավալը բավական ցածր է ներուժայինից, իսկ գործազրկության մակարդակը՝ բարձր: Եթե համախառն ծախսերն աճեն այնքան, որ տնտեսությունը գործի ըստ գծապատկերի երկրորդ հատվածի, պարզ կդառնա, որ ազգային արդյունքի իրական ծավալի մեծացման համար,

⁶⁰ Մակրոտնտեսական կարգավորում, ուսումնական ձեռնարկ, Հ. Բ. Ղուշյանի խմբագրությամբ, գրախոս.՝ Ա.Հ.Արշակյան, «Տնտեսագետ», Երևան, 2005, էջ 113:

⁶¹ Նույն տեղում:

⁶² Նույն տեղում, էջ 114:

գործազրկության ավելի ցածր մակարդակի հետ մեկտեղ, պետք է տեղի ունենա գների որոշակի բարձրացում՝ գնաճ: Իհարկե, եթե համախառն ծախսերի հետագա աճի հետևանքով տնտեսությունը տեղափոխվի երրորդ հատված, ապա այդ ծախսերը կդառնան զուտ գնաճի հետևանք, որովհետև ձեռք կբերվի իրական արդյունքի այնպիսի մակարդակ, որի դեպքում տնտեսությունը գործում է լրիվ կարողությամբ և ապահովում է լրիվ զբաղվածություն:



Անցումն առաջին հատվածից երկրորդին տեղի է ունենում գների աննշան աճի պայմաններում: Անցումը երկրորդ հատվածից երրորդին ուղեկցվում է գների արագ աճով, և արտադրության ծավալի լրացուցիչ միավոր աճի դեպքում ծախսերն ավելի արագ են աճում:

Գծապատկեր 2. Գների և զբաղվածության մակարդակների փոխկապվածությունը ՀՀ-ում⁶³

Գծապատկերի երկրորդ հատվածում կարծես թե առաջանում է հավասարակշռություն արտադրության, զբաղվածության և գնաճի միջև: Դա նշանակում է, որ արտադրության և զբաղվածության բարձր տեմպ ապահովվելու համար պետք է հաշտվել չափավոր գնաճի հետ:

Այսպիսով՝ ծախսերի բարձր մակարդակը, որը հանգեցնում է արտադրության ծավալների և զբաղվածության մակարդակի աճին, նույնպես կարող է լինել գնաճի

⁶³ Մակրոտնտեսական կարգավորում, ուսումնական ձեռնարկ, Հ. Բ. Ղուշյանի խմբագրությամբ, գրախոս.՝ Ա.Հ.Արշակյան, «Տնտեսագետ», Երևան, 2005, էջ 113:

առաջացման պատճառ: Այսինքն՝ որքան մեծ է ՀՆԱ-ն, այնքան բարձր է գների մակարդակը:

Աղյուսակ 1-ում ներկայացված են ՀՀ համախառն ներքին արդյունքի ցուցանիշները.

Աղյուսակ 1⁶⁴

Համախառն ներքին արդյունքի ցուցանիշները 2013-2015 թթ.

	2013	2014	2015
Համախառն ներքին արդյունքն ընթացիկ գներով			
Մլրդ դրամ	4555.6	4828.6	5032.1
Մլն ԱՄՆ դոլար	11121.3	11609.5	10529.1
Դեֆլատոր՝ նախորդ տարվա նկատմամբ (%)	103.4	102.3	101.2
Համախառն ներքին արդյունքի իրական ծավալի ինդեքս՝ նախորդ տարվա նկատմամբ (%)	103.3	103.9	103.3

Աղյուսակ 1-ից երևում է, 2013-2015 թթ. ընթացքում համախառն ներքին արդյունքի մակարդակը Հայաստանի Հանրապետությունում գրեթե նույնական է:

Աղյուսակ 2-ում արտացոլված է գների մակարդակը նույն՝ 2013-2015 թթ. ժամանակահատվածում:

Աղյուսակ 2⁶⁵

Սպառողական շուկայում պարենային և ոչ պարենային ապրանքների գների ու ծառայությունների սակագների փոփոխությունները 2013-2015 թթ.

	2013	2014	2015
Սպառողական գների ինդեքս (ընդամենը)	105.6	104.6	99.9

⁶⁴ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, <http://armstat.am>, Հայաստանը թվերով, 2016, էջ 50:

⁶⁵ <http://armstat.am>, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանը թվերով, 2016, էջ 81:

Աղյուսակ 2-ից ակնհայտ է, որ նշված ժամանակահատվածում գրանցվել է գների նվազման միտում, իսկ համախառն ներքին արդյունքը մնացել է գրեթե անփոփոխ՝ 103.3, սակայն ՀՆԱ դեֆլյատորը նվազել է՝ 103.4-ից հասնելով 101.2-ի: Ընդհանուր առմամբ, երկու աղյուսակների համադրությունից կարելի է եզրակացնել, որ ՀՀ-ում ՀՆԱ-ն ցուցաբերում է նվազման միտում՝ հանգեցնելով գների մակարդակի անկման և վկայելով տնտեսական ակտիվության նվազման մասին: ՀՆԱ մակարդակի բարձրացումը կարող է խթանել զբաղվածությունը, որի դեպքում կտրուկ կերպով կարձանագրվի գնաճ:

Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ լրիվ զբաղվածության պայմաններում, երբ համախառն ներքին արդյունքի իրական ծավալը կայուն է.

- Գնաճը հարվածում է հաստատագրված անվանական եկամուտ ստացողների շահերին, որովհետև դա գերազանցում է նրանց անվանական եկամուտները:
- Գների բարձրացմանը զուգընթաց, նվազում է խնայողությունների իրական արժեքը կամ դրանց գնողունակությունը՝ իջեցնելով իրական եկամուտների մակարդակը:
- Գնաճով պայմանավորված՝ եկամուտների վերաբաշխումն արտացոլվում է նաև վարկառուների և վարկատուների հարաբերություններում, քանի որ վարկի մարման ընթացքում փողի իրական արժեքն անկում է ապրում:

Միաժամանակ, գործնականում, ազգային արդյունքի ծավալը կարող է փոփոխվել՝ կախված գների տատանումներից: Այս պարագայում դիտարկվում են հետևյալ զարգացումները.

- Պահանջարկի աճին զուգընթաց, ինչպես զբաղվածության, այնպես էլ նյութական ռեսուրսներն օգտագործվում են ավելի արդյունավետ կերպով: Այդուհանդերձ, գների բարձրացում արձանագրվում է հենց այս փուլում, որովհետև միշտ էլ գոյություն ունեն այնպիսի ոլորտներ, նաև ձեռնարկություններ, որոնք աշխատանքային և նյութական ռեսուրսների ավելի արագ սպառման հետևանքով չեն կարողանում մեծացնել

արտադրանքի առաջարկը: Ուստի, պայմանավորված արտադրական ծախսերով, բարձրանում է գների մակարդակը:

- Զբաղվածությունն արտահայտվում է ամբողջ տնտեսության մակարդակով, տնտեսությունը չի կարող պահանջարկի հետագա աճին արձագանքել արտադրության ծավալի աճով: ՀՆԱ ծավալը հասնում է առավելագույն մակարդակի, և պահանջարկի հետագա աճը հանգեցնում է գնաճի: Այսպիսով՝ հասարակության արտադրական հնարավորությունները գերազանցող պահանջարկը հանգեցնում է գների բարձրացման:⁶⁶
- Հաշվի առնելով այն իրողությունը, որ 2013-2015 թթ. ընթացքում ՀՀ համախառն ներքին արդյունքի մակարդակը 103.3 է, սակայն նվազել է ինչպես ՀՆԱ դեֆլյատորը՝ 103.4-ից հասնելով 101.2-ի, այնպես էլ գների ինդեքսը՝ 105.6-ից հասնելով 99.9-ի, հետևաբար՝ նշված ժամանակահատվածում գնաճի մակարդակն անկում է ապրել: Այս տվյալներից հետևում է, որ ՀՀ ՀՆԱ-ն դրսևորում է նվազման միտում՝ հանգեցնելով գների մակարդակի անկման, վկայելով նաև տնտեսական ակտիվության նվազման մասին:

⁶⁶ Մակրոտնտեսական կարգավորում, ուսումնական ձեռնարկ, Հ. Բ. Ղուշյանի խմբագրությամբ, գրախոս՝ Ա.Հ.Արշակյան, «Տնտեսագետ», Երևան, 2005, էջ 114:

ԳԼՈՒԽ 2. ԳՆԱՃԻ ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ

2.1. Դրամավարկային քաղաքականությունը որպես գնաճի կարգավորման գործիք

Շուկայական տնտեսության սոցիալական և տնտեսական հարաբերությունների զարգացման արդի փուլի կարևորագույն գերակայություններից է գնաճի արդյունավետ կարգավորման ապահովումը, որի իրականացման գործում մեծ դեր ունի հիմնավորված դրամավարկային քաղաքականության վարումը: Դրամավարկային քաղաքականությունը պետության տնտեսական քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկն է: Ավելին, դա նշված քաղաքականության ամենաճկուն գործիքներից է, որի միջոցով կարճ ժամանակահատվածում կարելի է ապահովել տնտեսական կայունություն և աճ, ինչպես նաև արագորեն փոփոխության ենթարկել և հարթել զբաղվածության կարճաժամկետ տատանումները:

ՀՀ-ում դրամավարկային քաղաքականության իրականացումը վերապահված է կենտրոնական բանկին:⁶⁷ Վերջինիս հիմնական նպատակը դրամական զանգվածի քանակական փոփոխություններով տնտեսական աճի տեմպերի, փողի զանգվածի և հասարակության գործարար ակտիվության վրա ներգործության ապահովումն է:

1994 թ. ՀՀ ԿԲ-ն առաջին անգամ մշակել է դրամավարկային քաղաքականության ծրագիր, որով սկիզբ է դրվել գների կայունության ապահովմանն ուղղված՝ փողի քանակային կարգավորման ռազմավարությանը:⁶⁸

Հարկ է նշել, որ դրամավարկային քաղաքականությունը կարող է իրականացվել երկու հիմնական ուղղություններով.

1. խթանող կամ ինտերվենցիոն,
2. զսպող կամ ռեստրուկտիվ:⁶⁹

⁶⁷ ՀՀ ԿԲ 2015-2017 թթ. ռազմավարություն, www.cba.am

⁶⁸ Նույն տեղում:

⁶⁹ Ա.Ա. Հովհաննիսյան, Ա. Ս. Գեղեոնյան, Փողը և դրամավարկային քաղաքականության հիմնահարցերը, ուսումնական ձեռնարկ, Երևան, ԵրՃՇՊՀ հրատ., 2009, էջ 131:

Խթանող կամ ինտերվենցիոն դրամավարկային քաղաքականության էությունն այն է, որ յուրաքանչյուր երկրի կենտրոնական բանկ, նվազեցնելով վարկերի տոկոսադրույքները, իրականացնում է «էժան փողի» քաղաքականություն, ինչն էլ խթանում է տնտեսության զարգացումը: Ի հակադրություն վերջինիս՝ զսպող կամ ռեստրուկտիվ մոտեցմամբ իրականացվում է «թանկ փողի» քաղաքականություն՝ բարձրացնելով վարկերի տոկոսադրույքները, ինչի հետևանքով էլ զսպվում, կաշկանդվում է երկրի տնտեսության զարգացումը:

Առհասարակ յուրաքանչյուր կենտրոնական բանկ դրամավարկային քաղաքականություն իրականացնող պետական կառույց է, իհարկե, երբեմն դա կարող է հիմնված լինել խառը սեփականության վրա: Հատկանշական է, որ բոլոր դեպքերում այն գործում է երկրի կառավարությունից անկախ: Ինչ վերաբերում է «էժան» և «թանկ» փողերի քաղաքականություններին, ապա համանման քայլերով ԿԲ-ն նպատակ է հետապնդում դրամական կամ վարկային միջոցներն առավել մատչելի են դարձնել տնտեսավարող սուբյեկտների համար:⁷⁰

ԿԲ-ն կատարում է նաև պահուստավորման գործառույթ՝ բարձրացնելով կամ իջեցնելով պարտադիր պահուստավորման նորմաները, որոնք սահմանվում են՝ ըստ բանկերի կողմից ներգրավված ցպահանջ, ժամկետային և խնայողական ավանդների և այլ պարտավորությունների դիմաց կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների չափի:⁷¹ Մեր հանրապետությունում ներկայում այդ նորմատիվը սահմանված է 8%-ի չափով՝ նախկին 12%-ի փոխարեն:⁷² Պետք է նշել, որ խթանող կամ «էժան փողի» քաղաքականություն իրականացնելիս ԿԲ-ն իջեցնում է պարտադիր պահուստավորման նորման, որի արդյունքում մեծանում է վարկային ռեսուրսների զանգվածը և արագանում տնտեսության զարգացումը:

Ինչպես տնտեսական, այնպես էլ դրամավարկային հարաբերությունների կարգավորման նպատակով ԿԲ-ն մշակում է միմյանց հետ փոխկապված

⁷⁰ Ա.Ա. Հովհաննիսյան, Ա. Ս. Գեդեոնյան, Փողը և դրամավարկային քաղաքականության հիմնահարցերը, ուսումնական ձեռնարկ, Երևան, ԵրՃՇՊՀ հրատ., 2009, էջ 131:

⁷¹ «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 20, օրենք ՀՕ 69, 1996:

⁷² «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2, հաստատված է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39 Ն որոշմամբ, կետ 20, 24.1, էջ 5:


միջոցառումների ամբողջություն, որի տարրերն են դրամավարկային հարաբերությունների կարգավորման գործիքները:

Դրամավարկային հարաբերությունների կարգավորման կառուցակարգը բնութագրվում է հակազնաճային ծրագրերի մշակմամբ, ինչը գնաճի դեմ պետական մարմինների կողմից իրականացվող պայքարի ակտիվ միջոց է: Նման մոտեցում, որպես կանոն, կիրառվում է արտակարգ իրավիճակներում, երբ պարզվում է, որ ազդեցության մնացյալ միջոցներն (իրավիճակի համահարթում, տնտեսական պարբերաշրջանի կարգավորում և այլն) այլևս արդյունավետ չեն: Այսպես՝ 1995 թ. ՀՀ ԿԲ-ին հաջողվում է հակազնաճային արդյունավետ ծրագրերի իրագործմամբ կարճ ժամանակահատվածում կասեցնել գնաճի բարձր տեմպը՝ 1994 թ. 1761%-ից հասցնելով 32.2%-ի:⁷³

Հարկ է նշել նաև, որ յուրաքանչյուր կենտրոնական բանկ դրամավարկային քաղաքականություն մշակելիս ներկայացնում է հաջորդական ռազմավարական քայլեր, որոնք ենթադրում են հստակ և երկարաժամկետ կառավարում: Նմանատիպ ռազմավարությունը, սովորաբար, ծրագրերի ամբողջություն է, որը պայմանականորեն կարելի է բաժանել ըստ գործառնական, միջանկյալ և հիմնական կառավարման, ինչպես նաև ամեն մի մակրոտնտեսական իրավիճակին բնորոշ՝ առաջնային և երկրորդական նպատակների փուլերի:⁷⁴

⁷³ ՀՀ ԿԲ 2015-2017 թթ. ռազմավարություն, www.cba.am

⁷⁴ ՀՀ կենտրոնական բանկի կողմից գնաճի նպատակադրման ռազմավարության ընդունման հիմնավորում, www.cba.am



Գծապատկեր 3. Դրամավարկային քաղաքականության նպատակների աստիճանակարգային կառուցվածքը⁷⁵

Վերլուծելով ԿԲ ռազմավարությունը՝ կարելի է պարզել, որ հիմնական նպատակները որոշակիացնում են պետության որդեգրած ուղենիշները երկարաժամկետ հատվածում, գործառնական նպատակները հիմնականին հասնելու ուղիներն են փոփոխվող իրավիճակի որոշակի պայմաններում, իսկ միջանկյալ նպատակները մատնանշում են այն հիմնական ցուցանիշները, որոնցով ղեկավարվում է կառույցն իր ամենօրյա գործունեության ընթացքում:⁷⁶

Ի դեպ, հարկ է նշել, որ գործառնական նպատակների իրագործումը ենթադրում է, որ ԿԲ-ն իր տնօրինության ներքո գտնվող դրամավարկային քաղաքականության գործիքների կիրառմամբ կարող է էական փոփոխության ենթարկել որոշակի դրամական ցուցանիշներ: Ընդ որում, դա կատարվում է որոշակի ժամանակաշրջանի համար՝ ըստ նպատակի կարևորության կամ ընդգրկման աստիճանի. օրինակ՝

⁷⁵ Աղյուսակը կազմել է հեղինակը՝ ըստ ՀՀ կենտրոնական բանկի կողմից գնաճի նպատակադրման ռազմավարության ընդունման հիմնավորման, www.cba.am

⁷⁶ L.Mahadeva, P.Sinclair, How Monetary Policy Works, London and New York, 2005, p. 41.

բանկային համակարգի տարեկան իրացվելիության պահպանում միջնաժամկետ մակարդակում: Այսպիսով՝ գործառնական նպատակի իրականացմամբ ԿԲ-ն վերահսկում է իրացվելիության առաջարկի ու պահանջարկի վերելքներն ու անկումները:⁷⁷

Որպես կենտրոնական բանկի գործառնական հիմնական նպատակ է դիտարկվում մասնավոր հատվածի բանկային վարկավորման տոկոսադրույքի որոշակի մակարդակի ապահովումը, իսկ իբրև դրա իրականացման գործիք՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքը⁷⁸ կամ, պարզապես, ԿԲ տոկոսադրույքը՝ ըստ որի տեղական բանկերին տրամադրվում են հիմնականում կարճաժամկետ վարկեր:

Տոկոսադրույքի կառավարումը ամեն մի կենտրոնական բանկի տնտեսական ակտիվության կարգավորման նախընտրելի մեթոդներից է: Առաջարկելով ցածր տոկոսադրույքներ՝ ԿԲ-ն կարողանում է խթանել տնտեսության զարգացումը, և ընդհակառակը:

ՀՀ ԿԲ-ի պարագայում վերոհիշյալ նպատակով կիրառվում է վերաֆինանսավորման տոկոսադրույքը, որի մակարդակը հիմնականում պայմանավորված է արժութային պահուստի քանակով, որը մեծանում կամ փոքրանում է ակտիվների ձեռքբերումից կամ վաճառքից: Ընդ որում, ԿԲ-ն ի վիճակի չէ անմիջականորեն կառավարելու արժութային պահուստը և նշված տոկոսադրույքի մակարդակը: Այս ցուցանիշները փոխկապված են, և գործնականում, որպես գործառնական նպատակ, ԿԲ-ն դրամավարկային քաղաքականության մեջ առաջնահերթությունը տալիս է դրանցից որևէ մեկին: Զարգացած երկրներում ԿԲ տոկոսադրույքի համապատասխան ծրագրավորված մակարդակի ապահովման միջոց են արժութային պահուստների մեծացման կամ փոքրացման գործարքները բաց շուկայում: Արժութային պահուստները որոշակի մակարդակի վրա պահպանելու համար անհրաժեշտ է կարգավորել դրա վրա ազդող ցուցանիշները, որոնք բնութագրվում են կառավարությանը, բանկերին և պետական ձեռնարկություններին տրված վարկերի և պահուստային ակտիվների զուտ մեծությամբ: Որպես ներքին

⁷⁷ L.Mahadeva, P.Sinclair, How Monetary Policy Works, London and New York, 2005, p. 41.

⁷⁸ «ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներ և դրանց կիրառման մեխանիզմներ» փաստաթղթին հավանություն տալու մասին որոշում, թիվ 246 Ա, 2011.:

ակտիվներ՝ դրանց կառավարումը կախված է ԿԲ՝ կառավարությանը վարկեր տրամադրելու որոշման ազատության աստիճանից, ինչը կարող է ամբողջությամբ որոշվել կառավարության կողմից:⁷⁹

Ճիշտ է, գործառնական մակարդակում նշված ցուցանիշների՝ ԿԲ-ի կողմից կառավարման աստիճանն ավելի բարձր է, քան մյուս մակարդակներում, սակայն նույնիսկ այստեղ կան խնդիրներ, որոնք հստակ լուծում են պահանջում: ԿԲ դրամական զանգվածի, փողի առաջարկի, վերաֆինանսավորման տոկոսադրույքի մեծությունները, լինելով փոխկապակցված, կանխորոշում են ամբողջ պետության զարգացման ընթացքը: Առանց հստակ գործառնական նպատակի, որը դրամավարկային քաղաքականության հիմքն է, նվազում է վերջինիս արդյունավետությունը: Այս մակարդակի խնդիրների հստակ նախանշմամբ է միայն հնարավոր բարձրացնել հաջորդ մակարդակների կառավարման արդյունավետությունը:⁸⁰

Դրամավարկային քաղաքականության միջանկյալ նպատակը տնտեսական փոփոխական է, որը ԿԲ-ն ընտրում է որպես օբյեկտ՝ դրա նկատմամբ ամենօրյա վերահսկողություն իրականացնելու համար: Այդպես, ըստ ԿԲ-ի, խթանվում է մոնետար քաղաքականությունը: Ընդ որում, միջանկյալ նպատակը տարբերվում է իր իսկ սահմանած հիմնական նպատակներից: Տնտեսագետ Ֆրիդմենը վերջիններս անվանում է <<մոզական չորսանկյուն>>, քանի որ դրանց նկատմամբ ԿԲ-ն չի կարող իրականացնել ուղղակի վերահսկողություն, և դրանք կարող են դիտարկվել որպես սոսկ կողմնորոշիչներ ԿԲ-ի համար՝ հիմնական նպատակներին հասնելու ճանապարհին:⁸¹

Գոյություն ունեն բազմաթիվ փոփոխականներ, որոնք կարող են կատարել միջանկյալ նպատակների դեր, սակայն վերջիններիս ընտրության դեպքում անհրաժեշտ է հոգալ այն մասին, որ տվյալ միջանկյալ նպատակը հնարավորինս

⁷⁹ F.P.Bakker, Central bank Reserve Management, pub. Edward Elgar Publishing, Massachusetts, USA, 2007, pp. 12-19

⁸⁰ Նույն տեղում:

⁸¹ "Monetary Policy". Federal Reserve Board. January 3, 2006; "Monetary and Exchange Rate Policies". Handbook of Development Economics, Elsevier. 2010; B.M. Friedman, "Monetary Policy," Abstract.". International Encyclopedia of the Social & Behavioral Sciences. 2001. P. 357.

կապված լինի «մոգական չորսանկյան» հիմնական նպատակների հետ: Միջանկյալ նպատակը պետք է բավարարի ստորև բերվող պայմանները.

- Հիմնական նպատակների համաձայնեցվածություն. ԿԲ-ն մտածում է միջանկյալ նպատակներին հասնելու մասին այնքանով, որքանով դրանք կօգնեն դրամավարկային քաղաքականության հիմնական նպատակների իրագործմանը:
- Չափելիություն. փոփոխականը, որն ընտրվել է որպես միջանկյալ նպատակ, ընդունելի է համարվում, եթե այն կարելի է ճիշտ և ժամանակին չափել:
- Ճիշտ ժամանակ. ԿԲ-ն միջանկյալ նպատակի մասին հավաստի տեղեկատվություն պետք է ստանա ճիշտ ժամանակին:
- Կառավարելիություն. ԿԲ-ն պետք է հնարավորություն ունենա ազդելու որպես միջանկյալ նպատակ ընտրված փոփոխականի մեծության վրա:⁸²

Դրամավարկային քաղաքականության ոլորտում ԿԲ յուրաքանչյուր միջոցառում կարող է ստանալ ոչ միանշանակ արձագանք տնտեսական համակարգում, ինչը պետք է հաշվի առնել միջանկյալ նպատակ ընտրելիս:

Սակայն, պետք է նշել, որ անցումային շրջանում առավել նպատակային է երկակի թիրախավորման քաղաքականության՝ ինֆլացիայի և փողի ագրեգատների ռեժիմի ընտրությունը: Այս համակցության թիրախավորմամբ ԿԲ-ն պարտավոր է ավելացնել շրջանառությունում գտնվող փողի քանակությունն ամեն անգամ, երբ գների մակարդակն իջնում է և, համապատասխանաբար, կրճատել դրամական զանգվածը գների մակարդակի բարձրացման դեպքում:

Գների մակարդակի կայունության ապահովումը, որպես դրամավարկային քաղաքականության միջանկյալ նպատակ, զերծ չէ թերություններից: Դրանցից էական է այն, որ ԿԲ-ն ինքը կարող է խթանել գների մակարդակի բարձրացումը՝ կտրուկ կրճատելով դրամական առաջարկի զանգվածը և դրանով իսկ սրելով տնտեսական ճգնաժամը:

Միջանկյալ նպատակները դրամական ագրեգատներ են, որոնց վրա ԿԲ-ն ազդեցություն է գործում՝ իրագործելով գործառնական նպատակները:

⁸² ՀՀ կենտրոնական բանկի կողմից գնաճի նպատակադրման ռազմավարության ընդունման հիմնավորում. 2006, www.cba.am, ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջ:

Դրանք ներկայացնում են փողի ամբողջ զանգվածը և դրա արդյունավետ կառավարումը:⁸³

Հիմնական նպատակները, ի տարբերություն գործառնականի և միջանկյալի, ամրագրված են օրենսդրությամբ: Դրամավարկային քաղաքականության առաջնային կամ հիմնական նպատակները համապատասխանում են <<մոգական չորսանկյան>> կողմնորոշիչներին, որոնք են.

1. գների մակարդակի կայունացում (ինֆլյացիայի %),
2. լրիվ զբաղվածության ապահովում (գործազուրկների %),
3. հավասարակշռված և կայուն տնտեսական աճ (ՀՆԱ աճ),
4. արտաքին տնտեսական կայունություն (հավասարակշռված վճարային հաշվեկշիռ):

Կառավարությունն ամեն տարի հստակեցնում է վերոնշյալ տնտեսական կողմնորոշիչների էությունը: Պետք է նշել, որ դրամավարկային քաղաքականության առաջնային նպատակների ճիշտ ձևակերպմամբ է պայմանավորված երկրի տնտեսական զարգացման մակարդակը:⁸⁴

Հատկապես զարգացող պետություններում, հիմնական նպատակներից բացի, ԿԲ-ն պետք է հատուկ ուշադրություն դարձնի գործառնական և միջանկյալ նպատակների արդյունավետ իրականացմանը: Նման քաղաքականությամբ կառույցը կարող է ազդել ինչպես գնաճի և փոխարժեքի, այնպես էլ ՀՆԱ իրական աճի վրա (վերջինիս վրա ազդեցությունն ավելի փոքր): Միջանկյալ և հիմնական նպատակների կապն առաջին հերթին կախված է փողի շրջանառության արագությունից: Եթե վերջինս կայուն է կամ կանխատեսվող, ապա կարելի է համարել, որ դրամավարկային քաղաքականության կառավարման արդյունավետության աստիճանը բարձր է հիմնական նպատակների իրականացման մեջ, և դա չի կատարվում ի հաշիվ այլ ցուցանիշների ոչ արդյունավետ կառավարման:

Եթե փողի շրջանառության արագության փոփոխությունը տեղի է ունենում ժամանակի անկանոն հատվածներում՝ պատահականորեն, ինչպես գնաճի և այլ


⁸³Փողի ագրեգատների էությունը և կիրառման շրջանակները,

http://www.cba.am/Storage/AM/downloads/parberakan/statistics/dram_fin_manual/agreg.pdf

⁸⁴Ա. Ա. Հովհաննիսյան, Ա. Խ. Գեղեղնյան, Փողը և դրամավարկային քաղաքականության հիմնահարցերը, ուսումնական ձեռնարկ: Տե՛ս աղյուսակ 5 (Հավելվածներ՝ էջ 263):

դրամավարկային ցուցանիշների անկանոն, սեզոնային փոփոխության դեպքում է, ապա դրամավարկային քաղաքականությունը, նախևառաջ, պետք է համապատասխանի ընդհանուր մակրոտնտեսական նպատակների իրականացմանը և չհակասի դրանց:⁸⁵

Հաշվի առնելով շուկայական և դրամավարկային քաղաքականության կառավարման բոլոր նպատակային մակարդակները՝ ստորև ներկայացրել ենք ԿԲ տոկոսադրույքի (ռեպո) և գնաճի պատճառահետևանքային կապերը կատարյալ ձգտող շուկայական պայմաններում:⁸⁶



Գծապատկեր 4. ԿԲ տոկոսադրույքի (ռեպո) ազդեցությունը գնաճի վրա կատարյալ շուկայական տնտեսության պայմաններում⁸⁷

Գնաճի նպատակադրումը նշանակում է, որ իշխանությունները հաստատում են վերջինիս ծրագրային մակարդակը և օգտագործում բոլոր միջոցները դրան հասնելու

⁸⁵ M.Stone, The role of the Exchange Rate in Inflation-Targeting Emerging Economics, International monetary fund, Washington DC, 2009, pp. 29-33.

⁸⁶ N.Gottfries, Macroeconomics, published by Palgrave Macmilan LLC, 2013, pp. 82-91.

⁸⁷Աղյուսակը կազմել է հեղինակը: Տվյալներն ըստ՝ N.Gottfries, Macroeconomics, published by Palgrave Macmilan LLC, 2013, pp. 82-91:

համար: Գնաճի նպատակադրման ռազմավարության հիմքում ԿԲ-ի կողմից գնաճի որոշակի մակարդակի, գների կայունության պահպանումն է, իսկ մնացյալ բոլոր նպատակները, որոնք չեն համընկնում դրա հետ, քննարկման ենթակա չեն, ինչն էլ կարելի է համարել ԿԲ թերություններից մեկը:⁸⁸

Ինչպես վերը նշվեց, կայուն տնտեսական աճն ուղեկցվում է որոշակի ցածր գնաճով, այսինքն՝ «գների կայունություն» հասկացության ներքո պետք է հասկանալ գնաճի որոշակի բնականոն մակարդակ: Հետևաբար՝ երկարաժամկետ հատվածում կայուն տնտեսական աճ ապահովելու նկատառումով յուրաքանչյուր կենտրոնական բանկ նպատակադրում է գնաճի որոշակի ցածր մակարդակ: Ընդ որում, տարբեր երկրներում այդ ցուցանիշը տարբեր է՝ տատանվելով 2-6%-ի սահմաններում: Սակայն, հարկ է նշել, որ որոշ երկրներում նույնիսկ տարեկան 4-5% գնաճի արձանագրումը մտահոգությունների տեղիք է տալիս տնտեսական աճի ապահովման առումով, և կենտրոնական բանկերը հետևողականորեն նվազեցնում և կայունացնում են գնաճի տեմպերը՝ չեզոքացնելով բարձր գնաճի սպասումները, ապահովելով գների կայունություն:⁸⁹

Գնաճի նպատակադրման քաղաքականության էությունը հետևյալն է. նախ՝ ԿԲ-ն հրաժարվում է դրամական բազայի և դրամական զանգվածի ցուցանիշների ուղղորդումից, քանի որ, որոշակի պատճառներից (փողի պահանջարկի տատանողականություն, փողի զանգվածում կառուցվածքային փոփոխություններ, արտաքին շուկեր և այլն) ելնելով, այդ ցուցանիշները տարվա ընթացքում պարբերաբար վերանայվում են: Այդ պարագայում ԿԲ-ն գնաճի կառավարման ազդակները շուկայի մասնակիցներին է «հաղորդում» առավելապես վերաֆինանսավորման տոկոսադրույքների տեսքով՝ այդպիսով ձևավորելով համապատասխան սպասումներ: Գնաճի վրա ազդելու ժամանակահատվածը մեկ տարին է:⁹⁰

⁸⁸ ՀՀ կենտրոնական բանկի կողմից գնաճի նպատակադրման ռազմավարության ընդունման հիմնավորում. 2006, www.cba.am, ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջ:

⁸⁹ ՀՀ ԿԲ կանխատեսման և քաղաքականության վերլուծության համակարգը, 2010, էջ 7-17 <http://www.cba.am>: ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջ:

⁹⁰ ՀՀ կենտրոնական բանկի կողմից գնաճի նպատակադրման ռազմավարության ընդունման հիմնավորում. 2006, www.cba.am ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջ:

Մինչ 1990 թ. դրամավարկային քաղաքականության հիմքում փոխարժեքի նպատակադրումն էր, սակայն սկիզբ առած ճգնաժամի ընթացքում ամրագրված փոխարժեքի հետևանքով արձանագրվեցին մեծ քանակությամբ սպեկուլյացիաներ, որոնք բազմաթիվ պետություններում կտրուկ կերպով անդրադարձան տվյալ քաղաքականության արդյունավետության վրա: Ուստի անհրաժեշտություն առաջացավ հանրության դրամավարկային քաղաքականության ակնկալիքներն ամրագրել մեկ այլ ցուցանիշի՝ գնաճին:

Ինչ վերաբերում է գնաճի նպատակադրման քաղաքականությանը, մի շարք հետազոտողների, այդ թվում՝ ԱՄՆ Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Զ. Ֆրանկելի կարծիքով⁹¹ դրա ամենաակնհայտ թերությունը, թերևս, ի հայտ եկավ 2008 թ. սկիզբ առած համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ընթացքում որպես տնտեսական առաջարկի և առևտրային ցնցումների ոչ ճշգրիտ արձագանք:

Ակնհայտ է, որ դրամավարկային քաղաքականության արդյունավետությունն անհամեմատ ավելի բարձր է լինում, երբ դրա կիզկետում ոչ միայն սպառողական ծախսերի աճն է, այլև տնտեսության արտադրական ծախսերի փոփոխությունը: Տնտեսական կառավարման արդյունավետություն ապահովելու նպատակով յուրաքանչյուր պետություն, նախևառաջ, պետք է ձգտի համապատասխան քաղաքականության իրականացմամբ երաշխավորել արտադրական հատվածի կայուն և երկարաժամկետ աճ՝ գնաճը պահելով համապատասխան նվազագույն մակարդակի վրա:⁹²

Անդրադառնալով գնաճի և փոխարժեքի փոխկապվածությանը, պետք է նշել, որ ՀՀ մակրոտնտեսական քաղաքականության հիմքում լողացող փոխարժեքի սկզբունքն է, իսկ կենտրոնական բանկի՝ փոխարժեքի կանխատեսումների հիմքում՝ փոխարժեքի անփոփոխ (որոշակի պահի դրությամբ) մակարդակի պահպանման ենթադրությունը:⁹³ Ուստի ակնհայտ է, որ ՀՀ ԿԲ-ն չի իրականացնում փոխարժեքին վերաբերող կանխատեսումներ, այնինչ դրա տատանումները էական ազդեցություն ունեն բյուջեի

⁹¹ J. Frankel, The Death of Inflation Targeting, Cambridge, 2012, p. 16.

⁹² U. Bindseil, Monetary policy: Operations and the Financial System, Oxford university press, 2014, p.36.

⁹³ ՀՀ ԿԲ կանխատեսման և քաղաքականության վերլուծության համակարգը, 2010, էջ 7-17, <http://www.cba.am>: ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջ:

եկամուտների, մասնավորապես՝ սահմանին գանձվող հարկային եկամուտների և ծախսերի վրա՝ պետության կողմից ներմուծվող ապրանքների գնման մասով:

Համաշխարհային տնտեսական միտքն արդեն երկար ժամանակահատված մտահոգություն է հայտնում փոխարժեքի տնտեսական շուկերի կլանման արդյունավետության վերաբերյալ:⁹⁴ Որպես կանոն, գնաճի հետևողականորեն զսպման քաղաքականությամբ տնտեսություններն արժևորում են փոխարժեքը, այսինքն՝ ազգային արժույթի գնողունակությունը մեծանում է արտարժույթի համեմատությամբ: Սակայն դա չի կարելի վերագրել զարգացած տնտեսություններին (Ճապոնիա, Գերմանիա, Շվեյցարիա, ԱՄՆ, Կանադա), որոնք վերջին տասնամյակների ընթացքում ապահովել են գնաճի ցածր մակարդակ՝ և ոչ փոխարժեքի արժևորման հաշվին: Բարձր գնաճ արձանագրող տնտեսություններում գործնականում հաճախացել է փոխարժեքի արժևորումը, ինչը սովորաբար ուղեկցվում է բանկային վարկերի բարձր տոկոսադրույքներով:

Կենտրոնական բանկերը դրամավարկային քաղաքականություն իրականացնելիս կիրառում են բազմաբնույթ գործիքներ, որոնցից են վերաֆինանսավորման քաղաքականությունը, գործառնությունները բաց շուկայում, առևտրային բանկերի ավանդների պարտադիր պահուստավորումը և այլն:

Այսպիսով՝ դրամավարկային քաղաքականության կարևոր և ամենահաճախակի օգտագործվող գործիքներից հիմնականը վերաֆինանսավորումն է, որը ենթադրում է ռեպո գործարքների իրականացում: Այս գործիքի միջոցով առևտրային բանկերը սահմանված գնով կենտրոնական բանկին (վերջինիս նախաձեռնությամբ) են վաճառում պարտատոմսեր՝ գործարքի մարման ամսաթվին դրանք հետ գնելու և սահմանված տոկոսագումար վճարելու պարտավորությամբ, իսկ կենտրոնական բանկը սեփականության իրավունքով ձեռք է բերում պարտատոմսեր՝ մարման ամսաթվին դրանք հետ վաճառելու պարտավորությամբ: Ընդ որում, ԿԲ-ն նշված գործարքներն իրականացնում է աճուրդի միջոցով, 7-օրյա ժամկետում և բացառապես այն բանկերի հետ, որոնց հետ կնքել է համապատասխան համաձայնագրեր:

⁹⁴ Sebastian Edwards, The Relationship Between Exchange Rates and Inflation Targeting Revisited, Central Bank of Chile Working Papers, N 409, 2006; Sebastian Edwards, Eduardo Levy Yeyati, "Flexible Exchange Rates as Shock Absorbers" European Economic Review 49, 2005, p. 237.

Կենտրոնական բանկի կողմից ներարկվող դրամի ծավալը մտապահվում է: Այն դեպքում, երբ բանկերի ներկայացրած պահանջարկը գերազանցում է կենտրոնական բանկի մտապահած ծավալը, դա կարող է բավարարվել մասնակիորեն: Գործիքի կիրառումը հանգեցնում է իրացվելիության մակարդակի ավելացմանը:⁹⁵

Այսպես, օրինակ, 2016 թ. չորրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ ԿԲ-ն շարունակաբար մեղմել է դրամավարկային պայմանները, իսկ ԿԲ խորհուրդը նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին վերաֆինանսավորման տոկոսադրույքն իջեցրել է 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով 6.25%:⁹⁶ Տոկոսադրույքի իջեցումը հիմնավորվել է գնաճային սպասումների շարունակվող նվազմամբ, ինչպես նաև գնանկումային որոշ ռիսկերի առարկայացմամբ: Միաժամանակ, ԿԲ խորհուրդը ազդակ է հաղորդել ֆինանսական շուկայի մասնակիցներին՝ եռամսյակի ընթացքում ֆինանսական շուկայի տոկոսադրույքների զգալի չափով նվազեցման և երկրի ռիսկ-հավելավճարի՝ ԿԲ գնահատած մակարդակին հասնելու մասին, որը, ըստ էության, զարգացող երկրների համար տոկոսադրույքի ստորին սահման է համարվում:⁹⁷ ԿԲ խորհրդի բնորոշմամբ՝ իրականացված դրամավարկային քաղաքականությունը բավարար խթաններ է ձևավորել 2017 թ. գնանկումային միջավայրի հաղթահարման և կանխատեսվող հորիզոնում գնաճի նպատակային ցուցանիշի իրագործման համար: Մի կողմից, ԿԲ վարած քաղաքականության շնորհիվ, տոկոսադրույքի աստիճանական նվազումը, մյուս կողմից՝ բանկերի կապիտալի ավելացումն ու ներգրաված արտարժույթային միջոցների դիմաց պարտադիր պահուստավորման նորմայի իջեցումը եռամսյակի ընթացքում հանգեցրել են ֆինանսական շուկայում տոկոսադրույքների զգալի նվազման: Առկա զարգացումներով պայմանավորված՝ նշված ժամանակահատվածում փոքր է եղել պահանջարկը ԿԲ ռեպո գործիքի միջոցով առաջարկվող իրացվելիության նկատմամբ, ավելին՝ բանկերը հաճախ դիմել են ԿԲ կողմից միջոցների ներգրավման մշտական հնարավորության գործիքին: Արդյունքում ԿԲ հիմնական գործիքի՝ յոթնօրյա ռեպո համաձայնագրերի ծավալները բավական փոքր են եղել, իսկ միջին եռամսյակային տոկոսադրույքը, նախորդ եռամսյակի համեմատ, նվազել է 0.81 տոկոսային կետով և

⁹⁵ «ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներ և դրանց կիրառման մեխանիզմներ» փաստաթղթին հավանություն տալու մասին որոշում, թիվ 246 Ա, 2011:

⁹⁶ ՀՀ ԿԲ 2015-2017 թթ. ռազմավարություն, www.cba.am

⁹⁷ Նույն տեղում:

կազմել 6.54%: Դեկտեմբերին միջին ամսական տոկոսադրույքը սեպտեմբերի համեմատ նվազել է 0.74 տոկոսային կետով և կազմել 6.38%: 2016 թ. չորրորդ եռամսյակում միջբանկային ռեպո տոկոսադրույքի միջին եռամսյակային ցուցանիշը նվազել է 1.08 տոկոսային կետով և կազմել 6.19%, իսկ դեկտեմբերին միջին ամսական տոկոսադրույքը 5.79%՝ սեպտեմբերի համեմատ նվազելով 1.22 տոկոսային կետով:⁹⁸

Կենտրոնական բանկի գործառույթներից է «ծայրահեղ դեպքերում» փոխառություն տալը: Իրականացնելով նման դեր՝ ԿԲ-ն կարճաժամկետ վարկեր է տրամադրում առևտրային բանկերին: Կարևոր է արձանագրել, որ առևտրային բանկերը, որոնք վարկ են վերցնում ԿԲ-ից, մեծացնում են իրենց պահուստները՝ դրանով իսկ ընդլայնելով բնակչության վարկավորման հնարավորությունը: Պետք է ասել, որ տոկոսադրույքի աճը սահմանող գործառույթ ունի. դա նպաստում է, որ բանկերը խուսափեն իրենց լրացուցիչ պահուստները ցածր մակարդակի հասցնելուց: Ուստի հաշվարկային նորմայի աճը հանգեցնում է նրան, որ դրամավարկային քաղաքականությամբ սահմանվում է փողի առաջարկը: Դրան հակառակ, տոկոսադրույքի նվազումը խթանում է գործառնությունների աճը, այսինքն՝ խրախուսում է ավելցուկային պահուստների ձեռքբերումը⁹⁹:

2016 թ. ՀՀ առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի և ներգրավված ավանդների տոկոսադրույքների վերլուծությունից պարզ է դառնում, որ չորրորդ եռամսյակում դրամավարկային պայմանների շարունակական մեղմումը, ֆինանսական շուկայի տոկոսադրույքների նվազեցումը զգալի ազդեցություն են թողել առևտրային բանկերի ներգրավված և տրամադրված միջոցների տոկոսադրույքների վրա: Այսպես՝

2016 թ. դեկտեմբերին դրամային ավանդների 12-ամսյա աճը կազմել է 32.6%, իսկ արտարժույթային ավանդներինը՝ 11.2%: Դրամային ավանդների առաջանցիկ աճը պայմանավորված է եղել գնաճային սպասումների նվազմամբ, ինչն էլ հանգեցրել է դոլարայնացման մակարդակի նվազման՝ 12 ամիսների ընթացքում 3 տոկոսային կետով, իսկ դոլարայնացման մակարդակը՝ արտարժույթային ավանդներ-փողի զանգված հարաբերությունը, կազմել է 59.9% (նախորդ տարվա համեմատ նվազելով

⁹⁸ ՀՀ ԿԲ 2015-2017 թթ. ռազմավարություն, www.cba.am

⁹⁹ «ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներ և դրանց կիրառման մեխանիզմներ» փաստաթղթին հավանություն տալու մասին որոշում, թիվ 246 Ա, 2011:

4.1 տոկոսային կետով): Եռամսյակի ընթացքում վարկավորման տոկոսադրույքները նվազել են հիմնականում բոլոր վարկատեսակների մասով, և վարկավորման ընդհանուր ծավալի 12-ամսյա աճը 2016 թ. դեկտեմբերին կազմել է 6.02%: Վարկավորման ընդհանուր կառուցվածքում շարունակում են գերակշռել արտարժույթով տրամադրված վարկերը՝ շուրջ 62% (նախորդ եռամսյակի համեմատ նվազել են շուրջ 2%-ով):¹⁰⁰

Կենտրոնական բանկի կողմից օգտագործվող միջոցներից է նաև դրամավարկային քաղաքականության սելեկտիվ կամ մասնակի մեթոդը, որը վերաբերվում է ֆոնդային բորսային, ապառիկ գնմանը և հորդորմանը: Ֆոնդային բորսայի տապալումը կարող է տնտեսությանը լուրջ խնդիրներ առաջադրել: Այդ տապալումը կանխելու նպատակով ԿԲ-ն իրավունք ունի սահմանելու օրենքով նախատեսված մարժա կամ սկզբնական վճարման նվազագույն տոկոս, որը պետք է մուծի արժեթղթերի գնորդը:¹⁰¹ Ժամանակ առ ժամանակ ԿԲ-ն որոշակի սահմանափակումներ է դնում սպառողական վարկի վրա:

Գործառնությունները բաց շուկայում փողի զանգվածի կարգավորման քաղաքականության արդյունավետության բարձրացման գործիք են: Վերջինիս գործողության մեխանիզմը հիմնված է պետական արժեթղթերի, բանկային հոժարագրերի և այլ վարկային պարտավորությունների գնման և վաճառքի վրա:

Բաց շուկայական գործառնություններն իրականացվում են ոչ թե շուկայական տոկոսադրույքներով, այլ նախապես որոշված կուրսով: Տոկոսադրույքներն առաջադրվում են ԿԲ-ի կողմից՝ ելնելով պետական արժեթղթերի ժամկետայնությունից: Այսպես՝ եթե անհրաժեշտ է ընդլայնել փողի զանգվածը, ԿԲ-ն հրահանգ է տալիս ձեռք բերել պետական արժեթղթեր, այսինքն՝ իրականացնել գնումներ բաց շուկայում, իսկ դրա կրճատման դեպքում՝ վաճառել արժեթղթեր:

Պարտադիր պահուստավորման քաղաքականությունը, իբրև երկրի տնտեսության դրամավարկային կարգավորման գործիք, ԿԲ կողմից կիրառվող առավել գործուն միջոցներից է, որով նա ազդում է բանկերի կանխիկ փողի

¹⁰⁰ ՀՀ կենտրոնական բանկ, Գնաճի հաշվետվություն՝ հաստատված ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. 46Ա որոշմամբ:

¹⁰¹ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ ունեցող գործարքների կնքման համար պարտատոմսերի սկզբնական մարժայի և շեմի հաշվարկման և հրապարակման մեթոդաբանություն, www.cba.am

ռեսուրսների ծավալի և վարկային հնարավորությունների վրա: Դա կարելի է դասել փողի շուկայի վրա պետության ազդեցության ուղղակի, վարչական մեթոդների շարքը:¹⁰²

ԿԲ-ն, առևտրային բանկերից պահանջելով ակտիվները պահել պահուստների տեսքով, նախևառաջ կանխարգելում է անշրջահայաց բանկիրների կողմից փոխատվությունների գերընդարձակման և ավանդատուներին անհարմար վիճակի մեջ գցելու իրադրությունների ի հայտ գալը: Պահուստավորման նորմաների նկատմամբ վերահսկողությունը կարևոր է նաև մեկ այլ պատճառով. փոփոխելով պահուստավորման նորման՝ ԿԲ-ն կարող է ազդել փողի առաջարկի վրա: Ակնհայտ է, որ պահուստավորման նորմայի աճը մեծացնում է այն անհրաժեշտ պահուստների քանակը, որ պետք է պահվի բանկում: Եվ հակառակը, պահուստավորման նորմայի նվազեցման պարագայում պարտադիր պահուստները վերածվում են ավելցուկների՝ այդպիսով մեծացնելով բանկերի՝ փոխատվություն տրամադրելու կարողությունը, որի դեպքում փողի առաջարկն աճում է:

Այսպիսով՝ պահուստավորման նորմայի փոփոխությունը բանկային համակարգի՝ փող ստեղծելու ունակության վրա ազդում է հետևյալ երկու եղանակներով ¹⁰³

- 1) ազդեցություն ավելցուկային պահուստների չափի վրա,
- 2) ազդեցություն դրամական բազմապատկչի մեծության վրա:

Պահուստավորման նորմայի նույնիսկ չնչին փոփոխությունը որոշ դեպքերում կարող է հանգեցնել փողի առաջարկի մեծ փոփոխության:

Աղյուսակ 3-ում ներկայացված է ՀՀ միջազգային պահուստների տարեկան վիճակն ու կազմը:

¹⁰² «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ. 2, հաստատվել է ՀՀ ԿԲ խորհրդի 39 Ն որոշմամբ, 2007:

¹⁰³ Ա. Ա. Հովհաննիսյան, Ա. Ս. Գեդեոնյան, Փողը և դրամավարկային քաղաքականության հիմնահարցերը, ուսումնական ձեռնարկ, Երևան, ԵրՃՇՊՀ հրատ., 2009, էջ 129:

«ՀՀ միջազգային պահուստների տարեկան վիճակն ու կազմը
2013-2016 թթ. (մլն ԱՄՆ դոլար)

Ցուցանիշներ	2013	2014	2015	2016
Տարեսկիզբ				
Զուտ արտաքին ակտիվներ	1067	1606	920	1175
Տարեվերջ				
Զուտ արտաքին ակտիվներ	1606	920	1175	1579

Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել.

- Դրամավարկային քաղաքականության էությունն այն է, որ կենտրոնական բանկը, դրամավարկային համապատասխան գործիքների միջոցով իրականացնելով դրամական զանգվածի քանակական փոփոխություններ, փորձում է ներգործել տնտեսական աճի տեմպերի, փողի զանգվածի և հասարակության գործարար ակտիվության վրա:
- ԿԲ դրամավարկային քաղաքականության մեջ կիրառվող կարևոր գործիքներից մեկը հիմնական վերաֆինանսավորումն է, որի օգնությամբ իրականացվում են ռեպո գործարքներ՝ կարճաժամկետ իրացվելիություն ապահովելու նպատակով:
- Փողի զանգվածի կարգավորման քաղաքականության արդյունավետության բարձրացման գործիք են համարվում գործառնությունները բաց շուկայում:
- Պարտադիր պահուստավորման քաղաքականությունը, իբրև երկրի տնտեսության դրամավարկային կարգավորման գործիք, ԿԲ կողմից կիրառվող առավել գործուն միջոցներից է, որով նա ազդում է բանկերի կանխիկ փողի ռեսուրսների ծավալի և վարկային հնարավորությունների վրա: Դա կարելի է

¹⁰⁴ Աղյուսակը կազմել է հեղինակը՝ ըստ «ՀՀ միջազգային պահուստների վիճակը և կազմը» ամփոփ տեղեկագրի տվյալների, www.cba.am

դասել փողի շուկայի վրա պետության ազդեցության ուղղակի, վարչական մեթոդների շարքը:

2.2. ՀՀ ԿԲ գնաճի նպատակադրման քաղաքականության արդյունավետությունը և սեզոնային գնաճի դինամիկայի գնահատումը

ՀՀ դրամավարկային քաղաքականության իրականացման ընթացքը կարելի է բաժանել չորս հիմնական փուլերի: Անդրադառնանք դրանցից յուրաքանչյուրին՝ առանձին-առանձին:¹⁰⁵

Առաջին փուլը՝ 1991-1993 թթ., համարվում է դրամավարկային քաղաքականության նախադրյալների ձևավորման ժամանակաշրջան: Այդ անցումնային փուլն աչքի ընկավ գնաճի նշանակության շրջադարձային փոփոխությամբ, ինչը պահանջում էր դրա նկատմամբ սկզբունքորեն նոր մոտեցում և դրա դեմ պայքարի արդյունավետ կառուցակարգերի ներդրում:¹⁰⁶ Նշված ժամանակահատվածում նորանկախ հանրապետությունում գնաճն ամենացածր մակարդակում էր՝ պայմանավորված երկու կարևոր հանգամանքներով:

Առաջին հանգամանքն ազգային արժույթի ներդրման գործընթացի ուշացումն էր: Բանն այն է, որ ԱՊՀ այն բոլոր երկրները, որոնք արդեն հասցրել էին թոթափել խորհրդային լուծը, սեփական դրամական միավորների ստեղծմամբ ռուբլին հանում էին շրջանառությունից, և այդ փողի հոսքն ամբողջությամբ ուղղվում էր այն երկրներ, որոնք դեռևս Խորհրդային Միության կազմում էին խորհրդային, այդ թվում՝ նաև Հայաստան: Տվյալ գործընթացը հանգեցրեց ՀՀ-ում կանխիկ ռուբլու զգալի քանակի կուտակման, հետևաբար՝ գնաճի ցածր մակարդակի:

¹⁰⁵ ՀՀ կենտրոնական բանկի կողմից գնաճի նպատակադրման ռազմավարության ընդունման հիմնավորում, www.cba.am

¹⁰⁶ Ժ. Մխիթարյան, Դրամավարկային քաղաքականությունը Հայաստանում՝ ծագումից մինչև մեր օրերը, ԵՊՀ ՈԻԳԸ գիտական հոդվածների ժողովածու: ԵՊՀ հիմնադրման 95-ամյակին նվիրված հորեյանական գիտական նստաշրջանի նյութեր, 1.7 (10), խմբ. խորհուրդ՝ Ա. Մկրտիչյան, Մ. Միքայելյան, Ս. Ղանթարջյան, Թ. Թորոսյան, Ա. Առաքելյան, Է. Հարությունյան, Ս. Զաքարյան, Հ. Ավանեսյան, Դ. Պետրոսյան, Մ. Հովսեփյան, Հ. Մնացականյան, Ն. Մելքոնյան, Ա. Խաչատրյան Հ. Հովհաննիսյան, Վ. Միքայելյան, Ն. Խաչատրյան, Երևան, ԵՊՀ հրատարակչություն 2015, էջ 61-69:

Երկրորդ հանգամանքը գների ազատականացումն էր, որը, առաջին հանգամանքի հետ մեկտեղ, աննախադեպ գերգնաճի առաջացման պատճառ դարձավ:¹⁰⁷ Դրա գագաթնակետը 1993 թ. էր, երբ գներն աճեցին շուրջ 110 անգամ¹⁰⁸ չափազանց բացասական ազդեցություն ունենալով ՀՀ սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա. մասնավորապես՝ արժեզրկվեցին բնակչության միլիարդավոր դոլարների հասնող խնայողությունները, 1990-1994 թթ. անվանական եկամուտներն աճեցին 1367, սպառողական գները՝ 22111 անգամ՝ հանգեցնելով բնակչության գնողունակության 16-ապատիկ անկման:¹⁰⁹

Այսպիսով՝ նշված ժամանակահատվածում անհրաժեշտություն դարձավ պատշաճ դրամավարկային քաղաքականության իրականացումը, ինչը, որպես ԿԲ հիմնական գործառույթներից մեկը, ամրագրվեց 1993 թ. ՀՀ Գերագույն խորհրդի ընդունած՝ «ՀՀ կենտրոնական բանկի մասին» օրենքի 3-րդ հոդվածում:¹¹⁰

Ըստ վերոնշյալի՝ կարող ենք ասել, որ ՀՀ-ում 1993 թ., ազգային արժույթի ներդրմամբ պայմանավորված, առաջին անգամ սկսեց իրականացվել դրամավարկային անկախ քաղաքականություն, որը մինչև հնարավոր չէր խորհրդային ռուբլու շրջանառության պատճառով:¹¹¹

Միաժամանակ, տնտեսական քաղաքականության գերակայություններից դարձավ գնաճի կառավարումը: Այդ նպատակով 1994 թ. ՀՀ ԿԲ-ը մշակեց դրամավարկային քաղաքականության ծրագիր, որի համաձայն՝ դրամի կայունության և տնտեսության արդյունավետ գործունեությանը նպաստող դրամավարկային ու ֆինանսական պայմանների ստեղծումը դարձան առաջնահերթություններ:

¹⁰⁷ Ա. Մխիթարյան, Անցումային ժամանակաշրջանում բանկային համակարգի վերակառուցման անհրաժեշտությունը և իրականացման փուլերը: Երևան, 1998, էջ 11-12:

¹⁰⁸ Ժ. Մխիթարյան, Դրամավարկային քաղաքականությունը Հայաստանում՝ ծագումից մինչև մեր օրերը, ԵՊՀ ՈԻԳԸ գիտական հոդվածների ժողովածու, ԵՊՀ հիմնադրման 95-ամյակին նվիրված հոբելյանական գիտական նստաշրջանի նյութեր 1.7 (10), խմբ. խորհուրդ՝ Ա. Մկրտիչյան, Մ. Միքայելյան, Ս. Ղանթարջյան, Թ. Թորոսյան, Ա. Առաքելյան, Է. Հարությունյան, Ս. Զաքարյան, Հ. Ավանեսյան, Դ. Պետրոսյան, Մ. Հովսեփյան, Հ. Մնացականյան, Ն. Մելքոնյան, Ա. Խաչատրյան Հ. Հովհաննիսյան, Վ. Միքայելյան, Ն. Խաչատրյան Երևան, ԵՊՀ հրատարակչություն 2015, էջ 61-69:


¹⁰⁹ Նույն տեղում:

¹¹⁰ «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-55 օրենք, 1993:

¹¹¹ ՀՀ ԿԲ մասին, Պատմություն, Հայաստանի ֆինանսաբանկային համակարգի զարգացումները, <https://www.cba.am>, 2014:

ինչպես արդեն նշել ենք, դրամավարկային քաղաքականության ռազմավարության մշակման ժամանակ կենտրոնական բանկը սահմանում է վերջնական, միջանկյալ, գործառնական նպատակներ և դրանց վրա ներազդող համապատասխան գործիքներ¹¹² (գծապատկեր 5):

Որպես դրամավարկային քաղաքականության միջանկյալ նպատակ կարող են հանդես գալ փոխարժեքը, փողի ագրեգատները և կանխատեսվող գնաճը: Ըստ այդմ էլ տարբերում են դրամավարկային քաղաքականության երեք հիմնական ռազմավարություններ՝ փոխարժեքի նպատակադրման, փողի ագրեգատների նպատակադրման և գնաճի նպատակադրման (նպատակներին առավել մանրամասն կանդրադառնանք հաջորդ գլխում):¹¹³




Գծապատկեր 5. Դրամավարկային քաղաքականության ռազմավարությունը

ՀՀ-ում 1994 թ. որպես դրամավարկային քաղաքականության ռազմավարություն ընդունվեց փողի ագրեգատների նպատակադրումը, որի ներքո, իբրև միջանկյալ նպատակ, հանդես եկավ փողի զանգվածը, ինչը կառավարվում էր գործառնական նպատակի՝ փողի բազայի միջոցով: Սա բավական արդյունավետ ընթացք ունեցավ և թույլ տվեց արագորեն զսպել գնաճի գերբարձր տեմպը: Արդեն 1995 թ. ՀՀ-ն դարձավ երկրորդ ամենացածր (32,2%), իսկ 1996 թ.՝ ամենացածր գնաճ (5,7%) արձանագրած երկիրն ԱՊՀ-ում (գծապատկեր 6):¹¹⁴

¹¹² Ժ. Մխիթարյան, Դրամավարկային քաղաքականությունը Հայաստանում՝ ծագումից մինչև մեր օրերը, ԵՊՀ ՈԻԳԸ գիտական հոդվածների ժողովածու, ԵՊՀ հիմնադրման 95-ամյակին նվիրված հոբելյանական գիտական նստաշրջանի նյութեր 1.7 (10), խմբ. խորհուրդ՝ Ա. Մկրտիչյան, Մ. Միքայելյան, Ս. Ղանթարջյան, Թ. Թորոսյան, Ա. Առաքելյան, Է. Հարությունյան, Ս. Զաքարյան, Հ. Ավանեսյան, Դ. Պետրոսյան, Մ. Հովսեփյան, Հ. Մնացականյան, Ն. Մելքոնյան, Ա. Խաչատրյան Հ. Հովհաննիսյան, Վ. Միքայելյան, Ն. Խաչատրյան Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2015, էջ 61-69:

¹¹³ Նույն տեղում:

¹¹⁴ Նույն տեղում:



Գծապատկեր 6. Սպառողական գների ինդեքսն ԱՊՀ երկրներում 1995-1996 թթ. (%)¹¹⁵

ՀՀ-ում, իբրև դրամավարկային քաղաքականության կայացման երրորդ փուլ, կարելի է մատնանշել 1996-2005 թթ. ընկած ժամանակաշրջանը¹¹⁶՝ մասնավորապես պայմանավորված 1996 թ. «ՀՀ կենտրոնական բանկի մասին» երկրորդ օրենքի ընդունմամբ, որի համաձայն՝ «ՀՀ ԿԲ-ի հիմնական խնդիրը ՀՀ-ում գների կայունություն ապահովելն է, և եթե ԿԲ-ի մյուս խնդիրները հակասում են հիմնական խնդրին, ԿԲ-ն առաջնություն է տալիս հիմնական խնդրին և ղեկավարվում է դրա իրագործման անհրաժեշտությամբ»:¹¹⁷ Այս առումով, ուշագրավ է այն հանգամանքը, որ դրամավարկային քաղաքականության մեջ այլևս չէր նախատեսվում ուղղակի գործիքների կիրառում՝ շեշտադրելով անուղղակի գործիքների դերը:¹¹⁸ Միաժամանակ, ՀՀ ԿԲ վարչությունը նույն՝ 1996 թ. դրամը սահմանեց որպես ազատ լողացող արժույթ: Ուստի, կարելի է նշել, որ հենց այդ պահից սկսած՝ ՀՀ-ում լիարժեքորեն ներդրվեց փողի ագրեգատների նպատակադրման ռազմավարությունը,¹¹⁹

¹¹⁵ Ժ. Մխիթարյան, Դրամավարկային քաղաքականությունը Հայաստանում՝ ծագումից մինչև մեր օրերը, ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, ԵՊՀ հիմնադրման 95-ամյակին նվիրված հոբելյանական գիտական նստաշրջանի նյութեր 1.7 (10), խմբ. խորհուրդ՝ Ա. Մկրտիչյան, Մ. Միքայելյան, Ս. Ղանթարջյան, Թ. Թորոսյան, Ա. Առաքելյան, Է. Հարությունյան, Ս. Զաքարյան, Հ. Ավանեսյան, Դ. Պետրոսյան, Մ. Հովսեփյան, Հ. Մնացականյան, Ն. Մելքոնյան, Ա. Խաչատրյան Հ. Հովհաննիսյան, Վ. Միքայելյան, Ն. Խաչատրյան Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2015, էջ 61-69

¹¹⁶ Նույն տեղում:

¹¹⁷ «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, օրենք ՀՕ 69, 1996, հոդված 4:

¹¹⁸ «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, 1993:

¹¹⁹ Ժ. Մխիթարյան, Դրամավարկային քաղաքականությունը Հայաստանում՝ ծագումից մինչև մեր օրերը, ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, ԵՊՀ հիմնադրման 95-ամյակին նվիրված հոբելյանական գիտական նստաշրջանի նյութեր 1.7 (10), խմբ. խորհուրդ՝ Ա. Մկրտիչյան, Մ. Միքայելյան, Ս. Ղանթարջյան, Թ. Թորոսյան, Ա. Առաքելյան, Է. Հարությունյան, Ս. Զաքարյան, Հ. Ավանեսյան, Դ. Պետրոսյան, Մ. Հովսեփյան, Հ. Մնացականյան, Ն. Մելքոնյան, Ա. Խաչատրյան Հ. Հովհաննիսյան, Վ. Միքայելյան, Ն. Խաչատրյան Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2015, էջ 61-69:

որով պայմանավորված՝ միջին գնաճը կազմեց 2,4%:¹²⁰

Այսպիսով, կայացած դրամավարկային քաղաքականության շնորհիվ, երկնիշ տնտեսական աճի հետ մեկտեղ, գների կայունացմամբ ապահովվեց նաև մակրոտնտեսական կայունություն և տնտեսական զարգացում:

Դրամավարկային քաղաքականության իրականացման չորրորդ փուլը սկիզբ է առել է 2006 թ. և շարունակվում է առ այսօր: Համակարգի զարգացման համար իբրև այլընտրանք ընտրվեցին փոխարժեքի, նաև գնաճի նպատակադրման ռազմավարությունները: Ինչ վերաբերում է փոխարժեքի նպատակադրման ռազմավարությանը, ապա դրա կիրառումը ՀՀ-ում նպատակահարմար չէ՝ պայմանավորված մի շարք գործոններով,¹²¹ մասնավորապես՝

- անկախ դրամավարկային քաղաքականության իրականացումը կդառնա անհնար,
- առկա չէ արդյունավետ ամրակցելի արժույթ. քանի որ ՀՀ հիմնական տնտեսական գործընկերներն են Ռուսաստանը և Եվրոպական Միությունը, ԱՄՆ դոլարը չի կարող ծառայել որպես այդպիսին,
- դրամավարկային քաղաքականության մշակումն ու իրականացումն ուղեկցվում են գների կայունության ապահովմամբ, և վերջինիս «զոհաբերումը» ոչ միայն անօրինական, այլև նույնիսկ հակասահմանադրական է, ուստի, այս տեսանկյունից, փոխարժեքը չի կարող օգտագործվել որպես համապատասխան քաղաքականության ռազմավարության անվանական խարիսխ:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ ՀՀ դրամավարկային քաղաքականության զարգացման առումով միակ արդյունավետ լուծումը հանգեց գնաճի նպատակադրման ռազմավարության անցմանը,¹²² որի ներքո, որպես միջանկյալ նպատակ, արդեն

¹²⁰ ՀՀ կենտրոնական բանկի կողմից գնաճի նպատակադրման ռազմավարության ընդունման հիմնավորում, 2006, www.cba.am ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջ:

¹²¹ ՀՀ ԿԲ կողմից գնաճի նպատակադրման ռազմավարության ընդունման հիմնավորում, <https://www.cba.am/Storage/AM/downloads/DVQ/npatakadrum%20hajeren.pdf>:

¹²² Ժ. Մխիթարյան, Դրամավարկային քաղաքականությունը Հայաստանում՝ ծագումից մինչև մեր օրերը, ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, ԵՊՀ հիմնադրման 95-ամյակին նվիրված հորեյանական գիտական նստաշրջանի նյութեր 1.7 (10), խմբ. խորհուրդ՝ Ա. Մկրտիչյան, Մ. Միքայելյան, Ս. Ղանթարյան, Թ. Թորոսյան, Ա. Առաքելյան, Է. Հարությունյան, Ս. Զաքարյան, Հ. Ավանեսյան, Դ. Պետրոսյան, Մ. Հովսեփյան, Հ. Մնացականյան, Ն. Մելքոնյան, Ա. Խաչատրյան Հ. Հովհաննիսյան, Վ. Միքայելյան, Ն. Խաչատրյան Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2015, էջ 61-69:

հանդես է գալիս գնաճի կանխատեսված մակարդակը, որը կառավարվում է գործառնական նպատակի՝ կարճաժամկետ տոկոսադրույքի միջոցով:¹²³ Գնաճի նպատակադրման ցուցանիշը սպառողական գների ինդեքսի աճի տեմպն է:¹²⁴ Որպես երկրորդական գործառնական նպատակ՝ դեռևս պահպանվում է փողի բազան:

Հատկանշական է, որ նոր ռազմավարության ներքո ՀՀ դրամավարկային քաղաքականությունն ուղղվում է գնաճի կանխատեսված և ծրագրային մակարդակների միջև շեղումների վերացմանը: Որպես դրա հիմնական գործիք է սահմանվել վերաֆինանսավորման տոկոսադրույքը, իսկ իբրև գնաճի ծրագրային մակարդակ՝ 4-1,5% շեղման միջակայքը¹²⁵: ՀՀ ԿԲ-ն գնաճի նպատակադրման թափանցիկությունն ապահովելու նպատակով մշտապես հրապարակում է եռամսյակային հաշվետվություններ, արձանագրություններ տոկոսադրույքի մասին, յուրաքանչյուր ամիս տարածում մամլո հաղորդագրություններ և այլն: ԿԲ ամսական տեղեկագրերը, դրամավարկային ծրագրերն ու տարեկան հաշվետվությունները ներկայացվում են ՀՀ Ազգային ժողով:¹²⁶

Անշուշտ, անցումը գնաճի նպատակադրման ռազմավարության և դրա իրականացումը ՀՀ-ում միշտ չէ, որ հարթ են ընթացել: Այդ ճանապարհին առաջացել են մի շարք խնդիրներ, որոնցից շատերն այսօր էլ մտահոգության տեղիք տալիս: Դրանցից գլխավորն առնչվում է ֆինանսական շուկայի թերզարգացածությանը: Ոչ պակաս կարևոր են փոխանցման մեխանիզմների անկատարություններին, հարկաբյուջետային որոշ գերակայություններին, գնաճի ամբողջական մոդելի բացակայությանը, ակտիվների գների անվերահսկելիությանը վերաբերող և այլ հիմնահարցեր:¹²⁷

Գնաճի կառավարումն առավելապես իրականացվում է դրամական զանգվածի զսպամբ, և մակրոտնտեսական գրեթե բոլոր գործիքները միտված են այդ հիմնական նպատակի իրագործմանը: ՀՀ-ում առկա է գնաճի հստակ սեզոնային միտում

¹²³ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 4:


¹²⁴ ՀՀ ԿԲ-ի կողմից գնաճի նպատակադրման ռազմավարության ընդունման հիմնավորում, 2006, 16 էջ:

¹²⁵ «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, հոդված 4:

¹²⁶ «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 6:

¹²⁷ Ա.Թավադյան «Դրամավարկային քաղաքականությունը տնտեսական անվտանգության տեսանկյունից», 21-դար, Երևան, 2015թ, 80-89 էջ

(գծապատկեր 7), որը, ցավոք, մեզանում լիարժեքորեն հաշվի չի առնվում: Սակայն, իրականում, կարևորվում է ինչպես գնաճային երևույթների բազմակողմանի վերլուծությունը, այնպես էլ մակրոտնտեսական ցուցանիշների պատճառահետևանքային կապերի բացահայտումը:¹²⁸




Գծապատկեր 7. Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս¹²⁹

Հաշվի առնելով այն իրողությունը, որ Հայաստանի Հանրապետությունում սեզոնային գնաճն անդրադառնում է հիմնականում գյուղատնտեսական մթերքների վրա, գծապատկեր 7-ում արտացոլվել են դրանց գնաճի սեզոնային պատկերը և գների ինդեքսը: Քանի որ ՀՀ-ում պարենային ապրանքների, մասնավորապես՝ մրգի, բանջարեղենի և կարտոֆիլի գները տատանողական են, հետևաբար՝ ՍԳԻ հաշվարկներում չեն ներառվում: Գծապատկերից պարզ երևում է, որ հատկապես երրորդ և չորրորդ եռամսյակներում նշված մթերքների գները բարձր են, քանի որ

¹²⁸ Ա.Թավադյան «Դրամավարկային քաղաքականությունը տնտեսական անվտանգության տեսանկյունից», 21-դար, Երևան, 2015թ, 80-89 էջ

¹²⁹ Աղյուսակը կազմել է հեղինակը, տվյալներն ըստ՝ Գներ և սակագներ, www.armstat.am, էջ 91:

ծմեռային ժամանակաշրջանում շուկաներում վաճառվում են ներմուծված և ջերմոցներում աճեցրած մթերքներ:



Գծապատկեր 8. Սեզոնային գնաճը ՀՀ-ում՝ ըստ եռամսյակների¹³⁰

Ինչպես արդեն նշվել է, ՀՀ-ում գնաճի կանխատեսվող մակարդակը 4% է: Գծապատկեր 8-ից երևում է, որ տարվա ընթացքում գյուղատնտեսական ապրանքների մասով գնաճը կարող է գերազանցել ՀՀ կենտրոնական բանկի սահմանած գնաճի կանխատեսման մակարդակը՝ հասնելով 19%-ի: ՀՀ գնաճի տատանողական բնույթը դժվարացնում է տնտեսավարող սուբյեկտների կանխատեսումները բանկային տոկոսադրույքների առնչությամբ, որոն, որպես կանոն, անորոշության պայմաններում ավելի բարձր են լինում: Նման իրավիճակում բարդանում է նաև դրամական միջոցների շարժը՝ առաջացնելով անվստահության մթնոլորտ ազգային դրամի նկատմամբ և հանգեցնելով տնտեսական ակտիվության նվազման:¹³¹ Այս խնդիրներից խուսափելու համար հարկ է սահմանել գնաճի կայուն ցուցանիշ, որի պարագայում վարկային տոկոսադրույքներն ավելի ցածր կլինեն, քան այն գնաճի ցածր մակարդակի դեպքում,

¹³⁰ Աղյուսակը կազմել է հեղինակը, տվյալներն ըստ՝ Գներ և սակագներ, www.armstat.am

¹³¹ Ա. Թավադյան, Դրամավարկային քաղաքականությունը տնտեսական անվտանգության տեսանկյունից, «21-դար», Երևան, 2015, էջ 80-89:

որն անկայուն է: Հետևաբար՝ գնաճի կառավարումը պետք է լինի ճկուն՝ հաշվի առնելով գնային միտումները, սեզոնայնությունը, գների իրական վիճակը և կանխատեսումները միջազգային շուկաներում: Նույն համատեքստում կարևորվում է նաև մյուս առանցքային տնտեսական ցուցանիշների՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքի, փողայնացման մակարդակի, փոխարժեքի, միջազգային պահուստների, առևտրային հաշվեկշռի հետ կապի վերլուծությունը:¹³²

Տնտեսական ակտիվության և անվտանգության ապահովման գործում մակրոտնտեսական ցուցանիշներից կարևորվում է նաև փոխարժեքը, որի շրջանառության կարգավորումն էական նշանակություն ունի ՀՀ տնտեսության համար: Նշենք, որ 2015 թ. ՀՀ-ում արտահանումը կազմել է 1.5¹³³, իսկ ներմուծումը՝ 3.2 մլրդ ԱՄՆ դոլար:¹³⁴ Ակներև է, որ ներմուծման ծավալները գերազանցում են արտահանումը գրեթե 2 անգամ, ինչը նույնպես վկայում է գների մակարդակի՝ փոխարժեքից կախվածության մասին: ՀՀ-ն փաստացի ներմուծող երկիր է, ինչը ցանկալի չէ տնտեսական անվտանգության տեսանկյունից, քանի որ ոչ միայն մեծ է կախվածությունը ներմուծվող ապրանքների գնաճից, այլև վերջիններս կարող են մրցակցության մեջ մտնել ներքին արտադրության հետ՝ խոչընդոտելով դրա զարգացումը:

ՀՀ-ում վերաֆինանսավորման բարձր տոկոսադրույքը միայն առաջին հայացքից է զսպում գնաճը: Վերջինիս շեմի բարձրացման դեպքում նվազում են դրամաշրջանառության և շուկայի գործարքների ծավալները և արագությունը, զսպվում է պահանջարկի գնաճը, սակայն ավելի երկար կտրվածքով դա նպաստում է ծախսերի գնաճին:¹³⁵ Այս գործոնը հակառակ ազդեցություն է գործում շեմի իջեցման դեպքում: Հարկ է նշել, որ նույնիսկ կատարյալ շուկայական պայմաններում վերաֆինանսավորման տոկոսադրույքի ազդեցությունը գնաճի վրա միանշանակ չէ: Ընդ որում, դրա աճն արդարացված է կարճ ժամանակահատվածում, քանի որ

¹³²Ա. Թավադյան, Դրամավարկային քաղաքականությունը տնտեսական անվտանգության տեսանկյունից, «21-դար», Երևան, 2015, էջ 80-89:


¹³³ Ժամանակագրական շարքեր, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, <http://armstat.am/am/?nid=126&id=10003>

¹³⁴ ՀՀ մաքսային ծառայության տվյալների բազա:

¹³⁵ Ա.Թավադյան, Դրամավարկային քաղաքականությունը տնտեսական անվտանգության տեսանկյունից, հոդված, «21-րդ դար», թիվ 6(64) 2015, էջ 80-90:

մեղմվում է պահանջարկը և հետևաբար՝ գնաճի մակարդակը, հաղթահարվում են չնախատեսված ճգնաժամային ռիսկերը: Երկարաժամկետ կտրվածքով՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքը զսպում է շուկան և կարող է առաջացնել ծախսածին գնաճ:¹³⁶

Եվս մեկ նկատառում. վերաֆինանսավորման բարձր տոկոսադրույքը և շուկայում փողի զանգվածի անբավարարությունն առաջացնում են սեփական միջոցների պակասուրդ ՀՀ տնտեսավարող սուբյեկտների շրջանում, որը չափազանց դժվար է լրացնել բանկային՝ նույնքան բարձր տոկոսադրույքների պարագայում: Դա նպաստում է գնաճի մակարդակի նվազեցմանը, սակայն ՀՀ-ում դրա և գնաճի միջև կապը թուլացել է, քանի որ այստեղ շուկայի կախվածությունն արտարժույթի փոխարժեքից բավական մեծ է: Միաժամանակ, վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձրացումը հանգեցնում է տնտեսական ակտիվության իջեցմանը:



Գծապատկեր 9.¹³⁷ Դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքները

ՀՀ ԿԲ-ն 2016 թ. վերաֆինանսավորման տոկոսադրույքը նվազեցրեց միանգամից 0.5%-ով և սահմանեց 6.75%: Դա նշանակում է, որ առևտրային բանկերը

¹³⁶ Նույն տեղում, էջ 80-89:

¹³⁷ Կենտրոնական բանկի տվյալների բազա, Դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքներ, www.cba.am

կարող են վերցնել էժան վարկեր ԿԲ-ից և հետևաբար՝ նվազեցնել տնտեսավարողներին տրվող վարկերի տոկոսները: Այսպես կխթանվի տնտեսական ակտիվությունը: Բայց, որքան էլ զարմանալի է, նման գործելաոճը պարունակում է վտանգ. ցածր տոկոսներով վարկերը, սովորաբար, հանգեցնում են գնաճի, և եթե դրա ցուցանիշը բարձր է լինում, ԿԲ-ն պետք է բարձրացնի վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ զսպելու համար գնաճը:

Հայաստանում, սակայն, վերոնշյալ կանոնը չի գործում. գների մակարդակի նվազմանը զուգահեռ, ՀՀ ԿԲ-ն վերաֆինանսավորման տոկոսադրույքն իջեցնում է բավական դանդաղ տեմպերով, որի հետևանքով բանկերի կողմից տնտեսավարող սուբյեկտներին տրվող վարկերի տոկոսները պարզապես չեն նվազում: Դա էլ, իր հերթին, հանգեցնում է տնտեսական գործընթացների պասիվացման: Այսպես՝ 2015 թ. դեկտեմբերին վերաֆինանսավորման տոկոսադրույքը նվազեցվել է միանգամից 1%-ով՝ նախորդ ամսվա համեմատ (հավելված 2):¹³⁸ Սա վերջին ժամանակաշրջանում ԿԲ-ի կողմից տոկոսադրույքի ամենազգալի փոփոխությունն է: Օրինակ՝ 2016 թ. ընթացքում գլխավոր դրամատուինը ութ անգամ վերանայել է այդ ցուցանիշը, սակայն միայն մայիսին է դա նվազեցրել 0.5%-ով: Մյուս բոլոր դեպքերում նվազեցումը կազմել է 0.25%: 2017 թ. վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 6%, պարտադիր պահուստավորման տոկոսադրույքը՝ 20%-ից նվազեցվել մինչև 18%:

ՀՀ-ում գնաճը պայմանավորված չէ միայն մեկ գործոնով և կրում է ոչ մոնետար բնույթ: Այն կախված է ոչ միայն դրամական զանգվածի փոփոխությունից, այլև որոշ ապրանքների նկատմամբ գործող մենաշնորհներից և, իհարկե, ներմուծվող ապրանքների գներից, հատկապես այն դեպքում, երբ ներմուծումը գերազանցում է արտահանումը գրեթե երեք անգամ:¹³⁹

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ ՀՀ շուկայի անկատարությունը որոշակի խոչընդոտներ է ստեղծում գնաճի նպատակադրման քաղաքականության արդյունավետ իրականացման համար, ուստի կայուն տնտեսական և արտաքին գների

¹³⁸ Կենտրոնական բանկի տվյալների բազա, Դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքներ, www.cba.am

¹³⁹ Ա. Թավադյան, Դրամավարկային քաղաքականությունը տնտեսական անվտանգության տեսանկյունից, «21-դար», Երևան, 2015, էջ 80-89:

ոչ էական փոփոխությունների իրավիճակում նպատակահարմար է վարել վերաֆինանսավորման տոկոսադրույքի սահուն իջեցման քաղաքականություն:¹⁴⁰

Միաժամանակ, ակնհայտ է, որ միայն մեկ ցուցանիշի կարգավորումը չի կարող նպաստել տնտեսության զարգացմանը և անգամ կարող է դառնալ տնտեսական ակտիվության մակարդակի անկման պատճառ:

ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության և գնաճի կառավարման բնագավառում, ինչպես վերը նշեցինք, կարևոր քայլ էր 2006 թ. ապրիլին անցումը նոր՝ գնաճի նպատակադրման ռազմավարությանը:¹⁴¹ Այս քայլով ամրապնդվեց համապատասխան քաղաքականության կառավարման միջանկյալ նպատակային մակարդակի՝ դրամական զանգվածի և հիմնական նպատակային մակարդակի՝ գնաճի դինամիկ կապը:

Գնաճի նպատակադրման ռազմավարության կարևոր առավելություններից է նաև դրամավարկային քաղաքականություն իրականացնող մարմինների կողմից ապագայի տեսլականին միտված ծրագրերի իրագործումը, ինչն էլ ենթադրում է, որ ԿԲ բոլոր գործողությունները պետք է լինեն հեռանկարային՝ ելնելով ապագայի սպասումներից: Այս գործելաոճը ԿԲ գործունեությունը կարող դարձնել ճկուն և արդյունավետ:

Նոր ռազմավարությունը, նախկինի համեմատ, հնարավորություն ընձեռեց նաև խթանելու համագործակցությունը ֆինանսական շուկաների և հասարակության միջև՝ ամսական և եռամսյակային մամլո հաղորդագրությունների, շուկայի մասնագետների հետ հանդիպումների և այլ ձևաչափերով:

Հավելենք, որ ԿԲ-ի կողմից նոր քաղաքականության որդեգրումը ինչ-որ չափով նաև 2005 թ. գրանցված 0.2% գնանկման արձագանքն էր: Բանն այն է, որ այդ ժամանակահատվածում փաստացի կատարվել էր նախատեսված՝ մինչև 3% գնաճի պայմանը, սակայն, միաժամանակ, տեղի էր ունեցել գնանկում: Ուստի առկա էր գնաճի ներքին շեմի սահմանման անհրաժեշտություն: Այս առումով, գնաճի նպատակադրման քաղաքականությանն անցումը նպատակահարմար էր տնտեսության համար: Նշենք

¹⁴⁰ Ա. Թավադյան, Դրամավարկային քաղաքականությունը տնտեսական անվտանգության տեսանկյունից, «21-դար», Երևան, 2015, էջ 80-89:

¹⁴¹ ՀՀ ԿԲ-ի կողմից 2006 թ. ընդունված «ՀՀ ԿԲ-ի կողմից գնաճի նպատակադրման ռազմավարության ընդունման հիմնավորում, փաստաթուղթ (www.cba.am):

որ 2006 թ. թիրախը կազմել է 3%, հետագայում վերանայվել՝ 5-1.5%, իսկ փաստացի՝ 5.2%, 2007 թ. դա 3-1.5% էր, հետագայում վերանայվել է՝ 4-1.5%, փաստացի՝ 6.6%, 2008-ին՝ 3-1.5%, հետագայում վերանայվել է 4-1.5%, 2009-ին՝ 3-1.5%, հետագայում վերանայվել է 4-1.5%:¹⁴²

Արտարժութային ֆինանսական ներհոսքի բացասական հետևանքները, փոխարժեքի կտրուկ արժևորման ճնշումը մեղմելու և գնաճի նպատակադրված մակարդակ ապահովելու համար 2007-ից ՀՀ ԿԲ-ն ներմուծեց նոր դրամավարկային գործիք՝ սեփական արժեթղթերը, որոնց միջոցով կատարում է դասական ստերիլիզացիա: Արտարժութային շուկայում ճնշումը մեղմելու նպատակով այդ շուկայից գնելով արտարժույթ, դրա արդյունքում ի հայտ եկած դրամական ավելցուկը տեղաբաշխելով արժեթղթերում՝ գլխավոր դրամատուները 1-2 տարում սեփական արժեթղթերի պաշարը հասցրեց մինչև 90 մլրդ դրամի:¹⁴³

Պետք է ասել, որ ՀՀ ԿԲ գնաճի նպատակադրման ռազմավարության, ինչպես նաև զսպողական հարկաբյուջետային քաղաքականության շնորհիվ համեմատաբար սահմանափակվում է միջամտությունը փոխարժեքային և տոկոսադրույքների բարձրացման գործընթացներին, ինչի արդյունքում մեր երկրում գնաճն ավելի ցածր մակարդակի վրա է, քան ԱՊՀ մյուս երկրներում:¹⁴⁴

Գնաճային ռիսկերի խմբի մեջ կարելի է ներառել փոխարժեքի զգալի ներհոսքը (մասնավոր փոխանցումներ, արտաքին օգնություն), ՀՆԱ անհավասարակշռված բարձր աճը, պարենային ապրանքների գների չնախատեսված, նաև երաշտային տարվա հետ կապված աճը, էներգակիրների գների աճը:

Գնաճի նպատակադրման քաղաքականությունը թեև գործնականում ցուցաբերել է արդյունավետությունը ՀՀ-ում, մի կողմից՝ փոխարժեքի արժևորման զսպման, մյուս կողմից՝ գնաճի ցածր մակարդակի պահպանման տեսանկյունից, սակայն այն որոշակի բացասական ազդեցություն է ունենում ԿԲ տոկոսադրույքի վրա: ՀՀ ԿԲ-ն

¹⁴² «Հայաստանի Հանրապետության 2006-2009 թթ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքներ, հոդված 4: Սղաճը Հայաստանում: Ինչ է կատարվում գների հետ Հայաստանում, <http://www.imf.org>

¹⁴³ ՀՀ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունը մինչ ֆինանսական ճգնաժամը և ներկայումս, www.e-gov.am

¹⁴⁴ Սարգսյան Տ., Ֆինանսական համակարգը և ֆինանսական բարեփոխումները ԱՊՀ երկրներում, «21-րդ դար», թիվ 1 (11), 2006:

հնարավորություն չունի անվերջ մեծացնելու արժեթղթերի իր պորտֆելը, քանզի վերջինիս տոկոսադրույքի աճը հանգեցնում է պետական պարտատոմսերի տոկոսադրույքների աճին և թանկացնում պետական պարտքի սպասարկումը: Այս դեպքում գործում է նաև փողի արտամղման դասական տարբերակը, երբ բարձր տոկոսադրույքները բացասաբար են անդրադառնում ներդրումների վրա:

Այս ամենով հանդերձ, ՀՀ-ում գնաճի թիրախավորման քաղաքականությունը շատ ավելի արդյունավետ է, քան մինչև 2006 թ. կիրառվող՝ փողի ագրեգատների նպատակադրման ռազմավարությունը, քանի որ վերջինս բացասաբար էր անդրադառնում փոխարժեքի արժևորման, հետևաբար՝ նաև առևտրային հաշվեկշռի վրա, ինչպես նաև թուլացնում էր դրամական զանգվածի և գնաճի մակարդակի միջև առկա կապը: Սակայն չպետք է անտեսել այն հանգամանքը, որ նոր քաղաքականությունն իր հետ բերում է նոր խնդիրներ՝ կապված ԿԲ տոկոսադրույքների, հատկապես վերաֆինանսավորման հստակ կառավարման հետ: Պետք է հիշել, որ գնաճի մակարդակը և ՀՆԱ իրական աճը ԿԲ հիմնական նպատակներն են, և, որպես այդպիսին, նրանց կայուն և երկարաժամկետ կառավարումը չպետք է իրականացվի այլ կարճաժամկետ, միջանկյալ նպատակների և գործիքների անարդյունավետ օգտագործման հաշվին:

Այսպիսով.

- Դրամավարկային քաղաքականության զարգացման առումով, միակ արդյունավետ լուծումն անցումն էր գնաճի նպատակադրման ռազմավարությանը:
- Տվյալ ռազմավարության ներքո, որպես դրամավարկային քաղաքականության միջանկյալ նպատակ, հանդես է գալիս գնաճի կանխատեսված մակարդակը, որը կառավարվում է գործառնական նպատակի՝ կարճաժամկետ տոկոսադրույքի միջոցով:¹⁴⁵ Բացի այդ, որպես երկրորդական գործառնական նպատակ, դեռևս պահպանվում է փողի բազան: Գնաճի նպատակադրման ցուցանիշը սպառողական գների ինդեքսի աճի տեմպն է:¹⁴⁶

¹⁴⁵ «Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 4:

¹⁴⁶ ՀՀ ԿԲ-ի կողմից գնաճի նպատակադրման ռազմավարության ընդունման հիմնավորում 2006թ. 16 էջ

- Նոր ռազմավարության ներքո դրամավարկային քաղաքականությունն ուղղվում է գնաճի կանխատեսված և ծրագրային մակարդակների միջև շեղումների վերացմանը: Որպես դրամավարկային քաղաքականության հիմնական գործիք է սահմանվել վերաֆինանսավորման տոկոսադրույքը, իսկ գնաճի ծրագրային մակարդակ՝ 4%-ը՝ 1.5% թույլատրելի շեղման սահմանաչափով:

- Դրամավարկային քաղաքականության գնաճի նպատակադրման ռազմավարությունն արդյունավետ չէ սեզոնային գնաճի կարգավորման համար: Կենտրոնական բանկի կողմից գնաճի նպատակադրման քաղաքականության արդյունավետությունն ավելի հանգամանորեն կլուսաբանվի աշխատանքի 3.3 ենթագլխում:

2.3. Գնաճի մակարդակի և արտադրության փոխարժեքների փոխկապակցվածության վերլուծությունը

Համաձայն «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի՝ որպես ԿԲ առաջնային նպատակ սահմանված է գների կայունության ապահովումը: Գների կայունությունն ասելով չպետք է հասկանալ դրանց անփոփոխ լինելը, այլ դանդաղ և կայուն աճ: Հետևաբար՝ ԿԲ-ն պետք է նպատակադրի ոչ թե զրոյական, այլ չափավոր գնաճ, որն իր էությամբ բնականոն երևույթ է և կարող է պայմանավորվել մի շարք գործոններով: Նախ՝ գնաճը չափվում է սպառողական զամբյուղի միջոցով, երկրորդ՝ դա կարող է պայմանավորվել սպառողական զամբյուղում ընդգրկված ապրանքների որակական փոփոխությամբ, երբ բնակչությունը սկսում է սպառել դրան համապատասխան ապրանքացանկի առավել որակյալ տարատեսակները, երրորդ՝ գների չափավոր աճը նպաստում է արտադրության ծավալների ընդլայնմանն ու տնտեսության զարգացմանը և ընդհակառակը՝ գնանկումը կարող է նվազեցնել արտադրության խթանները: Գների այն մակարդակը, որը, տվյալ երկրի տնտեսության առանձնահատկություններից ելնելով, առավել համապատասխանում է դրանց կայունության վերոնշյալ սահմանմանը, ընտրվում է որպես գնաճի նպատակային

աստիճան կամ գնաճի թիրախ: 2007 թվականից սկսած՝ ՀՀ-ում որպես գնաճի նպատակային թիրախ է սահմանվել 4%-ը՝ $\pm 1.5\%$ տատանումների թույլատրելի միջակայքով:

Գնաճի նպատակային մակարդակն ամրագրվում է յուրաքանչյուր տարվա «Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում:¹⁴⁷ Գնաճը կարելի է խթան համարել ազգային տնտեսության դինամիկ զարգացման համար, եթե դրա մակարդակը չի գերազանցում տարեկան միանիշ՝ մինչև 5-6% սահմանը: Որոշ դեպքերում դա օգտակար է անգամ տարեկան մինչև 10%-ի սահմաններում՝ այն պայմանով, որ ամսվա մեջ 1%-ի սահմանը չանցնի: Այն ուղեկցվում է դրամական զանգվածի համապատասխան աճով, ինչն արագացնում է վճարման շրջապտույտը, էժանացնում վարկավորումը, ինչն էլ նպաստում է ներդրումների աճին, արտադրության առաջընթացին ու դրա արդիականացմանը, ինչպես նաև տնտեսության մրցունակության բարձրացմանը: Միաժամանակ, արտադրության աճը վերականգնում է ապրանքային և դրամական զանգվածների միջև հավասարակշռությունը:

Գնաճից բխող ռիսկերն առաջանում են դրամական հոսքերի անկանխատեսելիության հետևանքով: Այսպես՝ եթե գնաճի մակարդակը գերազանցում է երկնիշ թիվը, ապա տնտեսավարող սուբյեկտների համար ավելի դժվար է դառնում կանխատեսել դրա մակարդակը՝ հատկապես երկարաժամկետ հեռանկարում, որից բխում է, որ ավելի է բարդանում համապատասխան որոշումների կայացման գործընթացը: Եթե գնաճի մակարդակը բարձր է, ապա տնտեսավարող սուբյեկտները խուսափում են օգտագործել ազգային արժույթը, և վերջինիս նկատմամբ պահանջարկն անկում է ապրում:

Գնաճի տեմպը զգալի ազդեցություն ունի փոխարժեքի մակարդակի վրա. ինչքան բարձր է ինֆլացիայի տեմպը, այնքան ցածր է ազգային արժույթի փոխարժեքը, քանի որ արտարժույթի փոխարժեքի ձևավորման հիմքում արժույթների հարաբերակցությունն է՝ ըստ դրանց գնողունակության:¹⁴⁸ Ինչ վերաբերում է

¹⁴⁷ «Դրամավարկային քաղաքականության նպատակը», www.cba.am

¹⁴⁸ «Ֆինանսական շուկաներ և ծառայություններ», հետազոտական խմբի ղեկավար Ս.Ս. Սուքիասյան, «Ամբերդ» մատենաշար, Երևան, 2014թ, էջ 9

փոխարժեքի դինամիկային, ապա դա զգալիորեն կախված է շուկայական և պետական կարգավորման հարաբերակցությունից, իսկ դրա պետական կարգավորումը, մասնավորապես՝ կենտրոնական բանկերի արտարժույթային ինտերվենցիաների միջոցով, ուղղված է կա՛մ վերջինիս բարձրացմանը, կա՛մ նվազմանը՝ ելնելով տնտեսական քաղաքականության խնդիրներից¹⁴⁹: Հետևապես՝ փոխարժեքը պայմանավորված է գնաճի աստիճանով և սպասումներով:¹⁵⁰

Հարկ է նշել նաև, որ փոխարժեքի ձևավորումը բարդ և բազմակողմանի գործընթաց է և աչքի է ընկնում ազգային ու համաշխարհային արտադրության և շրջանառության ոլորտների փոխկապվածությամբ: Յուրաքանչյուր երկրում դրա վարքագիծը դրսևորվում է՝ առավելապես ըստ դրամավարկային քաղաքականության նպատակների սահմանման և դրանց իրականացմանն ուղղված համապատասխան ռազմավարության: Այս տեսանկյունից՝ փոխարժեքը, որպես երկրի ներքին արժույթի արտաքին գին, փոփոխվում է ինչպես ներքին և արտաքին արժույթների քանակական, այնպես էլ դրանց ներքին գնային՝ տոկոսադրույքների փոփոխությամբ պայմանավորված՝ հայտնվելով դրամավարկային քաղաքականության ուղղակի ազդեցության ներքո: Դրա փոփոխությունն ազդում է նաև մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների վարքագծի վրա: Ներկայումս փոխարժեքի փոփոխությունն ուղղակիորեն անդրադառնում է տվյալ երկիր ներմուծված և այդ երկրում արտադրվող՝ արտահանվող և ներմուծվող նույնատեսակ ապրանքների հետ մրցակցող ապրանքների (բոլորը միասին՝ արտահանելի ապրանքներ)՝ ներքին արժույթով գնագոյացման վրա: Արդյունքում երկրում ձևավորվող գնաճի ցուցանիշն ուղղակի կախվածություն ունի փոխարժեքի փոփոխությունից:¹⁵¹

Հայաստանի Հանրապետությունում 2003-2008 թթ. ընկած ժամանակահատվածում տեղի ունեցավ փոխարժեքի արժևորում՝ 1 դոլարի դիմաց՝

¹⁴⁹ Международные валютно-кредитные отношения. Учебник/ Под общ. ред. Н.П. Гусакова.-М.: 2008, с. 27, 28.

¹⁵⁰ Акопова Е.С., Воронкова О.Н., Мировая экономика и международные экономические отношения. «Феникс», 2001, с. 305, 306.

¹⁵¹ «Ֆինանսական շուկաներ և ծառայություններ», հետազոտական խմբի ղեկավար Ս.Ս. Սուքիասյան, «Ամբերդ» մատենաշար, Երևան, 2014թ, էջ 9

590-ից (2003 մարտ) մինչև 302 դրամ (2008 օգոստոս): Նշված գործընթացը երբեմն ուղեկցվում էր օրվա ընթացքում փոխարժեքի կտրուկ փոփոխություններով՝ հանգեցնելով սպեկուլյացիոն երևույթների: Այսպես՝ 2014 թ. դեկտեմբերին, երբ փոխարժեքն օրերի ընթացքում կտրուկ արժևորվեց (1 դոլարի դիմաց՝ մինչև 600 դրամ)¹⁵², առաջացավ մասսայական խուճապ, և մարդիկ շատ կարճ ժամանակահատվածում սկսեցին բանկերից հանել իրենց դրամային ավանդները: Դա հանգեցրեց նրան, որ բանկերն արդեն ի վիճակի չէին բավարարելու իրենց հաճախորդների պահանջները, որն իր հերթին խուճապի ալիք էր առաջացնում: Ի վերջո, ՀՀ կենտրոնական բանկը ստիպված եղավ վերանայելու առևտրային բանկերի պահուստային մնացորդները, ըստ որոնց բանկերը պարտավոր էին բավարարել ավանդ ներդնողների նվազագույն փոխհատուցումները: Այս պարագայում փոխարժեքը հանդես եկավ որպես գնաճային ցնցումների կլանիչ:¹⁵³

Միաժամանակ, պետք է նշել, որ փոխարժեքի փոփոխությամբ է պայմանավորված նաև ապրանքների գների փոփոխությունը, ինչը ենթադրում է դրանց հարաբերական գների փոփոխություն՝ ոչ արտահանելի ապրանքների համեմատ: Ընդ որում, հարաբերական գների այս փոփոխություններն իրենց հերթին առաջացնում են տվյալ ապրանքների նկատմամբ ներքին հարաբերական պահանջարկի փոփոխություն: Մասնավորապես՝ փոխարժեքի արժեզրկումը հանգեցնում է արտահանելի ապրանքների հարաբերական գների աճին և դրանց նկատմամբ հարաբերական պահանջարկի նվազմանը: Պահանջարկի հարաբերական փոփոխությանը համապատասխան՝ կրճատվում են ներմուծման, իսկ տնտեսության ոչ արտահանելի հատվածում՝ ավելանում արտադրության ծավալները: Վերջինս առաջացնում է արտադրության գործոնների (աշխատուժի և կապիտալի) գների աճ, ինչն էլ հանգեցնում է ոչ արտահանելի հատվածում գների մակարդակի բարձրացման: Այս ամենի հետևանքով փոխարժեքի անուղղակի ազդեցությամբ տնտեսության մեջ արձանագրվում է լրացուցիչ գնաճ:

Ինչպես վերը նշեցինք, կայուն տնտեսական աճն ուղեկցվում է որոշակի ցածր

¹⁵² Տվյալները՝ www.armstat.am

¹⁵³ «Ֆինանսական շուկաներ և ծառայություններ», հետազոտական խմբի ղեկավար Ս.Ս. Սուքիասյան, «Ամբերդ» մատենաշար, Երևան, 2014թ, էջ 9

գնաճով: Հետևապես՝ «գների կայունություն» հասկացության ներքո պետք է ենթադրել գնաճի որոշակի բնականոն մակարդակ:¹⁵⁴

Այս ամենից ելնելով՝ երկարաժամկետ հատվածում կայուն տնտեսական աճ ձեռք բերելու նկատառումով յուրաքանչյուր կենտրոնական բանկ նպատակադրում է գնաճի որոշակի ցածր մակարդակ: Ընդ որում, տարբեր երկրներում դա սահմանվում է տարբեր կերպ, սակայն չի գերազանցում 2-6%-ի սահմանը: Ուստի, պատահական չէ, որ շատ երկրներում տարեկան 4-5% գնաճի արձանագրումն արդեն իսկ մտահոգությունների տեղիք է տալիս՝ տնտեսական աճի ապահովման առումով, և կենտրոնական բանկերը հետևողականորեն նվազեցնում ու կայունացնում են գնաճի տեմպերը՝ չեզոքացնելով բարձր գնաճի սպասումները, ապահովելով գների կայունություն:¹⁵⁵

Աղյուսակ 4-ում ներկայացված է 2009-2015 թթ. ազգային արժույթի միջին հարաբերակցությունը ռուսական ռուբլու և ԱՄՆ դոլարի նկատմամբ.

Աղյուսակ 4¹⁵⁶

ՀՀ դրամով ՌԴ և ԱՄՆ արժույթների փոխարժեքները՝ ըստ 2009-2015 թթ.


	2009	2010	2011	2012	2013	2014	2015
ՌԴ ռուբլի	11.5	12.32	12.7	12.94	12.88	10.98	7.89
ԱՄՆ դոլար	363.28	373.66	372.5	401.76	409.63	415.92	477.92

Գծապատկեր 10-ում արտացոլված է ՀՀ գնաճի մակարդակը 2006-2015 թթ. ընթացքում:

¹⁵⁴ ՀՀ ԿԲ-ի կողմից գնաճի նպատակադրման ռազմավարության ընդունման հիմնավորում, 2006:

¹⁵⁵ ՀՀ ԿԲ կանխատեսման և քաղաքականության վերլուծության համակարգը, <http://www.cba.am/Storage/AM/downloads/DVQ/FPAS%20hajeren.pdf>:

¹⁵⁶ Աղյուսակը կազմել է հեղինակը, տվյալներն ըստ՝ www.armstat.am կայքի:



Գծապատկեր 10. ՀՀ գնաձեռնարկի մակարդակը՝ ըստ 2006-2015 թթ.¹⁵⁷

Գծապատկերից 10-ից ակնհայտ է, որ ՀՀ-ում գնաձեռնարկի մակարդակը հասել է իր գագաթնակետին 2009 թ. ավարտին՝ դառնալով գրեթե 12%: Նույն ժամանակահատվածում հայկական դրամն արժևորվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ 363.28, իսկ ռուսական ռուբլու նկատմամբ արժեզրկվել՝ 11.5 դրամի չափով: 2015 թ. ԱՄՆ դոլարի փոխարժեքը հասել է իր գագաթնակետին՝ արժեզրկելով դրամը մինչև 477.92 միավոր, իսկ ռուսական ռուբլին, ընդհակառակը, արժեզրկվել է՝ հասնելով 7.89 դրամի: Նույն ժամանակահատվածում գնաձեռնարկի մակարդակը նվազել է՝ հասնելով 2-4%-ի միջակայք:

Գնաձեռնարկի անկանոն վարքագիծը կանխատեսելու և վերջինիս ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկը 2006 թ. անցում է կատարել դրա նպատակադրման քաղաքականությանը: Այդպես գլխավոր դրամատունը գնաձեռնարկի կառավարման ազդակները շուկայի մասնակիցներին է փոխանցում տոկոսադրույքների տեսքով, առաջին հերթին՝ որպես վերաֆինանսավորման տոկոսադրույքներ՝ շուկայում ձևավորելով համապատասխան սպասումներ: Գնաձեռնարկի վրա ազդելու ժամանակահատվածը սահմանվում է մեկ տարի

¹⁵⁷ ՀՀ կենտրոնական բանկի տեղեկատվական բազա, www.cba.am

է:¹⁵⁸ Կենտրոնական բանկերում կատարվող կանխատեսումներն առավելապես հաշվի են առնվում իրականացվելիք դրամավարկային քաղաքականության ընթացքի վերաբերյալ որոշումներ կայացնելիս: Կանխատեսումները հրապարակվում են հավանականությունների բաշխման գծապատկերի տեսքով՝ ներառելով ոչ միայն դրանց արդյունքում ստացված կետային արժեքները, այլև ապագայում վերջիններիս հնարավոր շեղման միջակայքերը: Դրանք ներկայացվում են, այսպես կոչված՝ հավանականությունների բաշխման գծապատկերով (Fan chart) և արտահայտում են ՀՀ ԿԲ տեսակետն ապագայում կանխատեսված արժեքից հնարավոր շեղումների ռիսկերի վերաբերյալ:¹⁵⁹ Այլ կերպ ասած՝ հավանականությունների բաշխման գծապատկերը արտացոլում է երևույթների զարգացման հետագա ընթացքի վերաբերյալ ԿԲ գնահատականը: 2002 թվականից սկսած՝ գնաճի կանխատեսված արժեքները ներկայացվում են հավանականությունների բաշխման գծապատկերով՝ արտահայտելով կանխատեսված կենտրոնական արժեքից գնաճի շեղման հավանականությունը:¹⁶⁰

Գնաճի նպատակադրման ռազմավարության ներքո դրամավարկային քաղաքականությունն իրականացվում է հետևյալ կերպ. եթե ՀՀ ԿԲ գնահատմամբ՝ կանխատեսվող գնաճը շեղվում է նպատակային թիրախից, ապա փոփոխվում է դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքը, ինչն էլ դրամավարկային քաղաքականության ազդեցության փոխանցման կառուցակարգի միջոցով նվազեցնում է միջանկյալ նպատակի՝ կանխատեսված գնաճի շեղումը գնաճի նպատակային թիրախից:¹⁶¹

Կենտրոնական բանկը Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկայում հանդես է գալիս դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներով, որոնք, ըստ կիրառման նպատակի, բաժանվում են 4 խմբի:¹⁶²

¹⁵⁸ <http://www.parliament.am/transcript.php?day=28&month=10&year=2010&lang=arm#1200>

¹⁵⁹ Inflation report, the Central Bank of the republic of Armenia, aproved under Board of the Central Bank resolution No.136A dated 2016.

¹⁶⁰ «ՀՀ ԿԲ կանխատեսման և քաղաքականության վերլուծության համակարգը», 2010, www.cba.am

¹⁶¹ ԴՎԲ ռազմավարություն, www.cba.am

¹⁶² «ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներ և դրանց կիրառման մեխանիզմներ» փաստաթղթին հավանություն տալու մասին որոշում, թիվ 246 Ա, 2011թ

1. Հիմնական վերաֆինանսավորման գործիք, որը ենթադրում է ՀՀ կենտրոնական բանկի նախաձեռնությամբ ռեպո գործարքի իրականացում, ինչը կիրառվում է կարճաժամկետ իրացվելիության ներարկման նպատակով:

2. Ճշգրտող գործիքներ, որոնք ենթադրում են ՀՀ կենտրոնական բանկի նախաձեռնությամբ ռեպո, հակադարձ ռեպո, արտարժույթի տրամադրման և ներգրավման սվոփ, ինչպես նաև դրամական միջոցների ներգրավման սակարկություններով գործարքների իրականացում, որոնք նպատակ ունեն ճկուն ու օպերատիվ եղանակով հարթելու իրացվելիության և տոկոսադրույքների հնարավոր կարճաժամկետ շեղումները:

3. Կառուցվածքային գործիքներ, որոնք ենթադրում են ՀՀ կենտրոնական բանկի նախաձեռնությամբ երկարաժամկետ վերաֆինանսավորման գործիքի (ռեպո), պարտատոմսերի և արտարժույթի առուվաճառքի գործարքների իրականացում, ինչպես նաև կենտրոնական բանկի պարտատոմսերի թողարկում: Վերջիններս կիրառվում են կառուցվածքային տեղաշարժերի պարագայում՝ համեմատաբար երկար ժամանակահատվածով շուկայի մասնակիցներին իրացվելիության տրամադրման և/կամ շուկայի մասնակիցներից իրացվելիության ներգրավման նպատակով:

4. Մշտական հնարավորության գործիքներ, որոնք ենթադրում են դրամական միջոցների ներգրավման կամ տրամադրման գործարքների կիրառում՝ բանկերի նախաձեռնությամբ: Նշված գործիքները թույլ են տալիս առևտրային բանկերին ճշգրտել իրացվելիության մեկօրյա անհաշվեկշռվածությունները, հաշվի առնելով այն հանգամանքները, որ դրանց տոկոսադրույքները հանդիսանում են շուկայական կարճաժամկետ տոկոսադրույքների վերին և ստորին սահմաններ՝ սահմանափակելով կարճաժամկետ տոկոսադրույքների տատանման միջակայքը: ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքների կիրառումը հնարավոր է նաև սույն կանոններով չնախատեսված եղանակներով:¹⁶³

¹⁶³ «ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներ և դրանց կիրառման մեխանիզմներ», ՀՀ ԿԲ խորհրդի որոշում թիվ 7Ա, 2014,. Էջ 4-5:

ՀՀ կենտրոնական բանկը, այս գործիքները կիրառելով, կարողանում է գնաճի մակարդակը պահել սահմանված՝ 2.5-5.5%-ի միջակայքում: Հիմնվելով կատարված հետազոտության արդյունքների վրա՝ կարելի է հավաստել.

- Տնտեսական զարգացման կարևորագույն գործոններից մեկը գնաճի ազդեցությունն է ֆինանսական շուկայի վրա:
- Գնաճի նպատակադրման ճշգրիտ ռազմավարության ընտրությամբ, ըստ առկա ցուցանիշների, հնարավոր է հստակ պատկերացում կազմել տնտեսության վիճակի վերաբերյալ և կանխատեսել գնաճի մակարդակը հետագա ժամանակահատվածի համար:
- Հայաստանի Հանրապետության տնտեսության համար մեծ կարևորություն ունի գնաճի կանխատեսելիության մակարդակը և դրա ազդեցությունն ազգային արժույթի վրա: Հանդիսանալով առավելապես որպես ներմուծող երկիր՝ ՀՀ ֆինանսական շուկան զգայուն է արտարժույթի տատանումների նկատմամբ:
- ՀՀ կենտրոնական բանկը, կիրառելով դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներ, նվազեցնում է արտարժույթի տատանումներից առաջացող գնաճային ռիսկերը և գնահատում գնաճի մակարդակը: Այս հիմնախնդրի առկայությունը լրորեն խոչընդոտում է ՀՀ-ում ներդրումների ներգրավումը:

ԳԼՈՒԽ 3. ԳՆԱՃԻ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

3.1. Կենտրոնական բանկի գործունեության SWOT վերլուծությունն ու դրա արդյունքները

Ուսումնասիրելով գնաճը, դրա առաջացման պատճառներն ու կարգավորման մակրոտնտեսական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում՝ կարելի է եզրակացնել, որ կենտրոնական բանկը մեր երկրում օժտված է գների մակարդակը կարգավորելուն միտված հիմնական գործառույթներով: Ըստ այդմ էլ ծավալվում է վերջինիս գործունեությունը. ԿԲ-ն լիարժեք վերահսկողություն է իրականացնում երկրի առևտրային բանկերի, վարկային կազմակերպությունների, ֆինանսական շուկայի այլ մասնակիցների, այսինքն՝ ողջ ֆինանսաբանկային համակարգի նկատմամբ՝ տրամադրելով վարկեր՝ իր իսկ սահմանած տոկոսադրույքներով, թելադրելով վերջիններիս կողմից տրամադրվող վարկերի և ներգրավվող ավանդների տոկոսադրույքների՝ համապատասխանաբար առավելագույն և նվազագույն սահմանները:¹⁶⁴ ԿԲ-ն ապահովում է նաև ֆինանսական ոլորտի ռիսկերի ճիշտ գնահատում և դրանց հնարավորինս զսպմանն ուղղված միջոցառումների իրականացում:¹⁶⁵ Այն փաստը, որ կենտրոնական բանկը որպես իր հիմնական նպատակ է սահմանել է գների կայունությունը, վկայում է գնաճի՝ առաջնային լուծում պահանջող խնդիր լինելու մասին: Միաժամանակ, հարկ է նշել, որ Հայաստանում գների կայունությունը շատ հաճախ կախված է միջազգային շուկայի գներից և քաղաքական իրավիճակից:

Հայկական շուկայի զգայունությունը պայմանավորված է ներմուծման մեծ ծավալներով, որը, ըստ ԱՎԾ տվյալների, ներկայումս 2.5 անգամ գերազանցում է արտահանման ծավալները:

¹⁶⁴ «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, օրենք ՀՕ 69, 1996:

¹⁶⁵ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կանխատեսման և քաղաքականության վերլուծության համակարգը, ՀՀ ԿԲ, 2010:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ երկրում գնաճը կարգավորող հիմնական և գլխավոր կառույցը կենտրոնական բանկն է, հետևաբար՝ անհրաժեշտ է գնահատել հենց վերջինիս գործունեության արդյունավետությունը՝ նախևառաջ բացահայտելով դրա կողմից մշակվող ռազմավարության ուժեղ և թույլ կողմերը, որոնցից էլ բխում են տնտեսության զարգացման հնարավորություններն ու մարտահրավերները: Այսպիսով՝ ԿԲ գործունեության արդյունավետության գնահատման նպատակով անհրաժեշտ է իրականացնել SWOT վերլուծություն:

SWOT վերլուծության էությունը հետևյալն է. բացահայտել տվյալ կառույցի համար էական նշանակություն ունեցող հիմնահարցերը և մշակել հնարավոր գործողություններ, որոնք ուղղված են նրա դիրքի ամրապնդմանն ու զարգացմանը:¹⁶⁶


Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի գործունեության արդյունավետության գնահատման համար կատարվել է SWOT վերլուծություն, որի արդյունքում վեր են հանվել վերջինիս ներքին միջավայրի ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև մատնանշվել են արտաքին միջավայրի հնարավորություններն ու մարտահրավերները:

Առավել ճշգրիտ արդյունք ստանալու նպատակով որպես օրինակ են ծառայել Ռուսաստանի Դաշնության և Ղազախստանի Հանրապետության կենտրոնական բանկերի գործունեության արդյունավետության հետազոտությունները, ինչպես նաև ուսումնասիրվել է «ՀՀ կենտրոնական բանկի մասին» օրենքը¹⁶⁷, դրամավարկային քաղաքականության ռազմավարությունը և այլն:

Հետազոտության արդյունքները պատկերված են գծապատկեր 11-ում.

¹⁶⁶ Մենեջմենթ, Յու.Մ. Սովարյանի ընդհանուր խմբագրությամբ, դասագիրք բուհերի համար, Երևան, «Տնտեսագետ», 2002, էջ 105:

¹⁶⁷ «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, օրենք ՀՕ 69, 1996



Գծապատկեր 11. ՀՀ ԿԲ գործունեության SWOT վերլուծություն¹⁶⁸

¹⁶⁸ Գծապատկերը կառուցել է հեղինակը՝ որպես օրինակ ունենալով Ռուսաստանի Դաշնության և Ղազախստանի Հանրապետության կենտրոնական բանկերի SWOT վերլուծությունը, <http://jurisprudent.site/ekonomika/swot-analiz-rossiyskoy-bankovskoy-sistemyi-31913.html>

Գծապատկեր 11-ից երևում է, որ ՀՀ-ում ԿԲ-ն լիարժեքորեն ստանձնել է ֆինանսական շուկայի վերահսկողությունը՝ ֆինանսաբանկային համակարգին¹⁶⁹ տրամադրելով վարկեր իր իսկ սահմանած տոկոսադրույքներով, առևտրային բանկերին և վարկային կազմակերպություններին թելադրելով վերջիններիս կողմից տրամադրվող վարկերի և ներգրավվող ավանդների տոկոսադրույքների՝ համապատասխանաբար առավելագույն և նվազագույն սահմանները: Սրանից էլ բխում է ԿԲ մյուս ուժեղ կողմը՝ ֆինանսական շուկայում մշտադիտարկման միջոցով հետադարձ կապի ապահովումը: Առհասարակ յուրաքանչյուր ոլորտին վերաբերվող հիմնախնդիրները բացահայտելու համար հարկ է իրականացնել վերահսկում՝ դրանում եղած թերությունները վերացնելու, գործունեությունը կարգավորելու և կատարելագործելու նպատակով: Նմանատիպ մշտադիտարկում ՀՀ ֆինանսական համակարգում իրականացնում է կենտրոնական բանկը: Այսպիսով՝ անմիջական կապ է ստեղծվում բնակչության և ֆինանսական ոլորտի միջև՝ նպաստելով սպառողների շրջանում վստահության մակարդակի բարձրացմանը, որն էլ, իր հերթին, խթանում է ֆինանսական շրջանառությունը՝ երկրում ապահովելով որոշակի տնտեսական աճ:

Կենտրոնական բանկը, որպես երկրի ֆինանսական շուկան կարգավորող հիմնական կառույց, նորմեր և տարբեր նորմատիվներ մշակելիս և ընդունելիս պետք է լինի անկախ, այսինքն՝ չպետք է ունենա կախում պետական որևէ այլ կառույցից: ՀՀ ԿԲ-ն ունի այդ անկախությունը, որն էլ նրա հերթական ուժեղ կողմն է:¹⁷⁰

Որպես ՀՀ ԿԲ մյուս առավելություն՝ կարելի է մատնանշել նաև վերջինիս կողմից ֆինանսական ոլորտի ռիսկերի ճիշտ գնահատումն ու և դրանց հնարավորինս զսպմանն ուղղված միջոցառումների իրականացումը¹⁷¹: Ռիսկերի կառավարում ասելով անհրաժեշտ է հասկանալ կապիտալացման և իրացվելիության բարձր մակարդակ, ակտիվների/վարկային պորտֆելի, առհասարակ բանկային ռեսուրսների բազմազանեցման (դիվերսիֆիկացման), ռիսկերի կառավարման և դրանցից ապահովագրման պատշաճ մակարդակ, տնտեսական և ֆինանսական ճգնաժամերին դիմակայելու գործուն ծրագրերի առկայություն և այլն:

¹⁶⁹ «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, օրենք ՀՕ 69, 1996, գլուխ 5

¹⁷⁰ «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, օրենք ՀՕ 69, 1996, հոդված 1

¹⁷¹ ՀՀ ԿԲ 2015-2017թթ Ռազմավարություն

Ընդամենը 25 տարվա անկախություն ունեցող ՀՀ ԿԲ կողմից իրականացվող ներկայիս դրամավարկային քաղաքականությունը բավական արդյունավետ է՝ շնորհիվ ճիշտ մշակված ռազմավարության: Սա ևս կարելի է համարել ԿԲ ուժեղ կողմերից մեկը (առավել մանրամասնորեն անդրադարձել ենք նախորդ գլխում):¹⁷²

Տեխնոլոգիաների բուռն զարգացմանը զուգընթաց, անհրաժեշտ է անընդհատ թարմացնել, արդիականացնել նաև ոլորտում կիրառվող համապատասխան սարքավորումներն ու ծրագրերը, բարելավել տեխնիկական ու տեխնոլոգիական զինվածությունը: Նման թարմացման շնորհիվ բարձրանում է ԿԲ-ում իրականացվող աշխատանքների որակը, ինչը ևս առավելություն է:

Արդյունավետ է նաև ԿԲ կորպորատիվ կառավարումը, ինչն բնութագրվում է կորպորատիվ մշակույթի կայացածությամբ, որակյալ կադրերի և համապատասխան մասնագիտական ներուժի առկայությամբ, կազմակերպակառավարչական, ներքին վերահսկողության, որակի կառավարման համակարգերի շարունակական բարելավմամբ:


Այդուհանդերձ, հարկ է նշել, որ առավելությունների հետ մեկտեղ, ԿԲ-ն ունի նաև թույլ կողմեր, որոնք են՝

- Արտաբժույթի անկայուն, լողացող կուրսը և ՀՀ դրամի անկայուն վիճակը. սրանք երևույթներ են, որ լուրջ մտահոգությունների տեղիք են տալիս՝ ընդ որում, ոչ միայն ՀՀ-ում: Վերջին տարիներին ՀՀ ԿԲ-ն թույլատրել է, որ դրամն արժեզրկվի: Պատճառներից մեկն այն է, որ այդ ժամանակահատվածում ՀՀ համախառն միջազգային պահուստները մոտավորապես 31%-ով նվազել են (համաձայն ՀՀ ԱՎԾ տվյալների՝ 2430.6 մլն ԱՄՆ դոլարից իջնելով մինչև 1663.1 մլն ԱՄՆ դոլար)¹⁷³: Նույնկերպ՝ այդ ընթացքում զգալիորեն պակասել է ֆիզիկական անձանց կողմից երկիր մուտք գործող դրամական փոխանցումների ծավալը, որին հակադարձ համեմատական կարգով աճել է երկրի արտաքին պարտքը: Գծապատկեր 12-ից հստակ երևում է, ՀՀ արտաքին պարտքը 2006-

¹⁷² ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից գնաճի նպատակադրման ռազմավարության ընդունման հիմնավորում. 2006

¹⁷³ www.armstat.am

2016 թթ. ընթացքում քառապատկվել է՝ 1,205.6 մլն ԱՄՆ դոլարից հասնելով 4,805.6 մլն ԱՄՆ դոլարի:



Գծապատկեր 12. ՀՀ արտաքին պետական պարտքը (մլն ԱՄՆ դոլար) ¹⁷⁴

- Ներդրումային պասիվ և վստահություն չներշնչող միջավայրը. սա, թերևս, ՀՀ ԿԲ ամենաթույլ կողմն է, որը պայմանավորված է երկրում տիրող անկայուն քաղաքական, ինչպես նաև պատերազմական իրավիճակով: Նման պարագայում ոչ ոք չի ցանկանա վտանգի տակ դնել իր ֆինանսական միջոցները, որոնք կարող են փոշիանալ ցանկացած պահի՝ պատերազմ սկսվելու հետևանքով:
- ՀՀ ԿԲ ռիսկերի կառավարման համակարգի ոչ լիարժեք զարգացածությունը¹⁷⁵. այս բացթողումը պայմանավորված է տնտեսական անկայուն վիճակով, որի հետ կապված բարդ է լիարժեքորեն գնահատել ռիսկերի ամբողջական մակարդակը: Այս ուղղությամբ հաջողություններ արձանագրելու համար ՀՀ ԿԲ-ն պետք է բազմապատկի դրամային ռեսուրսները, հիմնական ավանդների տեսակարար կշիռը և այլն՝

¹⁷⁴ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից, տվյալները՝ www.armstat.am

¹⁷⁵ «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններով»: Համաձայն «Արտարժույթային ռիսկի կառավարումը» 8-րդ գլուխ, ՀՀ ԿԲ խորհուրդ 2008 թ, թիվ 71-Ն որոշում

միաժամանակ, նվազեցնելով միջազգային ֆինանսական շուկաների զարգացումների նկատմամբ մեծ զգայունությունը (ներգրավվող միջոցների տեսանկյունից), ինչպես նաև պարտավորությունները:

- Ֆինանսական շուկայի ոչ լիարժեք վերահսկողության հետևանքով օրինախախտումների առկայությունը. կառավարման յուրաքանչյուր համակարգ զերծ չէ թերություններից, սակայն ԿԲ բացթողումն այս առումով կարող է ազդել սպառողների շրջանում նրա վարկանշի վրա, անվստահություն առաջացնել ֆինանսական ոլորտի նկատմամբ: Նման երևույթներից խուսափելու համար կարելի է վերահսկողության խստացմամբ նվազագույնի հասցնել օրինախախտումները:

SWOT վերլուծության հաջորդ տարրը յուրաքանչյուր կառույցի իրական հնարավորությունների բացահայտումը, գնահատումն ու կիրառումն է, ինչը մեր օրինակում կարող է եկամտաբերության (շահութաբերության) աճի, հնարավոր ներդրումների ծավալի և ֆինանսական ոլորտի նկատմամբ վստահության մեծացման խթան դառնալ:

Եվ այսպես՝ որպես ԿԲ հետագա զարգացման հնարավորություններ կարող են դիտարկվել.

- Միջազգային կառույցներից էժան միջոցների ներգրավումը, ինչի արդյունքում ԿԲ-ն ցածր տոկոսադրույքով ավելի շատ ֆինանսական միջոցներ կարող է տրամադրել առևտրային բանկերին և վարկային կազմակերպություններին, որոնք էլ, իրենց հերթին՝ տնտեսավարող սուբյեկտներին: Այդկերպ հնարավոր կլինի որոշակի չափով աշխուժացնել ՀՀ տնտեսությունը և նոր, ավելի հզոր թափ հաղորդել գործարար ոլորտին:¹⁷⁶
- Ներքին ներդրումային միջավայրի ակտիվացումը, որը հատկապես ԿԲ-ի համար չափազանց կարևոր հանգամանք է: Լինելով ՀՀ տնտեսության ֆինանսավորման մեզակարգավորող՝ կառույցը առավելապես ներդրումների

¹⁷⁶ «ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներ և դրանց կիրառման մեխանիզմներ» փաստաթղթին հավանություն տալու մասին որոշում, թիվ 246 Ա, 2011թ

շնորհիվ է զարկ տալիս տնտեսության զարգացմանը:¹⁷⁷ Դրա համար անհրաժեշտ է ներդրողների շրջանում ավելացնել վստահությունը տեղական ֆիրմաների նկատմամբ, իսկ վերջինին հասնելու կա ընդամենը մեկ եղանակ՝ ակտիվացնել տնտեսությունը, ապահովել տնտեսական աճ և փոխարժեքի կայունություն, մեծացնել արտաքին շուկա դուրս գալու հնարավորությունները, ապահովել ազատ տնտեսական և առևտրի գոտիների գործունեություն:

- Շատ կարևոր է հասարակության ֆինանսական գրագիտության մակարդակի բարելավումը, ինչն առաջին հայացքից կարող է թվալ ոչ այնքան էական գործոն: Սակայն, ոչ միայն մեր կարծիքով, այլև ինչպես վկայում է միջազգային փորձը, ֆինանսական շուկայի արագ զարգացման պայմաններում ոլորտի ցանկացած նորարարության վերաբերյալ համապատասխան տեղեկատվության տարածումը, սպառողների պատշաճ իրազեկումը, կարևորվում է նրանց շրջանում ֆինանսական համակարգից օգտվելու մշակույթ արմատավորելու, կարգ ու կանոն հաստատելու տեսանկյունից: Հակառակ դեպքում՝ սպառողները կարող են համակվել խուճապային տրամադրություններով և պարզապես խուսափել շուկայում առկա նոր առաջարկներից օգտվելուց՝ անհնարին է դարձնելով հետագա առաջընթացը:¹⁷⁸

Ըստ SWOT վերլուծության տրամաբանության՝ յուրաքանչյուր դիտարկվող կառույցի պարագայում հնարավորություններից բացի, գոյություն ունեն նաև հավանական վտանգներ, որոնք սպառնում են դրա բնականոն գործունեությանը: Նման իրավիճակից խուսափելու համար անհրաժեշտ է ձեռնարկել քայլեր սպառնալիքները վերացնելու կամ, գոնե, դրանք չեզոքացնելու ուղղությամբ:

Հետազոտության արդյունքում պարզվել են այն վտանգները, որոնք կարող են ազդել ՀՀ կենտրոնական բանկի գործառույթների պատշաճ կերպով իրականացման վրա: Դրանք են՝ կախվածություն միջազգային ֆինանսական շուկաներից, դրանցում տեղի ունեցող իրադարձություններից, նաև անբարենպաստ զարգացումներից ազդվածություն (համաշխարհային ճգնաժամի երկրորդ ալիքի հավանականություն,

¹⁷⁷ Կենտրոնական բանկի տվյալների բազա, www.cba.am

¹⁷⁸ ՀՀ ԿԲ 2015-2017թթ Ռազմավարություն

տոկոսադրույքների աճ, գործընկեր երկրներում առկա տնտեսական և քաղաքական խնդիրներ, գնաճային ճնշումներ), արտաքին աղբյուրներից միջոցների ներգրավման դժվարություններ (բարձր վարկային ռիսկ, ՀՀ ԿԲ կոշտ դրամավարկային քաղաքականություն, տնտեսական անբարենպաստ միջավայրով պայմանավորված՝ բանկային ակտիվների որակի վատացում), ՀՀ իրավական և քաղաքական ոլորտներում կատարվող փոփոխություններով պայմանավորված ռիսկ (օրենսդրական կամ ԿԲ նորմատիվային դաշտի անկանխատեսելի, անբարենպաստ փոփոխություններ՝ հատկապես միտված դոլարայնացման դեմ պայքարին, հայ-ադրբեջանական հակամարտության սրացում, պատերազմի վերսկսման հավանականություն, խորհրդարանական և նախագահական ընտրություններ):

Այսպիսով՝ SWOT վերլուծության արդյունքում կատարվել են հետևյալ եզրակացությունները.

- Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը, որպես տնտեսության զարգացում ապահովող հիմնական կառույցներից մեկը, իր գործունեության մեջ արձանագրում է ուժեղ կողմեր, որոնք թույլ են տալիս նրան ապահովել գների կայունություն և վերահսկել ֆինանսական շուկան:
- Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի գործունեության թույլ կողմերից է արտարժույթի տատանումների ճշգրիտ կանխատեսման հնարավորության բացակայությունը, որը կարող է խթանել գների մակարդակի բարձրացումը:
- ՀՀ արտաքին պարտքը վերջին տասը տարիների ընթացքում քառապատկվել է՝ հասնելով 4,805.6 մլն ԱՄՆ դոլարի: Դա նշանակում է, որ արտարժույթով մուտքերն ավելացել են, որի հետևանքով կարող է բազմապատկվել նաև հարկային բեռը, ինչն, իր հերթին, կարող է խթանել գնաճը:

3.2 Գնաճի ներքին և արտաքին ռիսկերը և ֆինանսական կարգավորման հեռանկարները

Գնաճի նպատակադրման՝ ներկայումս գործող ռազմավարության ներքո թիրախավորվում է գների մակարդակի 12-ամսյա ցուցանիշը (տվյալ տարվա գնաճի ցուցանիշի համադրումը նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշի հետ), ինչը ամբողջական պատկերացում չի տալիս գնողունակության իրական մակարդակի վերաբերյալ: Մինչդեռ կարևոր է դիտարկել նաև միջին գնաճի ցուցանիշը, որի թիրախավորումից շեղվելը կարևոր ազդակ է ԿԲ-ի և Կառավարության միջամտության համար:¹⁷⁹

Տեսական-մեթոդաբանական խնդիրներից անցում կատարելով գնաճի իրական պատճառներին՝ հարկ է նշել, որ դրանք պայմանականորեն կարելի է դասակարգել որպես առարկայական (օբյեկտիվ) և ենթակայական (սուբյեկտիվ), ինչպես նաև արտաքին և ներքին պատճառներ: Առարկայական պատճառները, իրենց հերթին, կարող են ունենալ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ազդակներ: Նույնը կարելի է ասել նաև ենթակայական պատճառների մասին:

Վերլուծելով գնաճի բարձր մակարդակը՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ դրա առաջացման պատճառները չի կարելի փնտրել միայն ՀՀ-ում: Այլ կերպ ասած՝ կան առարկայական գործոններ, որոնք ակամայից հարկադրում են ընդունել տնտեսավարման խաղի կանոնները դրսից: Այս պարագայում, որպես բաց շուկայական երկիր, ՀՀ-ն ապրանքներ ներմուծելիս վճարում է այն գինը, որն արդեն ձևավորվել է համաշխարհային շուկայում: Հետևաբար՝ գների մակարդակի վրա արտաքին շուկայական տատանումների ազդեցությունը մեղմելու համար անհրաժեշտ է ապահովել հավասար պայմաններ բոլոր տնտեսավարողների համար՝ երկրի շուկայական տնտեսությունը չզրկելով մրցակցային միջավայրի առկայությունից:¹⁸⁰

¹⁷⁹ ՀՀ ԿԲ կանխատեսման և քաղաքականության վերլուծության համակարգը, 2010, 121 էջ, <http://www.cba.am/>

¹⁸⁰ Թ.Մանասերյան, Գնաճի ներքին և արտաքին ռիսկերը և դրանց կառավարման հեռանկարները, Ա. Լոքյան՝ գլխավոր խմբագիր, Պետական կառավարման արդյունավետության ապահովման հիմնախնդիրները ՀՀ-ում, միջբուհական գիտաժողովի նյութերի ժողովածու, մաս 1, գիտական հանդես, «Հանրային կառավարում», խմբագրական խորհրդի նախ. Վ.Սարգսյան, 2014, էջ 23-29:

ՀՀ հարկաբյուջետային քաղաքականության ոլորտի բազմաթիվ հիմնախնդիրների շարքում շեշտադրվում են հատկապես փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման խթանման և ստվերային շուկայի վերացման հարցերը:¹⁸¹ Վերջինիս նպատակը շուկայում գործող ստվերային հատվածի՝ օրինական դաշտ վերադարձնելն է: Ստվերային տնտեսությունը, ինչպես գիտենք, կրճատում է պետական եկամուտները, որոնք ապահովելու համար աճում է հարկային բեռը փոքրաթիվ տնտեսավարող սուբյեկտների համար: Միաժամանակ, լրացուցիչ հարկերը, իրենց հերթին, մեծացնում են ապրանքների և ծառայությունների ինքնարժեքը՝ խթանելով գնաճի բարձր տեմպը: Այս ամենը, սակայն, չի նշանակում, որ ստվերային դաշտի վերացումը կարող է նպաստել գնաճի մակարդակի կտրուկ նվազեցմանը: Ընդհակառակը, գնաճի մակարդակը կբարձրանա, քանի որ այն կազմակերպությունները, որոնք թաքցրել են իրենց իրական եկամուտները, ստեղծել են մի այնպիսի շուկա, որտեղ ապրանքների գներն ընդունելի են վերջնական սպառողի կողմից, սակայն դրանք չեն ներառում այն հարկերը, որոնք կառաջանան այն պարագայում, երբ այդ նույն կազմակերպությունները սկսեն աշխատել օրինական դաշտում: Հետևաբար՝ անհրաժեշտ է այդ գործընթացը կազմակերպել այնպես, որ վերջնական սպառողի համար այդ անցումնային շրջանը կտրուկ և ցավալի չլինի: Ընդ որում, հարկ է նշել, որ նման գործելաոճը կարող է հարվածել հատկապես այն փոքր և միջին կազմակերպություններին, որոնք, ի վիճակի չլինելով դիմակայելու ստվերից օրինական դաշտ անցմանը, ստիպված կլինեն ոչ միայն բարձրացնել ապրանքների գները, այլև պետական մարմիններին վճարել նախկինում թաքցրած հարկերը: Ուստի անցումնային փուլը պետք է հնարավորինս մեղմ կազմակերպել նման կազմակերպությունների համար, հակառակ դեպքում՝ դրանք ստիպված կլինեն կամ իրենց սնանկ ճանաչել, կամ լուծարվել, որը, իր հերթին, կնպաստի գործազրկության մակարդակի բարձրացմանը:

Գնաճի առաջացման օբյեկտիվ (առարկայական) պատճառներից մեկն էլ ապրանքների միջազգային գների բարձրացումն է, քանի որ ՀՀ-ն, որպես խոշոր

¹⁸¹ «Փոքր եվ միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2011 թվականի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում, համար 80-Ն, 2011:

ներմուծող երկիր, չի կարող շրջանցել նման երևույթը¹⁸²։ Քանի որ միջազգային գներն էականորեն ազդում են ՀՀ-ում գնաճի մակարդակի վրա, պետությունը փորձում է այս ուղղությամբ ձեռնարկել որոշակի քայլեր, մասնավորապես՝ զարգացնել տեղական արտադրությունը։ Սակայն, որքան էլ զարմանալի է, այդ պարագայում անգամ տեղական արտադրանքի գինը ոչ միայն զիջում, այլև գերազանցում է ներմուծվածի գինը։ Բանն այն է, որ այս դեպքում արտադրությանն անհրաժեշտ հումքը ներկրվում է դրսից և փոքր քանակներով, ինչը բարձրացնում է դրա չափման միավորի գինը՝ ներառյալ ներմուծման ժամանակ առաջացող բարձր հարկերը և ճանապարհածախսը։ Իսկ մեծ քանակությամբ հումք ներկրելու պարագայում անհրաժեշտ է ապահովել սպառման մեծ ծավալներ, ինչը սկսնակ արտադրողի համար բավական լուրջ խնդիր է, մանավանդ այն դեպքում, երբ շուկայում առկա են ներմուծված, ավելի մեծ ճանաչում ունեցող և գնային քաղաքականությամբ մատչելի ապրանքանիշներ։ Ուստի սպառողները շարունակում են նախապատվությունը տալ արտասահմանյան և ոչ թե տեղական ապրանքներին։ Այսպիսով ակնհայտ է՝ որքան էլ պետությունը բարձրացնում է հարկերը ներմուծվող ապրանքների և նվազեցնում դրանք ներմուծվող հումքերի նկատմամբ, որոնք նախատեսված են արտադրության համար¹⁸³, միևնույն է, միջազգային գների տատանումների ռիսկերից և հետևանքներից հայկական տնտեսությունը զերծ չի մնում, քանի որ հումքի գնի բարձրացումը ինքնաբերաբար բարձրացնում է արտադրանքի ինքնարժեքը։ Միաժամանակ, դրամի արժեզրկումը ներմուծման ժամանակ նույնպես էականորեն ազդում է գների վրա, քանի որ հումքը ձեռք է բերվում արտարժույթով։ Այս համատեքստում պետք է նշել, որ կան բազմաթիվ երկրներ, որոնք կարողանում են դիմակայել արտաքին ճնշումներին՝ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող սուբսիդավորմամբ փորձելով բնակչության սոցիալապես խոցելի խավերի համար մատչելի դարձնել գոնե առաջին անհրաժեշտության ապրանքները¹⁸⁴։ Տնտեսական բարենորոգումների դժվարին շրջանում՝ 1990-ական թթ. սկզբին, սեփական քաղաքացիներին արտաքին

¹⁸² www.srmstat.am

¹⁸³ «ՀՀ մաքսային օրենսգիրք» ՀՕ 83, ուժի մեջ է 2001 թ.:

¹⁸⁴ Թ. Մանասերյան, Գնաճի ներքին և արտաքին ռիսկերը և դրանց կառավարման հեռանկարները, Ա. Լոքյան՝ գլխավոր խմբագիր, Պետական կառավարման արդյունավետության ապահովման հիմնախնդիրները ՀՀ-ում, միջբուհական գիտաժողովի նյութերի ժողովածու, մաս 1, գիտական հանդես, «Հանրային կառավարում», խմբագրական խորհրդի նախ. Վ.Սարգսյան, 2014, էջ 23-29:

ճնշումներից պաշտպանելու նման միջոցների դիմեցին Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ մի շարք երկրներ, ներառյալ՝ ՀՀ-ն: Այդուհանդերձ, երկար ժամանակահատվածի համար նման քայլերն արմատական լուծում չեն կարող խոստանալ. պետության կարևորագույն մտահոգություններից է սոցիալական խնդիրները ոչ թե արհեստական պատնեշներով, այլ կայուն զարգացման համապատասխան կառուցակարգերի ձևավորմամբ լուծելը: Եվ բնավ գոհունակություն չի կարող պատճառել այն հանգամանքը, որ գնաճի ալիքը համեմատաբար ավելի ուժեղ հարված է հասցրել, օրինակ, հարևան երկրներին, և որ ՀՀ-ն այդ առումով ամենավատ վիճակում չի հայտնվել:¹⁸⁵

Որոշ առումով, որպես առարկայական գործոններ, էական ազդեցություն ունեն նաև համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի անբարենպաստ ազդեցությունը և աշխարհի տարբեր երկրներում սպառողների գնողունակության նկատելի անկումը, ինչը բազմիցս հիմնավորվել է վիճակագրական տվյալների օգնությամբ:¹⁸⁶

Գնաճի առաջացմանը նպաստող արտաքին ռիսկերի հաջորդ շարքն ավելի ընդգրկում է, և կարող է ավելի մեծ ու երկարատև վնասներ պատճառել տնտեսական ակտիվությանն ու գների մակարդակին: Խոսքը վերաբերում է զարգացած երկրների կողմից պետական խոշորածավալ սուբսիդավորման (լրահատկացումների) քաղաքականությանը,¹⁸⁷ որով պայմանավորված՝ տեղի է ունենում գների արհեստական իջեցում, ինչպես նաև ապրանքների մրցունակության արհեստական բարձրացում: Նշված քաղաքականությունը կարելի է դասել համաշխարհային կարևորագույն տնտեսական հիմնախնդիրների շարքը, քանի որ լրջագույն վնաս է պատճառում զարգացող երկրներին, որտեղ աշխատավարձի և արտադրության ինքնարժեքը ցածր է, իսկ մի շարք ապրանքների, մասնավորապես՝ գյուղմթերքների մրցունակությունը՝ բարձր: Հետևաբար՝ նման իրավիճակում գյուղատնտեսությամբ զբաղվելը դառնում է ոչ շահավետ: Հավելենք նաև, որ սուբսիդավորման

¹⁸⁵ Թ. Մանասերյան, Գնաճի ներքին և արտաքին ռիսկերը և դրանց կառավարման հեռանկարները, Ա.Լոքյան՝ գլխավոր խմբագիր, Պետական կառավարման արդյունավետության ապահովման հիմնախնդիրները ՀՀ-ում, միջբուհական գիտաժողովի նյութերի ժողովածու, մաս 1, գիտական հանդես, «Հանրային կառավարում», խմբագրական խորհրդի նախ. Վ.Սարգսյան, 2014թ, էջ 23-29:

¹⁸⁶ Նույն տեղում:

¹⁸⁷ Նույն տեղում:

քաղաքականությունն ուղղակիորեն հակասում է Արևմուտքի զարգացած երկրների կողմից լայնորեն հռչակվող և զարգացող աշխարհի համար որպես հորդոր հնչող՝ ազատական գաղափարախոսության սկզբունքներին:¹⁸⁸

Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ Հայաստանի Հանրապետություն գների մակարդակը կախված է նաև այլ երկրների կողմից մի շարք ապրանքների սուբսիդավորման հանգամանքով, որը հանգեցնում է տեղական ապրանքների գների մրցունակության անկմանը: Բանն այն է, որ սպառողին մրցակցային գներով մատուցվող մի շարք ապրանքների արտադրությունը դառնում է չափազանց ծախսատար և ուղիղ համեմատական կախվածության մեջ է հայտնվում տվյալ երկրի պետական բյուջեի սուբսիդավորման համար նախատեսված աղբյուրների ծավալներից: Ընդ որում, եթե լրահատկացումները, հատկապես համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում, պակասում են, ապա, համապատասխանաբար, նվազում են նաև այդ ապրանքների արտադրության ծավալները: Այս ամենի հետևանքով միջազգային ապրանքային բորսաներում առաջանում է ապրանքային պակասուրդ, որն էլ, անշուշտ, հանգեցնում է դրանց գների կտրուկ աճին:¹⁸⁹

Հատկանշական է այն իրողությունը, որ որոշ երկրներ, որոնք մի շարք ապրանքատեսակների արտադրության գծով ունեն առավելություն, կարող են արհեստականորեն առաջացնել տվյալ ապրանքների պակասուրդ՝ պահանջարկի մակարդակը բարձրացնելու նպատակով: Նման քայլով, ինքնաբերաբար, բարձրանում են այդ ապրանքների գները, որոնց շարքն են դասվում նավթը, գազը, այլ էներգակիրներ, ինչպես նաև ոսկին, ադամանդը և այլն:

Պետք է նշել, որ վերոբերյալ իրադրությունն առավել հաճախադեպ է, երբ գործում են նույն ապրանքի արտադրության բնագավառում միասնական շահերով համախմբված ռազմավարական այնպիսի միություններ, ինչպես, օրինակ, նավթ

¹⁸⁸ Թ. Մանասերյան, Գնաճի ներքին և արտաքին դիսկերը և դրանց կառավարման հեռանկարները, Ա.Լոբյան՝ գլխավոր խմբագիր, Պետական կառավարման արդյունավետության ապահովման հիմնախնդիրները ՀՀ-ում, միջբուհական գիտաժողովի նյութերի ժողովածու, մաս 1, գիտական հանդես, «Հանրային կառավարում», խմբագրական խորհրդի նախ. Վ.Սարգսյան, 2014թ, էջ 23-29

¹⁸⁹ Նույն տեղում:

արտահանող երկրների կազմակերպությունն է՝ OPEC-ը (հիմնադրվել է 1960 թվականին) և այլ համանման կառույցներ:¹⁹⁰

Այս առումով, բացառություն չեն նաև սննդամթերքի շուկաները: Պարենի պակասությունը ներկայումս լուրջ հարված է հասցրել այնպիսի հարուստ երկրների, ինչպիսիք են Չինաստանը և Հնդկաստանը, որոնք, ավանդաբար, նաև սննդամթերք արտահանողներ են: Ուշագրավ է, որ սննդամթերքի գնաճը համաշխարհային մակարդակով որակվում է որպես սպառնալիք միջազգային տնտեսական անվտանգությանը և ամենաբուռն քննարկումների պատճառ է դարձել: Այսպես՝ ՄԱԿ-ի հովանու ներքո գործող World Food Program միջազգային պարենային կազմակերպությունը պարենային այս ճգնաժամն անվանել է «անաղմուկ ցունամի», որի հետևանքով առնվազն 100 մլն մարդ կարող է հայտնվել սովի ճիրաններում: Միաժամանակ, Goldman Sachs ներդրումային հայտնի ընկերության մասնագետները ներմուծել են տնտեսագիտական նոր եզրույթ՝ «ագֆլյացիա»¹⁹¹, որով բնութագրում են սննդամթերքի գների բարձր թռիչքը (agriculture և inflation բառերի համադրում): Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ Գորդոն Բրաունը սննդամթերքի գների թռիչքը նույնքան վտանգավոր է համարում, որքան ֆինանսական ճգնաժամի բացասական հետևանքները, իսկ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Քի Մունի համոզմամբ՝ սննդամթերքի նման գնաճը համընդհանուր ճգնաժամ է, որը կարող է լուրջ վնաս հասցնել համաշխարհային տնտեսությանն ու միջազգային անվտանգությանը: Այս բոլոր մտահոգությունների հիմքում մեկ գաղափար է՝ անհրաժեշտ են համախմբված գործողություններ սննդամթերքի շուկայում գնաճը զսպելու համար: Ի դեպ, այսօր արդեն ավելի քան 50 երկիր պատժամիջոցներ (սանկցիաներ) է կիրառում՝ սեփական երկրից սննդամթերքի արտահանումը կասեցնելու նպատակով: Ինչ վերաբերում է ԱՄՆ-ին, ապա Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո թերևս առաջին

¹⁹⁰ Թ. Մանասերյան, Գնաճի ներքին և արտաքին ռիսկերը և դրանց կառավարման հեռանկարները, Ա.Լոքյան՝ գլխավոր խմբագիր, Պետական կառավարման արդյունավետության ապահովման հիմնախնդիրները ՀՀ-ում, միջբուհական գիտաժողովի նյութերի ժողովածու, մաս 1, գիտական հանդես, «Հանրային կառավարում», խմբագրական խորհրդի նախ. Վ.Սարգսյան, 2014թ, էջ 23-29

¹⁹¹ <http://www.trefis.com/articles/35958/unilevers-agflation-challengeto-preserve-margins-or-market-share/2011-01-21>

անգամ այստեղ կիրառվում են սննդամթերքի վաճառքի սահմանափակումներ (ներառյալ՝ հայտնի Costco և Sam's Club մեծածախ խանութների ցանցում):¹⁹²

Վերոնշյալից ելնելով՝ կարող ենք եզրակացնել, որ սննդամթերքի գների բարձր թոփքը՝ ազդեցիկ է ներկայումս բնորոշ է նաև Հայաստանի տնտեսությանը:

Միջազգային միտումների գնահատման հետ մեկտեղ, պակաս կարևոր չէ նաև գնաճի ներքին պատճառների վերլուծությունը: Ուսումնասիրությունները վկայում են, որ դրանց հիմքում նույնպես ինչպես առարկայական, այնպես էլ ենթակայական դրդապատճառներն են: Նախ՝ անդրադառնանք առարկայական դրդապատճառներին, որոնց մի մասը պայմանավորված է ոչ միայն այն հանգամանքով, որ ներքին ազատականացված շուկան ուղղակիորեն կապված է համաշխարհային հետ, այլև նրանով, որ առ այսօր ՀՀ տնտեսությունը ոչ միայն չի թելադրում արտահանվող ապրանքների գները, այլև ընդունում է համաշխարհային շուկայում ձևավորվածները: Ավելի հստակ պատկերացնելու համար ստեղծված իրավիճակը՝ հարկ է վերստին անդրադառնալ ՀՀ ԱՎԾ պաշտոնական հրապարակումներին առ այն, որ 2016 թ. հունվարի 1-ի դրությամբ ներմուծման ծավալները 2.5 անգամ գերազանցել են արտահանումը: Հետևաբար՝ կարելի է եզրահանգել, որ տեղական սպառողն ապրանքների համար վճարում է՝ ըստ համաշխարհային շուկայում ձևավորված և տրանսպորտային ծախսերով, մաքսատուրքերով և ներկրողի շահույթով (հաճախ՝ գերշահույթով) պայմանավորված գների:¹⁹³

Դիտարկելով գնաճի վրա ազդող արտաքին գործոնները՝ այս դեպքում շրջանցել ենք մենաշնորհներին, ստվերային տնտեսությանն ու մաքսանենգությանն առնչվող տարրերը՝ տեսականորեն համարելով, որ բոլոր տնտեսավարողներն ու ներմուծողները գործում են օրենսդրական և իրավական կատարյալ դաշտում: Նշված

¹⁹² Թ. Մանասերյան, Գնաճի ներքին և արտաքին դիսկերը և դրանց կառավարման հեռանկարները, Ա.Լոքյան՝ գլխավոր խմբագիր, Պետական կառավարման արդյունավետության ապահովման հիմնախնդիրները ՀՀ-ում, միջբուհական գիտաժողովի նյութերի ժողովածու, մաս 1, գիտական հանդես, «Հանրային կառավարում», խմբագրական խորհրդի նախ. Վ.Սարգսյան, 2014թ, էջ 23-29:

¹⁹³ Ապրանքների արտահանում և ներմուծում, արտաքին հատված, 2011, http://armstat.am/file/article/sv_12_10a_411.pdf

հիմնախնդիրների համատեքստում գնաճի վրա ազդող գործոնների ուսումնասիրությունը, կարծում ենք, մեկ այլ՝ առանձին վերլուծության առարկա է:¹⁹⁴

Այս ամենով հանդերձ, արտաքին շուկաներից առաջացող ներքին գնաճը կարող է լինել մի կողմից՝ անկանխատեսելի, մյուս կողմից՝ կանխատեսելի: Առաջին դեպքում հաշվի չեն առնվում համաշխարհային շուկայի զարգացումներն ու միտումները, իսկ երկրորդ դեպքում ձևավորվում են որոշակի սպասումներ՝ պետական կառավարման մարմիններին և տնտեսավարողներին հնարավորություն ընձեռելով համապատասխան քայլեր ձեռնարկելու և խուսափելու հնարավոր ցնցումներից:¹⁹⁵

Գնաճի բարձր տեմպը զսպելու գործում անհրաժեշտ պայման է պետության ֆինանսական ռեսուրսների բավարար քանակության առկայությունը, քանի որ դրանց անբավարարությունն առաջ է բերում նաև կենսաապահովման նվազագույն զամբյուղին համարժեք նվազագույն աշխատավարձի, կենսաթոշակների և նպաստների համապատասխան ինդեքսավորման անկարողություն: Ի վերջո, չի կարելի անտեսել եղանակային անբարենպաստ պայմանների գործոնը, որի առկայության պայմաններում գյուղացիական տնտեսություններն ի վիճակի չեն լինում նույնիսկ մասամբ փոխհատուցելու համաշխարհային տնտեսությունից «ներմուծված գնաճը»:

Կրկին անդրադառնալով պետության կարգավորիչ և վերահսկիչ գործառույթներին՝ հարկ ենք համարում շեշտադրել տնտեսության մրցունակության միջոցով գնաճի վրա ներազդելու այնպիսի կարևոր գործիքների դերակատարումը, ինչպիսիք են մաքսային, հարկային և դրամավարկային լծակները:

Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ –ում տարեցտարի ավելի ու ավելի շատ փորձեր են արվում կատարելագործելու երկրի հարկային համակարգը, շտկելու կիրառվող կառուցակարգերը, այնուամենայնիվ, դրանք որպես արդյունավետ

¹⁹⁴ Թ. Մանասերյան, Գնաճի ներքին և արտաքին ռիսկերը և դրանց կառավարման հեռանկարները, Ա.Լոբյան՝ գլխավոր խմբագիր, Պետական կառավարման արդյունավետության ապահովման հիմնախնդիրները ՀՀ-ում, միջբուհական գիտաժողովի նյութերի ժողովածու, մաս 1, գիտական հանդես, «Հանրային կառավարում», խմբագրական խորհրդի նախ. Վ.Սարգսյան, 2014թ, էջ 23-29:

¹⁹⁵ Measuring poverty in Armenia: Methodological explanations http://www.armstat.am/file/article/poverty_2010e_7.pdf

քննադրելն առայժմ ճիշտ չէ՝ հաշվի առնելով միևնույն օրենքների մեջ կատարվող հաճախակի և բազմաթիվ փոփոխությունները:

Այսպես կոչված՝ «կոշտ վարչարարությունը» նպատակ ունի կրճատելու ստվերային տնտեսությունը և ավելացնելու հարկահավաքից առաջացած գումարների ծավալը պետական բյուջեում, ինչպես նաև ստեղծելու հավասար պայմաններ տնտեսավարող սուբյեկտների համար: Այս քաղաքականությունը միտված է հարկերից խուսափելու բոլոր հնարավորությունների և հնարավոր ռիսկերի վերացմանը: Այդուհանդերձ, ստվերային շուկայի ազդեցությունը տնտեսության վրա ակներև է, որի հետևանքով նվազում են պետական եկամուտները: Որպեսզի ֆինանսական ռեսուրսները բավարարեն պետբյուջեի ծախսերի ապահովմանը, անվերջ կարելի է բարձրացնել հարկային բեռը, ինչը տեղի է ունենում իրականում՝ տարեցտարի կենտրոնանալով ավելի փոքրաթիվ տնտեսավարողների ուսերին: Լրացուցիչ հարկերն էլ, իրենց հերթին, ավելանալով ապրանքների և մատուցվող ծառայությունների ինքնարժեքին, իրենց հերթին, նպաստում են գնաճի տեմպերի մեծացմանը: Անշուշտ, նման քաղաքականությունը ոչ միայն արդյունավետ չէ, այլև հիմնականում հակառակ ազդեցություն է ունենում տնտեսական ակտիվության վրա՝ արտացոլվելով որոշակի ապրանքների թանկացմամբ, ինչպես նաև մի շարք տնտեսավարող սուբյեկտների, որոնց շրջանառության զգալի հատվածը երբեք չի արտացոլվել հարկային հաշվետվություններում, մրցակցությունից դուրս մնալով:

Գնաճի իրական պատճառների թվում կարելի է նշել նաև մաքսանենգությունը, մաքսային անարդյունավետ քաղաքականությունը, ինչպես նաև եկամուտների հավաքագրմանն ուղղված հարկաբյուջետային քաղաքականության անարդյունավետությունը:

Գնաճին կարող է նպաստել նաև ավելացված արժեքի հարկը: Ինչո՞վ է դա պայմանավորված: Ինչպես գիտենք, Հայաստանում գոյություն ունեն մի քանի հարկատեսակներ: Քննարկենք, մասնավորապես, «Շահութահարկ»¹⁹⁶ և շահութահարկին փոխարինող հարկատեսակ համարվող՝ «Շրջանառության հարկ»¹⁹⁷ վճարող կազմակերպությունների համագործակցության արդյունքում գների

¹⁹⁶ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-155, ընդունված է 1998 թ.:

¹⁹⁷ «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-236-Ն, ընդունված է 2013 թ.:

բարձրացման պատճառները: Իրավիճակն էլ ավելի լավ պատկերացնելու համար ուսումնասիրենք տարբեր հարկատեսակներով աշխատող համապատասխան կազմակերպությունների փորձը: Բանն այն է, որ շահութահարկ վճարողները միաժամանակ ավելացված արժեքի հարկ վճարողներ են, եթե, իհարկե, օրենքով այլ բան նախատեսված չէ, իսկ շրջանառության հարկ վճարողներն ազատված են ԱԱՀ-ից և հարկվում են իրենց ընդհանուր շրջանառությունից՝ կախված գործունեության տեսակից: Այժմ դիտարկենք մի իրավիճակ, երբ շրջանառության հարկ վճարող՝ արտադրությամբ զբաղվող անհատ ձեռներեց Արսեն Խալաթյանը (այսուհետ՝ Ա) իր ապրանքը փորձում է վաճառել ԱԱՀ վճարող «Բաբիկ-90 ՍՊԸ» (այսուհետ՝ Բ) կազմակերպությանը: Ենթադրենք՝ «Ա» կազմակերպությունը մեկ միավոր արտադրանք արտադրելու համար պետք է ձեռք բերի 1 կգ հումք, որի արժեքն է 100 դրամ՝ ներառյալ ԱԱՀ, որը 100 դրամի 16.67%-ն է¹⁹⁸, այսինքն՝ 16.67 դրամ: Ձեռք բերելով հումքը՝ նրան անհրաժեշտ է մշակել դա: Դիցուք՝ պատրաստի արտադրանք ստանալու համար նա կատարում է ևս 50 դրամի ծախս, որը ներառում է աշխատանքի, կոմունալ ծառայությունների և այլ ծախսեր: Հետևաբար՝ պատրաստի արտադրանքի ինքնարժեքը 150 դրամ է: Ա կազմակերպությունը դա վաճառում է 160 դրամով՝ ստանալով 10 դրամ շահույթ: Բ կազմակերպությունը, ձեռք բերելով այդ նույն ապրանքը 160 դրամով, ավելացնում է ևս 10 դրամ՝ որպես սեփական շահույթ, գումարած 20% ԱԱՀ: Արդյունքում ապրանքը վաճառվում է 204 դրամով:

Այժմ դիտարկենք մեկ այլ իրավիճակ, երբ Ա կազմակերպությունը նույն գնով՝ 160 դրամով վաճառք է իրականացնում այլ տեսակի շրջանառության հարկ վճարող՝ «Վուլֆ Գրուպ ՍՊԸ» կազմակերպությանը (այսուհետ՝ Գ): Վերջինս, ձեռք բերելով միևնույն ապրանքը 160 դրամով, պետք է դա վաճառի 179 դրամով, որպեսզի 5% հարկվելուց հետո (առուվաճառքով զբաղվելու դեպքում շրջանառության հարկը 5%¹⁹⁹ է՝ համաձայն «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի) կարողանա ստանալ միևնույն՝ 10 դրամ շահույթը: Համեմատելով Բ և Գ կազմակերպությունների վաճառքի գները՝ հստակ տեսնում ենք, որ դրանց տարբերությունը 13% է: Հետևաբար՝ կարելի է

¹⁹⁸ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-118, ընդունված է 1997 թ.:

¹⁹⁹ «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-236-Ն, ընդունված է 2013 թ.:

եզրակացնել, որ Գ կազմակերպությունը, չցանկանալով կորցնել հավելյալ՝ 13% շահույթը, կբարձրացնի ապրանքի գինը՝ սահմանելով դա 204 դրամ:

Տնտեսության իրական հատվածի վարկերի բարձր տոկոսադրույքները նույնպես ազդում են գնաճի մակարդակի վրա, ինչպես, օրինակ, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի դեպքում է, երբ վերջինիս վերաֆինանսավորման տոկոսադրույքն անդրադառնում է առևտրային բանկերի կողմից տրամադրվող վարկերի տոկոսադրույքների վրա:²⁰⁰

Գնաճի առաջացման ներքին պատճառներից են նաև պետական ռեսուրսների պակասությունը, ինչպես նաև երկրի որդեգրած արժույթային քաղաքականությունը: Ազգային արժույթի արժեզրկումը, ընդհանուր առմամբ, կարող է նպաստել տնտեսության մրցունակության բարձրացմանն ու խթանել արտահանումը, սակայն ավելի երկար ժամանակահատվածում դա կարող է բացասաբար անդրադառնալ գների մակարդակի վրա և հանգեցնել գնաճի: Մյուս կողմից էլ, արտահանման մեծ ծավալները, ապահովելով արտարժույթի մեծ ներհոսք, անխուսափելիորեն անդրադառնում են նաև փոխարժեքի մակարդակի վրա՝ բարձրացնելով ազգային արժույթի գնողունակությունը, հետևաբար՝ նաև արժեքը: Հետևաբար՝ փոխարժեքի որևէ մակարդակի ամրագրումը առաջնահերթ լուծում պահանջող լրջագույն խնդիրներից է:²⁰¹

3.3. Գնաճի մակրոտնտեսական կարգավորման արդյունավետության գնահատումը և դրա բարելավման ուղիները ՀՀ-ում

Գնաճի նպատակադրման և փոխարժեքային քաղաքականության ընտրությունը և դրանց համակարգային կառավարման արդյունավետությունը մեծ կարևորություն

²⁰⁰ Կենտրոնական բանկի տվյալների բազա, Դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքներ, www.cba.am

²⁰¹ Թ.Մանասերյան, Գնաճի ներքին և արտաքին ռիսկերը և դրանց կառավարման հեռանկարները, Ա. Լոքյան՝ գլխավոր խմբագիր, Պետական կառավարման արդյունավետության ապահովման հիմնախնդիրները ՀՀ-ում միջբուհական գիտաժողովի նյութերի ժողովածու, մաս 1, գիտական հանդես, «Հանրային կառավարում», խմբագրական խորհրդի նախ. Վ.Սարգսյան, 2014, էջ 23-29:

ունեն զարգացող երկրների դրամավարկային քաղաքականություններում:²⁰² Այս խնդիրների հետազոտումը հատկապես կարևորվում է Հայաստանի Հանրապետությունում՝ որպես երկարատև տնտեսական աճի ապահովման նախադրյալ: Գնաճի նպատակադրման քաղաքականության ընթացքում անվանական փոխարժեքի՝ որպես տնտեսական ցնցումների կլանիչի արդյունավետության հետազոտումը չափազանց էական է: Այս հարցն առնչություն ունի ինչպես փոխարժեքի, այնպես էլ ներքին գների փոփոխության աստիճանի հետ: Շատ դեպքերում փոխարժեքի և ներքին գների անցումային կապի ուսումնասիրության ընթացքում չի դիտարկվում տվյալ անցումային կապի և փոխարժեքի՝ որպես շոկի կլանման արդյունավետության, փոխհարաբերության հարցը:

Գնաճն իր տրամաբանությամբ մոտ է փոխարժեքի արժևորմանը, քանի որ առնչվում է ներքին շուկայում ազգային արժույթի գնողունակության ուժի փոփոխությանը: Ըստ էության, երկուսն էլ բնութագրվում են ազգային արժույթի գնողունակության իջեցմամբ: Հաճախ ազգային արժույթի արժևորումը կարող է գնաճի առաջացման պատճառներից մեկը հանդիսանալ երկրի ներսում: Միաժամանակ, հարկ է նշել, որ արտարժույթները նույնպես ենթակա են գնաճի, այսինքն, հնարավոր է, գնաճ տեղի ունենա առանց ազգային արժույթի արժևորման: Իսկ եթե արտարժույթը ենթակա է գնանկման, ապա հնարավոր է ազգային արժույթի արժևորում առանց գնաճի:

Փոխարժեքի և գնային պարիտետի համեմատությունը, մրցունակության տեսանկյունից, նպաստում է դրամի իրական շուկայական փոխարժեքի միջակայքի գնահատմանը: Հետևաբար՝ երբ հատկապես ճգնաժամային և հետճգնաժամային ժամանակահատվածներում գերազնահատվում է ազգային արժույթը, դա կարող է արհեստականորեն իջեցնել երկրի մրցունակությունը:

Հայաստանի Հանրապետության համար արտահանումը որոշիչ գործոն է: Դրա հարաբերությունը ՀՆԱ-ին, ինչպես փոքր երկրների պարագայում է, ոչ պակաս է, քան 30%-ը: Այսպիսով՝ փոխարժեքի և գնաճի կարգավորումը պետք է իրականացնել փոխկապակցված, ինչն էլ էապես կնպաստի արտահանման ծավալների աճին:

²⁰² Չ. Ֆրիդման, Զ. Լաքստոն, Ինչու գնաճի նպատակադրում, ԱՄՀ, 2009, էջ 247:

Հետևաբար՝ գնաճի կարգավորման արդյունավետությունը կախված է նրանից, թե ինչքանով է հաշվի առնվում դրա փոխկապվածությունների համակարգը:

Իհարկե, միշտ էլ առկա է «սողացող» գնաճի՝ պետական վերահսկողությունից դուրս գալու վտանգը, մասնավորապես՝ այն երկրներում, որտեղ արտադրության մակարդակը ցածր է, այդ թվում՝ նաև ՀՀ-ում, քանի որ տնտեսության կառուցվածքային ձևախեղումների պայմաններում դեռևս մշակված չեն տնտեսական գործունեության կարգավորման հստակ կառուցակարգեր:

Իրավամբ, առնվազն երկու հավանական իրավիճակներում գնաճը կարող է լրջորեն վնասել երկրի տնտեսական անվտանգությունը: Որպես առաջին իրավիճակ կարելի է դիտարկել այն, երբ գնաճի մակարդակը դառնում է երկնիշ ու հետզհետե անկառավարելի՝ վնասելով և՛ տեղական սպառողին, և՛ տեղական արտադրողին:

Երկրորդ իրավիճակը լճացումն է (ստագնացիան), երբ տնտեսության ներսում առկա գործազրկության բարձր մակարդակը զուգորդվում է բարձր գնաճով:

Մեթոդաբանության առումով, կարևոր է հաշվի առնել նաև ապրանքատեսակների սպառումն ըստ համայնքների (ակնհայտ է, որ Երևանում և հեռավոր գյուղական համայնքներում այդ ցուցանիշներն իրարից խիստ տարբերվում են), մինչդեռ ԱՎԾ-ի կողմից յուրաքանչյուր մարզից ընտրվել է ոչ թե մեկական գյուղ, այլ համեմատաբար բարվոք միջին կենսամակարդակի ունեցող քաղաք: Բացի այդ, բնական է, որ սպառողների տարբեր խմբեր նույն ապրանքատեսակների սպառման նկատմամբ տարբեր հակումներ են դրսևորում: Այսպես՝ աղքատության շեմին գտնվող սպառողներ, միջին խավ, հարուստներ և այլն: Հասարակության բևեռացման հանգամանքը նույնպես հաշվի առնված չէ ԱՎԾ-ի կողմից ներկայացվող հաշվետվություններում: Մեթոդաբանության խոցելիությունը մասամբ փորձում է հաղթահարել 2011 թ. հունվարի 25-ին ԱՎԾ ընդունած՝ «Տարվա ընթացքում ընթացիկ մակրոտնտեսական ցուցանիշների հավաքագրման, ամփոփման և հրապարակման աճողական մեթոդից դիսկրետ (զուտ ամսական) մեթոդին անցման մասին» որոշումը:

Անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել գնաճի հաշվարկի մեթոդաբանությանը:²⁰³ Միջազգային կառույցների առաջարկած 470 ապրանքների

²⁰³ www.armstat.am

ինդեքսի հաշվարկի հետ մեկտեղ, հարկ է ներկայացնել նաև առաջին անհրաժեշտության ապրանքների իրական գնաճն ու քայլեր ձեռնարկել դրանք թիրախավորելու և մեղմելու ուղղությամբ: Ներկայումս հասունացել է գյուղատնտեսական մթերքների գների աճն ամեն ամիս հաշվարկելու պահանջը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայիս գնաճի գերակշիռ մասը կազմում է սննդամթերքի գնաճը, որը «Goldman Sachs» ներդրումային ընկերության տնտեսագետներն անվանել են «ազֆյացիա»:²⁰⁴

ԱՎԾ-ի կողմից առաջարկվում է 2011 թ. հունվարից որդեգրված դիսկրետ հաշվարկից բացի (որն ընդգրկում է երկրի 10 մարզերի ընտրովի քաղաքները), կիրառել նաև գնաճի հաշվարկ՝ ըստ գյուղական բնակավայրերի, որտեղ գնաճն ավելի մեծ բացասական ազդեցություն ունի: Նպատակահարմար է գնաճը հաշվարկել ոչ միայն ըստ ամիսների, այլ նաև ըստ ապրանքների ծավալների՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ, օրինակ, տարեմուտին սպառվում են երկու-երեք անգամ ավելի շատ ապրանքներ, քան առանձին ամիսների ընթացքում, և դրանց միջինացումը ճշգրիտ պատկեր չի կարող արձանագրել:

Գնաճի մեթոդաբանության հիմքում հարկավոր է հնարավորինս հաշվի առնել բոլոր հավանական՝ արտաքին (առարկայական և ենթակայական) և ներքին (առարկայական և ենթակայական) պատճառները: Յուրաքանչյուր ամսվա կտրվածքով պետք է հաշվարկել սպառողական և կենսապահովման նվազագույն զամբյուղների արժեքը, որոնք, համաձայն «Կենսապահովման նվազագույն զամբյուղի մասին» ՀՀ օրենքի, կկիրառվեն կենսաթոշակների և նվազագույն աշխատավարձի ինդեքսավորման համար: Գնաճային ճնշումների մասին նախօրոք տեղեկանալու և ճիշտ կանխատեսումներ կատարելու համար կարելի է հաշվարկել նաև այնպիսի կարևոր ցուցանիշներ, ինչպիսիք են, օրինակ, արտադրողների գների (Producer Price Index, PPI, որն արտացոլում է տեղական արտադրության ինքնարժեքն առանց շրջանառության, ԱԱՀ-ի և այլ հարկերի), ապրուստի ծախսերի (Cost-of-living Index, COLI, որը հաշվի է առնում եկամուտների և ծախսերի աճի հաշվեկշիռը) և կապիտալի

²⁰⁴ Թ.Մանասերյան, «Գնաճի ներքին և արտաքին դիսկրետ և դրանց կառավարման հեռանկարները», Ա.Լոբջյան՝ գլխավոր խմբագիր, «Պետական կառավարման արդյունավետության ապահովման հիմնախնդիրները ՀՀ-ում» միջբուհական գիտաժողովի նյութերի ժողովածու, մաս 1, գիտական հանդես, հանրային կառավարում, Խմբագրական խորհրդի նախ. Վ.Սարգսյան, 2014թ, 23-29էջ

գնի (արժեթղթերի, անշարժ գույքի, փոխատվական կապիտալի և այլն) ինդեքսները, որոնք, սովորաբար, ավելի արագ են աճում, քան սպառողական գների ինդեքսը՝ հնարավորություն տալով դրանց տերերին գնաճից միակողմանի օգուտներ քաղելու:²⁰⁵

Իհարկե, ցանկալի է, որ վիճակագիրները պարբերաբար հանրությանը ներկայացնեն նաև ՀՆԱ դեֆլատորը՝ որպես միանման ապրանքախմբերի գների փոփոխություններ, ազգային արժույթի գնողունակության մակարդակը (պարիտետը), սպառման ընթացիկ ծախսերի հարաբերությունը նույն ապրանքների սպառման բազիսային ժամանակահատվածի ձեռքբերման ծախսերի նկատմամբ կամ, այսպես կոչված, Պաաշեի ինդեքսը և այլն:

Շնորհիվ վերոնշյալ մոտեցումների՝ ոչ միայն կարտացոլի գների տատանումների իրական պատկերը, այլև աներկբայորեն կավելանա գների վերահսկողության առումով սպառողների վստահությունը, ինչն էլ, իր հերթին, կարևոր ազդակ կդառնա շուկայում առկա դրական սպասումների և սպառողների վարքագծի համար:

Աղյուսակ 5²⁰⁶

**Գնաճի մակրոտնտեսական կարգավորման
արդյունավետության գնահատումը ՀՀ-ում 2008-2015 թթ.**

Ցուցանիշներ	2008թ	2009թ	2010թ	2011թ	2012թ	2013թ	2014թ	2015թ
Սպառողական գների ինդեքս, նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, աճողական, (%)	109	103.4	108.2	107.7	102.6	105.8	103	103.7
12-ամսյա գնաճ (դեկտեմբեր-դեկտեմբեր)	9	3.4	8.2	7.7	2.6	5.8	3	3.7
ՀՀ պետական թուղթով սահմանված 12-ամսյա գնաճի շեմ	4 ± 1,5%	4 ± 1,5%	4 ± 1,5%	4 ± 1,5%	4 ± 1,5%	4 ± 1,5%	4 ± 1,5%	4 ± 1,5%
Գնաճի մակրոտնտեսական կարգավորման արդյունավետության որակական գնահատական	Ոչ արդյունավետ	Արդյունավետ	Ոչ արդյունավետ	Ոչ արդյունավետ	Արդյունավետ	Ոչ արդյունավետ	Արդյունավետ	Արդյունավետ
Գնաճի մակրոտնտեսական կարգավորման արդյունավետության քանակական գնահատական,	37.0%	100%	50.4%	60.0%	100%	94.0%	100%	100%
Շեղումը սահմանաչափից (%)	3.5%	0%	2.7%	2.2%	0%	0.3%	0%	0%

²⁰⁵ Թ.Մանասերյան, «Գնաճի ներքին և արտաքին ռիսկերը և դրանց կառավարման հեռանկարները», Ա.Լոքյան՝ գլխավոր խմբագիր, «Պետական կառավարման արդյունավետության ապահովման հիմնախնդիրները ՀՀ-ում» միջբուհական գիտաժողովի նյութերի ժողովածու, մաս 1, գիտական հանդես, հանրային կառավարում, Խմբագրական խորհրդի նախ. Վ.Սարգսյան, 2014թ, 23-29էջ

²⁰⁶ Գծապատկերը կազմել է ՀՀ ԿԲ 2008-2015 թթ. տարեկան տեղեկագրերի տվյալների օգտագործմամբ՝ հեղինակի վերլուծությունների հիման վրա:

Աղյուսակ 5-ում գնաճի մակրոտնտեսական կարգավորման արդյունավետության քանակական գնահատումը կատարվել է՝ հաշվի առնելով ԿԲ սահմանած շեմից՝ 4%-ից շեղումը մինչև 1.5%, ինչը համարվում է թույլատրելի: Հետևաբար՝ մակրոտնտեսական կարգավորումն աչքի է ընկնում 100% արդյունավետությամբ, իսկ 5.5%-10% ընկած միջակայքում արդյունավետության մակարդակը նվազում է մինչև 0%: Ըստ այդմ՝ ԿԲ-ի կողմից գնաճի նպատակադրման քաղաքականության արդյունավետությունը կարելի է հաշվարկել՝ հիմք ընդունելով սահմանված գնաճի մակարդակի շեղման (նշանակենք y տառով) հարաբերակցությունը 5.5%-ի նկատմամբ: Դա առավել տեսնելի է հետևյալ բանաձևում.

Գնաճի մակրոտնտեսական

$$\text{Կարգավորման} = 1 - (y/5.5) \times 100$$

արդյունավետություն,


որտեղ

y -ը սահմանված գնաճի մակարդակի շեղումն է,

5.5%-ը՝ ՀՀ ԿԲ սահմանած գնաճի առավելագույն մակարդակը:

Գնաճի մակրոտնտեսական կարգավորման արդյունավետության գնահատման ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 5-ում:

Գնահատումը կատարվել է որակական և քանակական սկզբունքներով: Որակական գնահատական տալու համար պարզվել է, թե արդյոք առանձին տարիներին գնաճի ցուցանիշը բավարարել է ՀՀ պետական բյուջեով տվյալ տարվա համար սահմանված առավելագույն և նվազագույն շեմերը: Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ 2006-2007 թթ. գնաճը պահպանվել է սահմանված միջակայքում, որը 2006 թ. և 2007 թ. համար համապատասխանաբար սահմանված էր 3% և $4 \pm 1.5\%$, հետևաբար՝ գնաճի մակրոտնտեսական կարգավորման մակարդակը կարելի է գնահատել որպես արդյունավետ: Սա պայմանավորված է տվյալ ժամանակահատվածում ՀՀ տնտեսական կայունությամբ և զարգացման միտումներով:



Գծապատկեր 13. ՀՀ սպառողական գների ինդեքսը 2006-2015 թթ.

Գծապատկերից ակնհայտ է, որ ուսումնասիրվող ամբողջ ժամանակաշրջանում գնաճի ամենաբարձր մակարդակը՝ 9%, արձանագրվել է 2008 թ., ինչի արդյունքում 3.5%-ով խախտվել է ՀՀ պետական բյուջեով սահմանված գնաճի շեմը, հետևաբար՝ տվյալ տարվա համար գնաճի մակրոտնտեսական կարգավորումը գնահատվում է որպես ոչ արդյունավետ: Նմանատիպ պատկեր է արձանագրվել նաև 2010-2011 թթ. ընթացքում, երբ գրանցվել է գնաճի՝ համապատասխանաբար 8.2% և 7.7% արժեք, ըստ որի՝ սահմանված շեմը խախտվել է 2.7%-ով և 2.2%-ով:

2014-2015 թթ. ընթացքում, ՀՀ ԿԲ-ի կողմից վարվող դրամավարկային քաղաքականության շնորհիվ, հնարավոր է եղել ապահովել գնաճի ընդունելի մակարդակ, համապատասխանաբար՝ 3% և 3.7%, ուստի նշված ժամանակաշրջանում գնաճի մակրոտնտեսական կարգավորումը գնահատվում է որպես արդյունավետ:

Գնաճի ընդունելի սահմանաչափերից շեղում արձանագրած տարիների (2008, 2010, 2011, 2013) ցուցանիշների ուսումնասիրության արդյունքում բացահայտվել է շեղման չափի նվազման միտում, ինչը վկայում է ՀՀ ԿԲ-ի կողմից վարվող քաղաքականության բարելավման մասին: Ընդ որում, առավելագույն շեղում՝ 3,5%, արձանագրվել է 2008 թ., իսկ նվազագույն՝ 0.3%, 2013 թ.:

Գնաճի մակրոտնտեսական կարգավորման արդյունավետությունը գնահատելու համար պետք է պարզել, թե որքանով են նպաստաբեր այդ քաղաքականության փոխանցման կառուցակարգային լծակները: Հարկ է նշել, որ դրանք այն ուղիներն են, որոնց միջոցով դրամավարկային քաղաքականությունն ազդում է ձեռնարկությունների, սպառողների և ֆինանսական միջնորդների՝ տնտեսական գործունեություն իրականացնելու որոշումների վրա, որոնք ուղղակիորեն անդրադառնում են տնտեսական ակտիվության և գների վրա:²⁰⁷


Փոխանցման կառուցակարգերի լծակները բազմաթիվ են (տոկոսադրույքի, փոխարժեքի, վարկային, արժեթղթերի գների փոփոխության, հարստության էֆեկտի, կանխիկ հոսքերի, իրացվելիության և այլ), սակայն դրանցից առավել ազդեցիկը երկուսն են. առաջին՝ կարճաժամկետ տոկոսադրույքների, երկրորդ՝ փոխարժեքի փոփոխություն:

Կարճաժամկետ տոկոսադրույքների փոփոխությունն իրականացվում է հիմնականում ռեպո գործառնությունների միջոցով: Դրանց աճը մեծացնում է ռիսկային նախագծերի ֆինանսավորման տեսակարար կշիռը, որը հանգեցնում է չվերադարձվող վարկերի աճին, բանկերի կողմից լրացուցիչ վերահսկողական ծախսերի իրականացմանը և արդյունքում՝ վարկավորման ծավալների կրճատմանը:²⁰⁸

Տոկոսադրույքների փոփոխությամբ ԿԲ-ն կարգավորում է շրջանառության մեջ փողի քանակը և ազդում ինֆլյացիայի վրա: Սակայն պետք է նշել, որ ՀՀ տնտեսության և բանկերի վարկային պորտֆելի դոլարայնացման բարձր մակարդակի պատճառով այս լծակի արդյունավետությունը ցածր է, քանի որ միայն մասամբ է ազդում բանկերի վարկավորման ծավալների վրա:

²⁰⁷ ՀՀ կենտրոնական բանկի կողմից գնաճի նպատակադրման ռազմավարության ընդունման հիմնավորում, էջ 12:


²⁰⁸ Նույն տեղում, էջ 13:



Գծապատկեր 14. ՀՀ բանկերի կողմից ՀՀ ռեզիդենտներին տրամադրված վարկերի արժույթային կառուցվածքը 2006-2015 թթ.²⁰⁹

Ինչպես վերը նշեցինք, գնաճի մակրոտնտեսական կարգավորման երկրորդ էական լծակը փոխարժեքի փոփոխությունն է: Գնաճի հիմնական պատճառներից մեկը ՀՀ դրամի արժեզրկումն է, որը հանգեցնում է ներկրվող ապրանքների թանկացմանը և գնաճի մեծացմանը: Դա կանխելու համար ՀՀ կենտրոնական բանկն իրականացնում է արտադրության ինտերվենցիաներ, որոնց միջոցով մեծացնում է արտադրության առաջարկը և նպաստում դրա արժեզրկմանը (այսինքն՝ դրամի արժևորումը):


²⁰⁹ Գծապատկերը կազմել է ՀՀ ԿԲ 2006-2015 թթ. տարեկան տեղեկագրերի տվյալների օգտագործմամբ՝ հեղինակի վերլուծությունների հիման վրա:



Գծապատկեր 15. ՀՀ ԿԲ-ի կողմից արտարժույթային ինտերվենցիաների և գնաճի զսպման կապը

Այս լծակն ավելի գործուն է և հաճախ է օգտագործվում ՀՀ ԿԲ-ի կողմից. մասնավորապես՝ 2014 թվականի տարեվերջին տեղի ունեցած՝ ՀՀ դրամի արժեզրկման ընթացքում ԿԲ-ի կողմից ամենօրյա ռեժիմով արտարժույթի ինտերվենցիաներ էին իրականացվում՝ նպատակ ունենալով կանխելու դրամի հետագա արժեզրկումը:

Գծապատկեր 14-ի տվյալները ցույց են տալիս, որ, չնայած արտարժույթային ինտերվենցիաների իրականացմանը, 19.11.14 թ.- 17.12.14 թ. ընթացքում ՀՀ դրամը շարունակում էր արժեզրկվել, սակայն, ի վերջո, հաջողվեց կանխել հետագա արժեզրկումը և 2014թ. տարեվերջին փոխարժեքը հաստատել 475-ի ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար մակարդակի վրա: Սա նշանակում է, որ ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության փոխանցման կառուցակարգի՝ փոխարժեքի փոփոխության լծակն արդյունավետ է և կարող է կարճաժամկետ հատվածում կանխել փոխարժեքի կտրուկ տատանումները:



Գծապատկեր 16. ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքը 2014 թ. տարեվերջին²¹⁰

Այնուամենայնիվ, պետք է նշել, որ 2014 թվականի տարեվերջին հնարավոր չեղավ իրականացնել գնաճի արագ զսպում, ինչը հանգեցրեց նրան, որ դեկտեմբեր ամսի կեսերին փոխարժեքն անցավ 500 ՀՀ դրամ/ԱՄՆ դոլարի շեմը: Սա պայմանավորված էր այն հանգամանքով, որ երկիրը չունի բավարար արժույթային պահուստներ, որպեսզի կարողանար ապահովել մեծածավալ ներարկումների իրականացում, որոնք կկանխեին դրամի կտրուկ արժեզրկումը հատկապես 2014 թ. դեկտեմբերի կեսերին: Հետևաբար՝ կարող ենք եզրակացնել, որ փոխարժեքի փոփոխության լծակի արդյունավետությունը կախված է բավարար արժույթային պահուստների առկայությունից և դրանց նշանակալի ծավալների արագ ներարկման հնարավորությունից, հակառակ դեպքում՝ հնարավոր չի լինի արագորեն կանխել գնաճը:

²¹⁰ ՀՀ ԿԲ տարեկան տեղեկագիր 2014, էջ 72:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դրված նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ ատենախոսը իրականացրել է գնաճի մակրոտնտեսական կարգավորման արդյունավետության հիմնախնդիրների ուսումնասիրություն և վերլուծություն, հանգելով մի շարք արդյունքների, որոնք ներկայացված են ստորև.

- Գնաճը կարելի է բնութագրել որպես տնտեսության մեջ գների ընդհանուր մակարդակի բարձրացում, որն ուղեկցվում է դրամական միավորի արժեզրկմամբ: Գնաճի մակարդակը կախված է երկրի տնտեսական կայունության և տնտեսական ազատության մակարդակից: Այն ունի լուրջ սոցիալ-տնտեսական ազդեցություն, մասնավորապես՝ ՀՆԱ մակարդակի վրա: Գնաճը, ըստ իր տեսակի, ունենում է տարբեր ֆինանսական գործոններ: Պահանջարկածին կամ պահանջարկի գնաճը առաջ է բերում փողի էմիսիա, եկամուտների տեղաբաշխում, բյուջեի մեծացում, զբաղվածության մակարդակի աճ: Այն երկար ժամանակահատվածում բերում է երկարատև հավասարակշռություն: Ծախսածին գնաճի ժամանակ տեղի է ունենում միավոր արտադրանքի ինքնարժեքի բարձրացում, որին զուգահեռ առաջ է գալիս արտադրության ծավալի կրճատում, միաժամանակ բարձրանում են նաև միավոր արտադրանքի գները, պաշարները գերազնահատվում են և այլն:
- Գնաճը և դրա մակարդակը, սովորաբար, կարգավորվում են երկրի դրամավարկային քաղաքականության գործիքների միջոցով, որը ՀՀ-ում իրականացնում է Կենտրոնական բանկը: ՀՀ կենտրոնական բանկի հիմնական խնդիրն է գների կայունացման ապահովումը, որը հնարավոր չէ պահպանել զրոյական մակարդակի վրա: Հետևաբար՝ գների կայունությունը գնաճի չափավոր մակարդակի պահպանումն է: Դրամավարկային քաղաքականության էությունը կայանում է նրանում, որ կենտրոնական բանկը դրա շնորհիվ ձգտում է դրամական զանգվածի

քանակական փոփոխությունների միջոցով ներգործել տնտեսական աճի տեմպերի, փողի զանգվածի և հասարակության գործարար ակտիվության վրա: Դա իրականացվում է դրամավարկային գործիքների շնորհիվ:

- Կենտրոնական բանկը իր նպատակներին հասնելու համար կիրառում է վերաֆինանսավորման քաղաքականությունը (անուղղակի գործիք), գործառնությունները բաց շուկայում, առևտրային բանկերի ավանդների պարտադիր պահուստավորումը: ՀՀ-ում ԿԲ-ն ֆինանսական շուկաներում հանդես է գալիս դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներով՝ հիմնական վերաֆինանսավորման գործիք, ճշգրտող գործիքներ, կառուցվածքային գործիքներ և մշտական հնարավորության գործիքներ: Հիմնական վերաֆինանսավորման գործիքը ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության կարևոր և ամենահաճախակի օգտագործվող գործիքներից մեկն է, որը ենթադրում է կենտրոնական բանկի նախաձեռնությամբ ռեպո գործարքի իրականացում. հիմնականում 7-օրյա ժամկետում:
- Հայաստանի Հանրապետությունում գնաճը բնութագրող միակ ցուցանիշը հանդիսանում է սպառողական գների ինդեքսը, որը որոշվում է սպառողական զամբյուղի ապրանքների և ծառայությունների ընթացիկ և բազիսային ժամանակաշրջանների գների ընդհանուր արժեքների հարաբերությամբ:
- Գնաճի մակարդակը և ԱՄՆ դոլարի ու ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքները փոխկապակցված են: Դրանց վերլուծության հիման վրա բացահայտվել է արտարժույթի փոխարժեքների ազդեցությունը գնաճի մակարդակի վրա: Ուսումնասիրության արդյունքում բացահայտվել է, որ ՀՀ-ում գնաճի մակարդակը հասել է իր գագաթնակետին 2009 թ. ավարտին՝ հասնելով 12 տոկոսի: Մինչույն ժամանակահատվածում հայկական դրամը արժևորված է եղել ԱՄՆ դոլարի նկատմամբ՝ 363.28 դրամ, իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ արժեզրկված՝ 11.5 դրամ: 2015 թ. ԱՄՆ դոլարի փոխարժեքը հասել է իր գագաթնակետին՝ արժեզրկելով դրամը՝

մինչև 477.92 դրամ, իսկ ՌԴ ռուբլին ընդհակառակը՝ արժեզրկվել է հասնելով 7.89 դրամի: Միևնույն ժամանակահատվածում գնաճի մակարդակը նվազել է՝ հասնելով 2-4 տոկոսի միջակայք: Վերը նշված տվյալներից երևում է, որ գնաճի մակարդակը ՀՀ-ում բարձրանում է, երբ ՀՀ դրամն արժեզրկվում է ռուսական ռուբլու նկատմամբ, և հակառակը:

- ՀՀ-ում առկա են ավելացված արժեքի հարկի և շրջանառության հարկի տոկոսադրույքների և հարկման մեխանիզմների առանձնահատկություններ: Դրանց վերլուծության հիման վրա բացահայտվել է, որ հարկատեսակների հարկման տոկոսադրույքները ազդեցություն են թողնում գնաճի մակարդակի վրա: Հիմնավորվել է, որ հարկման տարբեր համակարգերի առկայությունը սղաճի խթանման ներքին գործոն է: Գների բարձրացման պատճառներն առավել հստակ պատկերացնելու համար ուսումնասիրվել են տարբեր հարկատեսակներով հարկվող կազմակերպությունների միջև համագործակցության ընթացքում առաջացող գների փոփոխությունը և համեմատվել միևնույն հարկատեսակներով հարկվող կազմակերպությունների հետ:
- SWOT վերլուծության արդյունքում գնահատվել են ՀՀ ԿԲ գործունեության ուժեղ և թույլ կողմերը, ներկայացվել դրա առավելություններն ու թերությունները: Միաժամանակ, բացահայտվել և որպես թույլ կողմ են ներկայացվել արտարժույթի փոխարժեքի տատանումների ոչ լիարժեք և ճշգրիտ կանխատեսման հնարավորությունները: ՀՀ ԿԲ-ն շատ դեպքերում շրջանցել է ՀՀ դրամի արժեզրկման վտանգը, բայց վերջին տարիներին, այնուամենայնիվ, դա տեղի է ունեցել: Պատճառներից մեկն այն է, որ վերջին մի քանի տարիների ընթացքում ՀՀ համախառն միջազգային պահուստները մոտավորապես 31%-ով նվազել են (2430.6 միլիոն ԱՄՆ դոլարից մինչև 1663.1 միլիոն ԱՄՆ դոլար համաձայն ՀՀ ԱՎԾ տվյալների): Սա բացասական ազդեցություն է թողել ՀՀ-ում գների

մակարդակի բարձրացման և ՀՀ ԿԲ-ի կողմից գնաճի կարգավորման արդյունավետության մակարդակի վրա:

- Վերլուծվել և հիմնավորվել է ՀՀ ԿԲ-ի կողմից գնաճի նպատակադրման քաղաքականության անցման և սահմանաչափերի կիրառման նպատակահարմարությունը, ինչպես նաև բացահայտվել և ներկայացվել է գնաճի նպատակադրման քաղաքականության արդյունքները սեզոնային գնաճի կարգավորման նկատմամբ: Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունում սեզոնային գնաճը խոցում է հիմնականում գյուղատնտեսական մթերքներին, գծապատկերի օգնությամբ կառուցվել է գնաճի սեզոնային պատկերը: Հեղինակը նշել է, որ ՀՀ-ում գնաճի կանխատեսված մակարդակը կազմում է 4 տոկոս: Ներկայացված գծապատկերից պարզվել է, որ տարվա ընթացքում գյուղատնտեսական ապրանքների մասով գնաճը կարող է գերազանցել ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված գնաճի կանխատեսման մակարդակը հասնելով՝ տարեկան մինչև 19 տոկոսի:
- Հեղինակի կողմից փորձ է կատարվել մշակել և ներկայացնել գնաճի մակարդակի կարգավորման և ՀՀ ԿԲ համապատասխան քաղաքականության արդյունավետության քանակական և որակական գնահատման մոտեցում: Որակական գնահատական տալու համար պարզվել է թե առանձին տարիների կտրվածքով գնաճի ցուցանիշը համապատասխանել է արդյոք ՀՀ պետական բյուջեով սահմանված տվյալ տարվա համար առավելագույն և նվազագույն շեմերին: Հետազոտության արդյունքում պարզվել է, որ 2008թ.-ին արձանագրվել է ուսումնասիրվող ամբողջ ժամանակաշրջանում գնաճի ամենից բարձր մակարդակը՝ 9%, ինչի արդյունքում խախտվել է ՀՀ պետական բյուջեով սահմանված գնաճի շեմը 3.5%-ով, հետաքար տվյալ տարվա համար գնաճի մակրոտնտեսական կարգավորումը արդյունավետ է եղել ընդհամենը 37%-ով: Այս արդյունքը հաշվարկվել է դիտարկելով, որ սահմանված շեմից՝ 4%-ից շեղումը մինչև 1.5% համարվում է թույլատրելի,

հետևաբար այն 100% արդյունավետ է, իսկ 5.5%-10% ընկած միջակայքում արդյունավետության մակարդակը նվազում է: Նման պատկեր է արձանագրվել նաև 2010-2011 թթ. ընթացքում, երբ գրանցվել է գնաճի համապատասխանաբար 8.2% և 7.7% արժեք, որը սահմանված շեմը խախտել է 2.7%-ով և 2.2%-ով: 2014-2015թթ. ընթացքում ՀՀ ԿԲ-ի կողմից վարվող դրամավարկային քաղաքականության շնորհիվ հնարավոր է եղել ապահովել գնաճի ընդունելի մակարդակ համապատասխանաբար 3% և 3.7%, այդ պատճառով նշված ժամանակաշրջանում գնաճի մակրոտնտեսական կարգավորումը գնահատվում է արդյունավետ: Գնաճի ընդունելի սահմանաչափերից շեղում արձանագրած տարիների (2008, 2010, 2011, 2013թթ) ցուցանիշների ուսումնասիրության արդյունքում բացահայտվել է շեղման չափի նվազման միտում, ինչը վկայում է ՀՀ ԿԲ-ի կողմից վարվող դրամավարկային քաղաքականության արդյունավետության բարելավման մասին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ԵՎ

ՀԱՄՑԱՆՑԱՅԻՆ ԿԱՅՔԵՐ

1. «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-118, ընդունված է 1997 թ.:
2. «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները», կանոնակարգ 2, հաստատված է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39 Ն որոշմամբ:
3. «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններով», համաձայն «Արտարժույթային ռիսկի կառավարումը», 8-րդ գլուխ, ՀՀ ԿԲ խորհուրդ, 2008 թ., թիվ 71-Ն որոշում:
4. «Բնականոն գնաճի հաշվարկման մեթոդաբանությունը Հայաստանի Հանրապետությունում. արտաքսման և ճշգրտման եղանակ», վիճակագրության վարչություն, տնտեսական վիճակագրության զարգացման բաժին, Դիանա Աֆյան, ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջ, 2008, 62 էջ:
5. «Գները և գների ինդեքսները ՀՀ-ում, 1992-2002 թթ., ՀՀ ԱՎԾ, Երևան, 2003, էջ 65:
6. «Գները և գների ինդեքսները ՀՀ-ում», ՀՀ սոցիալ-տնտեսական իրավիճակը, վիճակագրական տեղեկատու, Ազգային վիճակագրական ծառայություն, վիճակագրական ժողովածու, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն:
7. «Դրամավարկային քաղաքականության նպատակը», www.cba.am
8. «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կանխատեսման և քաղաքականության վերլուծության համակարգը», ՀՀ ԿԲ, 2010:
9. «ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներ և դրանց կիրառման մեխանիզմներ» փաստաթղթին հավանություն տալու մասին որոշում, թիվ 246 Ա, 2011:
10. «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, օրենք ՀՕ 69, 1996:
11. «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքը, 1993:

12. «ՀՀ մաքսային օրենսգիրք» , ՀՕ 83, ուժի մեջ է 2001 թ.:
13. «ՀՀ սոցիալական պատկերը և աղքատությունը», 2001, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2002, էջ 35:
14. «Շահութահարկի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-155, 1998, հոդված 7:
15. «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-236-Ն, ընդունված է 2013 թ.:
16. «Ֆինանսական շուկաներ և ծառայություններ», հետազոտական խմբի ղեկավար՝ Ս.Ս. Սուքիասյան, «Ամբերդ» մատենաշար, Երևան, 2014, էջ 9:
17. Ա.Ա. Հովհաննիսյան, Ա. Ս. Գեդեոնյան, Փողը և դրամավարկային քաղաքականության հիմնահարցերը, ուսումնական ձեռնարկ, Երևան, ԵրՃՇՊՀ հրատ., 2009, 266 էջ:
18. Ա. Թավադյան, Դրամավարկային քաղաքականությունը տնտեսական անվտանգության տեսանկյունից, հոդված, «21-րդ դար», թիվ 6(64), 2015, էջ 80-89:
19. Ա. Մխիթարյան, Անցումային ժամանակաշրջանում բանկային համակարգի վերակառուցման անհարժեշտությունը և իրականացման փուլերը, Երևան, 1998, էջ 265:
20. Ապրանքների արտահանում և ներմուծում, արտաքին հատված, 2011, http://armstat.am/file/article/sv_12_10a_411.pdf
21. Բ. Ասատրյան, Բանկային գործ, Երևան, 2004, 717 էջ:
22. Տնտեսագիտության տեսություն, ուսումնական ձեռնարկ, Գ. Ե. Կիրակոսյանի, Ի. Ե. Խլիլյանի խմբագրությամբ, Երևան, «Տնտեսագետ», 2009, էջ 180:
23. Թ. Մանասերյան, Գնաճի ներքին և արտաքին ռիսկերը և դրանց կառավարման հեռանկարները, Ա. Լոքյան՝ գլխավոր խմբագիր, Պետական կառավարման արդյունավետության ապահովման հիմնախնդիրները ՀՀ-ում, միջբուհական գիտաժողովի նյութերի ժողովածու, մաս 1, գիտական հանդես, «Հանրային կառավարում», խմբագրական խորհրդի նախ. Վ.Սարգսյան, 2014, էջ 23-29:
24. Ժամանակագրական շարքեր, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, <http://armstat.am/am/?nid=126&id=10003>

25. Ժ. Մխիթարյան, Դրամավարկային քաղաքականությունը Հայաստանում՝ ծագումից մինչև մեր օրերը, ԵՊՀ ՈԻԳԸ գիտական հոդվածների ժողովածու, ԵՊՀ հիմնադրման 95-ամյակին նվիրված հոբելյանական գիտական նստաշրջանի նյութեր 1.7 (10), խմբ. խորհուրդ՝ Ա. Մկրտիչյան, Մ. Միքայելյան, Ս. Ղանթարջյան, Թ. Թորոսյան, Ա. Առաքելյան, Է. Հարությունյան, Ս. Զաքարյան, Հ. Ավանեսյան, Դ. Պետրոսյան, Մ. Հովսեփյան, Հ. Մնացականյան, Ն. Մելքոնյան, Ա. Խաչատրյան Հ. Հովհաննիսյան, Վ. Միքայելյան, Ն. Խաչատրյան, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2015, էջ 61-69:
26. Կապիտալի նախասկզբնական կուտակման, հարստության ու եկամուտների բևեռացման առանձնահատկությունները և կարգավորման հիմնախնդիրները ՀՀ անցումային տնտեսությունում, Երևան, 2011, 48 էջ:
27. Կենտրոնական բանկի տվյալների բազա, Դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքներ, www.cba.am
28. Մակրոտնտեսական կարգավորում, ուսումնական ձեռնարկ, Հ. Բ. Ղուշյանի խմբագրությամբ, գրախոս.՝ Ա.Հ.Արշակյան, «Տնտեսագետ», Երևան, 2005, 610 էջ:
29. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ ուսումնական գործարքների կնքման համար պարտատոմսերի սկզբնական մարժայի և շեմի հաշվարկման և հրապարակման մեթոդաբանություն:
30. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանը թվերով, 2016, 128 էջ:
31. ՀՀ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունը մինչ ֆինանսական ճգնաժամը և ներկայումս, www.e-gov.am
32. ՀՀ ԿԲ 2015-2017 թթ. ռազմավարություն:
33. ՀՀ ԿԲ կանխատեսման և քաղաքականության վերլուծության համակարգը, 2010, 121 էջ, <http://www.cba.am/>
34. ՀՀ ԿԲ մասին, Պատմություն, Հայաստանի ֆինանսաբանկային համակարգի զարգացումները, <https://www.cba.am>, 2014:

35. ՀՀ ԿԲ տարեկան տեղեկագիր, 2014, <http://www.cba.am/>
36. ՀՀ կենտրոնական բանկի ռազմավարությունը 2012-2014 թթ.,
<https://www.cba.am>
37. ՀՀ կենտրոնական բանկ, Գնաճի հաշվետվություն՝ հաստատված ՀՀ ԿԲ
խորհրդի 2017 թ. 46Ա որոշմամբ:
38. ՀՀ կենտրոնական բանկի կողմից գնաճի նպատակադրման
ռազմավարության ընդունման հիմնավորում, 2006, www.cba.am , ՀՀ ԿԲ
պաշտոնական կայքէջ:
39. ՀՀ մաքսային ծառայության տվյալների բազա:
40. ՀՀ միջազգային պահուստների վիճակը և կազմը, ամփոփ
տեղեկագիր, www.cba.am
41. ՀՀ Սահմանադրություն, հոդված 83.3, կետ 1:
42. ՀՀ սոցիալ-տնտեսական իրավիճակը, Վիճակագրական տեղեկատու,
Ազգային վիճակագրական ծառայություն, հունվար-դեկտեմբեր, Գները և
գների ինդեքսները ՀՀ-ում, Վիճակագրական ժողովածու, ՀՀ ազգային
վիճակագրական ծառայություն:
43. Մակրոտնտեսական վերլուծություն, մոդելավորում և կանխատեսում,
հետազոտական խմբի ղեկավար Ա.Ա.Թավադյան, խմբի անդամներ՝
Հ.Ս.Հովհաննիսյան, Տ.Հ. Հակոբյան, Վ. Թ.Նալչաջյան, Ա. Ա. Թևիկյան, Ն.Հ.
Ենգիբարյան, «Տնտեսագետ» հրատարակչություն, Երևան, 2014, 76 էջ:
44. Մենեջմենթ, դասագիրք բուհերի համար, Յու. Սուվարյանի ընդհանուր
խմբագրությամբ, Երևան, «Տնտեսագետ», 2002, էջ 105:
45. Սպառողական գների ինդեքսը (գները) Հայաստանի Հանրապետությունում,
վիճակագրական տեղեկագիր, www.armstat.am
46. Փողի ագրեգատների էությունը և կիրառման շրջանակները, <http://www.cba.am>
47. Զ. Ֆրիդման, Զ. Լաքստոն, Ինչու գնաճի նպատակադրում, ԱՄՀ, 2009, 459
էջ:

- 48.«Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2011 թվականի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում, համար 80-Ն, 2011:
- 49.А. И. Добрынин, Л.С.Тарасевич, Экономическая теория, изд. Питер, Санкт-Петербург, 2009, 559 с.
- 50.А. М. Лацев, Макроэкономика, Санкт-Петербург, издательский дом “Нева”, 2003, 191 с.
51. В. Кизилов, Гр. Сапов, Инфляция и её последствия / под ред. Е. Михайловской.М.: Центр «Панорама», 2006, 146 с.
- 52.Г. С. Вечканов, Экономическая теория, Санкт-Петербург, Питер, 2011, 512 с.
- 53.Д. Ю. Миропольский, Т. Г. Бродский, Макроэкономика: Рынок товаров и услуг, теория инфляции, государственное регулирование экономики. Изд. Питер, Санкт-Петербург, 2014, 368 с.
54. Е. Ф. Жуков, А. Б. Басс, Л. Т. Литвиненко, Рынок ценных бумаг: учебник, изд. Wolters Kluwer Russia, 2010, 637 с.
- 55.Информационно-торговая платформа,
Trader8www.k2kapital.com/quote/analytics/443978/
- 56.Л. Н. Красавина, Инфляция и экономический рост: теория и практика, редакция: Финансы, 2007, Москва, 284 с.
- 57.С.А. Дукарт, Е. В. Полицинская, Экономическая теория:
Макроэкономика/Томский политехнический университет, Томск, 2013, 136 с.
- 58.В. А Семенихина, Крючков С. А., Экономическая теория: макроэкономика: Учебное пособие. Новосибирск: НГАСУ, 2003. 87 с.
- 59.Семёнов В. П. Инфляция: метрика причин и следствий. — 1-е изд. — М.: Российская экономическая академия им. Г. В. Плеханова, 2005. — 383 с
60. Чепурин М. Н. , Курс экономической теории, Москва, 2003, стр. 550.
61. A. Blinder, Commentary, Federal Reserve Bank of St. Louis Review, May-June, 1997, A. Belke, T. Polleit, Monetary Economics in Globalised Financial Markets, Springer, 2009, 821 p.

62. A. Damodaran, Investment Valuation: Tools and Techniques for Determining the Value of any Asset, published by John Wiley and sons inc., 2012, 973 p.
63. A.K.Dutt, P. Skott, Keynesian Theory and the AD-AS Framework: A Reconsideration, Working Papers 2005-11, University of Massachusetts Amherst, Department of Economics. 2005, 567 p.
64. B.Eden, The Welfare Cost of Inflation and the Regulations of Money Substitutes, World Bank, 2016, 65p.
65. Bryan F., Cecchetti S., Measuring Core Inflation, Monetary Policy, J.Fuhrer, Y.K. Kodrzicki, Understanding inflation and the implications for monetary policy, Forwarded by P.A.Samuelson, Cambridge, MA London, England, 2009, 244 p.
66. C. Enoch, J. H. Gree, Banking Soundness and Monetary Policy, International monetary fund 2006, 283p
67. Cutler Joanne, Core Inflation in the UK, Bank of England External MPC Discussion Paper No 3, March, 2001, p. 130.
68. D. Besanko, R. R. Braeutigam 4th edition "Microeconomics", John Wiley and sons inc, 2010, p. 795.
69. D. James, The Cost of Living and Hidden Inflation, Macroeconomics, McGraw-Hill/Dushkin, 2003, 354 p.
70. D. Rutherford, Routledge Dictionary of Economics, Eckstein O., Core Inflation, Englewood Cliffs, London and New York, 2013, p. 354.
71. D.D.Hester, The Evolution of Monetary Policy and Banking in the US, Springer 2008, 204p
72. D.I. Steven M. Sheffrin, Economics: Principles in action, Upper Saddle River, New Jersey, 07458, 2003, p. 77.
73. Dragos, Capital and the Pitfall of State Intervention - Deflation and Inflation, publication: Books on demand GmbH, Norderstedt, 2009.
74. F. P. Bakker, Central bank Reserve Management, pub. Edward Elgar Publishing, Massachusetts, USA, 2007, 249 p.

75. Frisch H., Theories of Inflation, Cambridge Surveys of Economic Literature, Cambridge University Press, Cambridge, 1990, p. 189.
76. G. Tily, Keynes's General Theory, the Rate of Interest and Keynesian' Economics, published by Palgrave Macmillan, 2007, 345 p.
77. H. Bakshi, T. Yates, To trim or not to Trim, Bank of England, 1999 and Claus I., A Measure of Underlying Inflation in The United States, bank of Canada, WP 20, 2000, p. 385.
78. Inflation report, the Central Bank of the republic of Armenia, aproved under Board of the Central Bank resolution No.136A dated 2016.
79. J. Frankel, The Death of Inflation Targeting, Cambridge, 2012, p. 16.
80. J. M. Keynes, The General Theory of Employment, Interest and Money; John Maynard Keynes, Harcourt, Brace and Howe, The Economic Consequences of The Peace, 1920.
81. J. Rabin, G.L. Stevens, Handbook of Monetary Policy, New York 2004, 987p.
82. L. Mahadeva, P. Sinclair, How Monetary Policy Works, London and New York, 2005, p. 326.
83. M. Blaug, Classical Economics, The New Palgrave Dictionary of Economics, 1987, p. 120, v.1; "British Classical Economics", The New Palgrave Dictionary of Economics, 2nd Edition, 2008, p. 79, Samuel Hollander, Classical Economics, Oxford; Blackwell, 1987, p. 49.
84. M. Boughzala, D. Cobham, Inflation Targeting in MENA Countries: An Unfinished Journey, published by Palgrave Macmillan, 2011, 325 p.
85. M. Stone, The role of the Exchange Rate in Inflation-Targeting Emerging Economics, International monetary fund, Washington DC, 2009, p.99.
86. Measuring poverty in Armenia: Methodological explanations http://www.armstat.am/file/article/poverty_2010e_7.pdf
87. N. Gottfries, Macroeconomics, published by Palgrave Macmillan LLC, 2013, 538 p.

88. O.J. Blanchard, D. Quah, The Dynamic Effects of Aggregate Demand and Supply Disturbances, American Economic Review 79(4), 1989, E.J. Kontoghioghes, Optimisation, econometric and financial analysis, Springer, 2007, p. 227.
89. P. Donovan, The truth about inflation, Routledge, London and New York, 2015, 199 p.
90. P.A.Klein, Economics Confronts the Economy, UK, published by Edward Elgar publishing limited, 2006, 409 p.
91. Promoting Economic Opportunity & Prosperity: The 2016 Index of Economic Freedom/Heritage Foundation & The Wall Street Journal, 2016.
<http://www.heritage.org>
92. R. C. Free, 21st century Economics, SAGE publication, 2010, 993 p.
93. R.G.Lipsey, C.Harbury, First principles of economy, Oxford university press, New York, 2004, 533 p.
94. R.Jayaram, N.R.Kotwani, INDUSTRIAL ECONOMICS AND TELECOMMUNICATION REGULATIONS, PHI Learning, 2012, 291p
95. S.H. Ying, Economic Growth and Transition: Econometric Analysis of Lim's S-curve Hypothesis, 2010, 129 p.
96. Sebastian Edwards , The Relationship Between Exchange Rates and Inflation Targeting Revisited, Central Bank of Chile Working Papers, N 409, 2006, Sebastian Edwards, Eduardo Levy Yeyati , Flexible Exchange Rates as Shock Absorbers, European Economic Review 49, 2005, 551 p.
97. The Fortune Encyclopedia of Economics, edited by Handerson D., A Time Warner Company, 1993, p. 211.
98. The Fortune Encyclopedia of Economics, edited by Handerson D., A Time Warner Company, 1993, p. 235.
99. Thomas F. Cargill, Money, the financial system, and monetary policy, Prentice-Hall, 1991, 730p

100. U. Bindseil, Monetary policy: Operations and the Financial System, Oxford university press, 2014, 320 p.
101. US Department of Labour Bureau of Labour Statistics,
<http://stats.bls.gov/cpihome.htm>
102. W. J. Baumol, A. S. Blinder, Economics: principles and policy, 11th edition, South-western cengage learning, 2009, p. 815.
103. <http://bankir.ru/>
104. <http://cyberleninka.ru/>
105. <http://enc-dic.com/>
106. <http://k2kcapital.com/en/home/j>
107. <http://vocable.ru/>
108. <http://www.arlis.am/>
109. <http://www.armstat.am> [18],
110. <http://www.gumer.info/>
111. <http://www.gumfak.ru/>
112. <http://www.gutenberg.org>
113. [http://www.imf.org/\[82\],\[96\]](http://www.imf.org/[82],[96])
114. <http://www.investorwords.com/article/>
115. <http://www.klex.ru/>
116. <http://www.kursach.com/>
117. <http://www.lib.rin.ru/>
118. <http://www.minfin.am/>
119. <http://www.parliament.am/>
120. <http://www.society.polbu.ru/>
121. <http://www.worldbank.org/en/country/armenia>
122. <https://archive.org/>
123. <https://geographyofrussia.com>
124. <https://stats.bls.gov/>

- 125. <https://www.bls.gov/>
- 126. <https://www.cba.am>
- 127. <https://www.nkj.ru/>
- 128. <https://www.trefis.com/>
- 129. <https://www.wikipedia.org/>

